

Recs Sp

Recs Sp Fly

gtd - 2 - 2

p/s 1881

891.99

17 - 35

891.99
P-32
Կայսայ
ԲԱՅՅԻ

4.

320

ԴԱՆԻԹ ԲԷԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

«Խզեսցուք զկապանս նոցա,

«Եւ ընկեսցուք ի մէջ զլուծ նոցա»

2003

ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐԳ

ԹԻՓԼԻՍ

Կովկաս. փոխ. զլիս. կառավ. տպարանում:

1881

4300

44

320

ԴԱՆԻԹ ԲԷԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ
(1722—1728)

Доз. ценз. Тифлисъ, 15-го Мая 1881 г.

«Խղեցուր զկապանս նոցա,
«Եւ ընկեցուր ի մէնջ զլուծ նոցա»:
Սաղմոս

ԱՌՆՁԻՆ ԳԻՐԲ

Ա.

Մինչև 1722 թւականը, այսինքն մինչև Գա-
ւիթ-բէկի յայտնվելը, հայոց մէլիքները տակա-
ւին պահպանել էին իրանց նշանակութիւնը: Նը-
րանք ունէին սեպհական ամրոցներ, ժառանգա-
բար իշխում էին ժողովրդի մի որոշեալ մասի
վրա, կապում էին զաշխաղրութիւններ երբեմն
պարսից, երբեմն թիւրքաց ներկայացուցիչների
հետ, մասնակցում էին նրանց պաշարազմներին,
և որպէս մի տեսակ վասալական իշխաններ, մի

մասնաւոր հարկ էին վճարում այն պետութիւններին, որոնք փոփոխակի կերպով տիրում էին Հայաստանին:

Սիւնեաց աշխարհը (Ղարաբաղը) պէտք է առաջինը համարել, ուր մէլիքները մինչև ռուսաց տիրապետութեան ժամանակը (1813 աւ.) պահպանեցին իրանց գոյութիւնը: Այդ առանց պատճառի չէր: Երկրի բնական դիրքը՝ լեռները և անտառները նպաստում էին ժողովրդի մէջ վաղեմի քաջազնական ոգու պահպանւելուն: Սովորած լինելով թշնամու մշտական յարձակումներին, ժողովուրդը, երբ չէր կարողանում ընդդիմադրել նրան, թողնում էր դաշտերը կամ տափակ երկրները, պատասպարւում էր անմատչելի տեղերում: Լեռնային բնութիւնը ներշնչում էր բնակիչների մէջ արութիւն և հետևապէս ձգտումն դէպի ազատութիւն:

Յաւալին այն էր, որ հայոց մէլիքները մի ընդհանուր կապ չունէին միմեանց հետ: Շահերի տարբերութիւնը շատ անգամ առիթ էր տալիս նրանց մէջ թշնամական յարաբերութիւնների: Այս պատճառով նրանց ուժերը չէին միանում, որ կազմէին մի ամբողջութիւն և պատերազմէին հայրենիքի ընդհանուր թշնամու դէմ: Իւրաքանչիւրը իր գլուխն էր պահում: Եւ եթէ հարկը պահանջում էր, նրանցից ամեն մէկը պատրաստ էր միանալ թուրքերի կամ պարսիկների հետ և

ասոր ջոակել իր հարեան հայ մէլիքի երկրները:

Մէլիքներից ոմանք անկախ գրութիւն էին պահպանում, իսկ ոմանք ստորադրւած էին պարսից խաների իշխանութեան ներքոյ: Այս վերջինները իրանց դիրքը չը կորցնելու համար, ստիպւած էին խոնարհւիլ խաների բոլոր պահանջներին, թէև այդ պահանջները լինէին մեծ հայ ժողովրդին, ստիպւած էին կատարել նրանց կամքը, որքան և անիրաւ լինէր, ստիպւած էին դառնալ նրանց ձեռքում բոլորովին անարգ մի գործիք: Եւ որովհետև պարսից շահերը իրաւունք ունէին մէլիքներին փոխելու, այստեղից առաջ էր դալիս խիստ կեղտոտ մրցութիւն, որով մէլիքները միմեանց տեղը յափշտակելու մտքով, անձնատուր էին լինում, խաներին հաճոյանալու համար, ամեն տեսակ վատութիւնների, մատնութիւնների էին անում, կաշառւում էին նրանց ոչ միայն փողով, այլ ոմանք իրանց հարազատ ազգիկներն անգամ տալիս էին խանին: Բայց այսպիսիներին պէտք է բացառութիւն համարել:

Կային աւելի խղճմտաւոր և ազդեցութիւն ունեցող մէլիքներ, որոնք ծառայում էին որպէս ամուր պատուար հայ ժողովրդի և խանի մէջ: Հեռու էին պահում նրա անմիջական ազդեցութիւնը ժողովրդից և պահպանում էին նրան խանի հարստահարութիւններից: Մէլիքի ձեռքով էր հաւաքւում տուրքը և ամեն հարկեր, որ պէտք

էր վճարել խանին: Մէլիքն էր վճռում իր հող-
վրդի մէջ ամեն տեսակ դատեր և վէճեր: Եւ ո-
րովհետեւ նոյն իսկ խաները իրանց մէջ հաշտ
չէին, ստիպւած էին մէլիքների հետ լաւ վարվել,
հակառակ դէպքում, մէլիքը կարող էր թողնել
խանին և իր ժողովրդով անցնել նրա թշնամու՝
մի ուրիշ խանի կողմը:

Հայաստանի այն մասը, որ այժմ ուսուսաց պե-
տութեանն է պատկանում, ուսաների տիրելուց
առաջ, պարունակում էր իր մէջ զանազան մի-
մեանցից անկախ խանութիւններ, որոնցից նշա-
նաւոր էին՝ Ղարաբաղի, Գանձակի, Շամախու,
Նրեանի և Նախիջևանի խանութիւնները: Այդ
խանութիւնները գտնվելով անընդհատ թշնամա-
կան յարաբերութիւնների մէջ, կռիւք, կողոպու-
տք, արիւնհեղութիւնք, աւերմունքք երկրի մէջ
միշտ անպակաս էին լինում: Խանութիւնները
թէև պարսից պետութեան մի մասն էին կաղ-
մում, և խաները թէև նոյն պետութեան աւա-
տական իշխաններ էին համարւում, բայց շատ
անգամ օգուտ քաղելով Պարսկաստանի ներքին
խռովութիւններից, կամ շահերի ստէպստէպ փոխ-
վելուց, որից առաջ էր դալիս անիշխանութիւն,
— խաները այդ ժամանակ ապստամբւում էին, և
քիչ չէր պատահում, որ շահերը կամ նրանց զո-
րապետները տկարանային նուաճելու իրանց վա-
սալներին: Եւ այսպէս, ներքին ու արտաքին խը-

ռովութիւնները պահպանում էին իրանց անխղի-
ւի կապը:

Նթէ աւելացնենք դրանց վրա օսմանցիների
արշաւանքները, Կովկասի լեռնաբնակների յար-
ձակումները, կը տեսնենք, որ Հայաստանը այն
ժամանակ ներկայացնում էր մի սարսափելի պա-
տերազմական դաշտ, ուր առաւելապէս ծեծկլուղ,
փշրվող և մաշվող տարրը էր նոյն ազգը, որ մի
ժամանակ այդ երկրի տէրն էր: Եւ այդ կոտո-
րածների մէջ հայ ժողովուրդը և հայ մէլիքները
պէտք է պահպանէին իրանց գոյութիւնը...

Բ.

1722 թւին լեկզիների ահաղին բաղմութիւն,
խառն կովկասեան այլ լեռնաբնակների հետ,
արշաւանք գործեցին դէպի Աղուանից և Սիւնեաց
երկրները, և ասպատակելով Նուխու, Շամախու,
Գանձակայ գիւղերայքը, անցան մինչև Սևանայ
լիճը: Շամախու հայ իշխան Մուսա Բէգեանը
կամեցաւ արգելել վայրենիների յարձակումը,
բայց չը կարողանալով դէմ դնել նրանց ահաղին
բաղմութեանը, ընկաւ կռիւի դաշտում: Վայրե-
նիները յափշտակեցին բաղմութիւ գերիներ հայոց
աղջիկներից, պատանիներից և մանկահասակ կը-
նիւկներից, որպէս վաճառք, օտար երկրներում
ծախելու համար: Իսկ ծերունիների մեծ մասը
կոտորեցին: Տեղային մահմեդականները, օգուտ

քաղելով այդ խռովութիւններէց, իրանք էլ մի կողմից սկսեցին կողոպտել հայերին: Երկիրը սարսափի մէջ ընկաւ: Ազատվեցան նրանք միայն, որ թողեցին իրանց տունը, տեղը, կայքը և պատասխարվեցան լեռների, անտառների անմատչելի խորշերում: Այդ ժամանակ իր խումբերով վրա հասաւ Գուգարացոց (Մեծ Ալնախի) Յովհաննէս իշխանը, հաւաքեց ցրված հայերին, նրանց սիրտ և խրախոյս տուեց, և բաւական ուժ կազմելով, յարձակվեցաւ լեկզկների վրա: Թէև նրան յաջողվեցաւ մաքրել երկիրը այդ աւաղակներից, յետ խլել աւարի մի մասը և կրկին ժողովուրդը բռնակեցնել իր տեղում, այսուամենայնիւ, լեկզկները թողեցին Աղուանից և Սիւնեաց աշխարհներում բարբարոսութեան սարսափելի հետքեր:

Անցաւ տալինապը, անցաւ կոտորածը, ժողովուրդը մոռացաւ բոլորը: Կրկին սկսվեցաւ սովորական վշտալի կեանքը:

Բայց մի երիտասարդ չէր կարող մոռանալ այդ բոլոր գաղանային անգթութիւնները: Նա տեսնում էր այն գեղեցիկ երկիրը, ուր ահռելի ամբոյցների փլատակները, ուր հոյակապ վանքերի բեկորները, ուր պալատների փշրանքները, ուր ամեն մի լեռ, ամեն մի գետ յիշեցնում էին նրան հայ մարդու վաղեմի փառքը: Խսկ այժմ ինչ էր մնացել:—Մի սորուկ ժողովուրդ, որը, կարծես, յաւիտենական անէծքով դատապարտ-

ված, մի լաւ օր տեսնելու բախտ չունէր: Նրա վաստակը ձեռքից խլում էին, նրան ամեն կերպ տանջում էին. նա մինչև անգամ իր կնոջ, իր զաւակների տէրը չէր: Նա, տեսնում էր հայ իշխաններին, որոնց պարսիկները մէլիքներ էին կոչում, որոնց վրա էր դրված ժողովրդի հոգաբարձութիւնը, որոնք պէտք է սրբէին նրա արտասուքը և դարման տանէին խեղճ գիւղացու դառն ցաւերին: Բայց միմեանց հետ անհաշտ, անվերջ թշնամութիւններով, այդ իշխանները աւելի իրանք էին ծանրացնում ժողովրդի ստրկութեան լուծը: Մասնութիւնը, միմեանց դաւաճանելը, միմեանց վնասելը, նրանց ամենօրեայ դործն էր, իսկ մէջ տեղում ոչնչանում էր ողորմելի ժողովուրդը: Եւ եթէ կային նրանց մէջ այնպիսիները, որոնք ճշմարիտ սիրում էին ժողովուրդը, սիրում էին հայրենիքը և ցանկանում էին նրա թշուառ զրութեանը մի ճար անել, բայց ընդհանուր անկարգութեան, ընդհանուր ապականութեան մէջ նրանց եռանդը թուլանում էր, նրանց իղձը իրանց սրտում խեղդվում էր:

Երիտասարդը իր չորս կողմը տեսնում էր թէ հոգեկան և թէ բարոյական խորին դատարկութիւն: Նա աչք էր դարձնում դէպի Էջմիածինը, դէպի ընդհանուր հայոց Մայր Աթոռը, այնտեղ ևս մի և նոյն անկարգութիւններն էր նկատում,

—միաբանների մէջ երկպառակութիւն, կաշառք, մատնութիւն, դաւադրութիւն և ամեն ինչ, որ սուրբ չէ, որ անարգ է, որ զգուշելի է... Էջմիածինը այդ ժամանակ գտնվում էր օսմանցիների իշխանութեան ներքոյ: Համադանցի Աստուածատուր կաթողիկոսը, խոյս տալով Էջմիածնի խռովութիւններից, ծածուկ թափառում էր Աբարատայ գիւղերում: Էջմիածնի աթոռը մնացած էր թափուր, որ պատճառ էր տալիս աւելի սաստիկ խռովութիւնների: Ա. Պօլսի հայոց պատրիարքարանը այդ ժամանակ զբաղված էր «Փրանկների» (հայ կաթողիկոսների) խնդրով: Յովհաննէս «կօլոտ» (կարճահասակ) մականուանեալ պատրիարքը արգելում էր հայ-կաթողիկոսներին լուսաւորչականների եկեղեցիները յաճախել: Հայ-կաթողիկոսները դեռ առանձին եկեղեցի չունէին: Արօնական երկպառակութիւնները, Ա. Պօլսի ֆրանսիական դեսպանի և լատինական եպիսկոպոսի մէջ մի կողմից, իսկ հայոց պատրիարքի մէջ միւս կողմից, պահում էին մայրաքաղաքի հայ ժողովրդին անընդհատ կռիւների մէջ: Արքայազնի հայոց պատրիարքարանը զբաղված էր սուրբ Գալուստի տաճարով: Կռիւները յոյն և լատին արեղանների հետ վերջ չունէին: Այստեղ, Արարատեան նահանգում արիւն և արտասուք էր հոսում, իսկ այնտեղ զբաղված էին եկեղեցիներով...

Երիտասարդը իր շուրջը չէր գտնում ոչ մի միսթարական երևոյթ, բացի հայրենիքի լեռներից և անտառներից, որոնք, կարծես, խուլ կերպով ասում լինէին նրան. «Եկ, եկ, մեր գրկում քեզ համար լաւ տեղ կայ. բռնակալի ձեռքը այնտեղ մուտք չէ գործում»...

Ո՞վ էր այդ երիտասարդը, ո՞վ էր այդ ցնորամիտը, որ այն ժամանակվայ ընդհանուր խռովութիւնների, ընդհանուր բարբարոսութիւնների մէջ, մոռացած իր անձը, միայն հայրենիքի, միայն ժողովրդի վրա էր մոռածում:—Կա Գեւուռդի իշխան Ստեփաննոս Վարթանէսեանն էր Շահումեան տնից: Զրկված հայրենական ամբողջից, սիրտը լի վրէժինդութեան դառնութեամբ, նա իր երկու հաւատարիմ ծառաների հետ, ծրպտեալ կերպով թափառում էր Սիւնեաց աշխարհում: Նա մօտենում էր հայոց մէլիքներին, յորդորում էր նրանց միաբանվել և ընդհանուր ապստամբութեամբ թօթափել խաների ծանր լուծը: Բայց ամեն տեղ գտնում էր սառն անտարբերութիւն, անհոգութիւն և մինչև անգամ արհամարհանք: Բարկութիւնը, յուսահատութիւնը երիտասարդի մէջ հասնում էր սուկալի կատաղութեան, երբ տեսնում էր, որ հայերը չէին ցանկանում օգուտ քաղել մի ամենայարմար ժամանակից, երբ կարող էին ամեն գիւրութեամբ ազատվել պարսից բռնապետութիւնից:

Պարսից պետութիւնը այդ ժամանակ զան-
վում էր իր օրհասականի մէջ: Աւղանիստանի
Ղանդահար քաղաքից Միւրվէյիսի որդի Միր-
Մահմուդ-խանը, տիրելով Սպահան քաղաքին,
զահմելեց արեց պարսից Յիւսէյն շահին և ինքը
նստաւ նրա տեղը: Արեւելեան Պարսկաստանը
ընկաւ աւղանների իշխանութեան ներքոյ: Այդ
ժամանակ պարսից Հայաստանում համարեա
անիշխանութիւն էր տիրում: Թէև աթուղուրկ
Յիւսէյն շահի որդին, Շահ Թահմասը, լսելով
աւղանների յաղթութիւնը, Մաղանդարանում
թաղաւոր դարձաւ և եկաւ, նստեց Թաւրիզ քա-
ղաքում, բայց նա այն աստիճան թոյլ, արեւցող
և փոփոխամիտ մարդ էր, որ չուտով զգուցեց
իր զօրապետներին, բոլորը հեռացան նրանից,
և ինքը, շահ-Թահմասը, անօգնական մնալով,
դնաց Աստապատ և գաղտնի ապաստան գտաւ
Աստուածատուր անուանով մի հայ իշխանի տանը:
Երևանի նահանգին այդ ժամանակ տիրում էին
օսմանցիները: Նրանք աւելի ցանկանում էին
Հայաստանի այդ մասը հայ իշխանների ձեռքով
կառավարել և նրանցից մի որոշեալ տուրք ստա-
նալ, քան թէ պարսից խաների ձեռքը տալ:

Բոլոր հանգամանքները յաջողութիւն էին խոս-
տանում: Պարսից և թիւրքաց արքունիքները
սարսափելի խուճովութեան մէջ էին: Շահերի և
սուլթանների զահերը, խաղաղնդակների նման,

անդադար մի ձեռքից միւս ձեռք էին անցնում:
Պարսկաստանի և Թիւրքիայի մէջ ամեն օր ծա-
ղում էին նոր ապստամբութիւններ, ամեն օր
կաղմվում էին նոր, անկախ իշխանութիւններ:
Միայն հայերը անշարժ էին, միայն հայերը
իրանց ազատութեան վրա չէին մտածում: Այդ
սաստիկ խոցում էր Շահումեան իշխանների
վերջին ժառանգի՝ Ստեփաննոսի սիրտը: Ի՞նչ
պէտք էր արած: Բոլոր ժողովուրդներից աւելի
տանջված, աւելի հարստահարված, աւելի թշուառ-
ազգը, հայը, ոչինչ չէր զգում: Կարծես, հան-
գիստ, ապահով և վայելուչ կեանքի փափագը
մեռած լինէր նրա մէջ:

Երկուստարդ իշխանը այդ կարծիքի հետ բոլո-
րովին համաձայն չէր: Ժողովուրդը հոգեպէս և
բարոյապէս բոլորովին մեռած չէր: Նրա սրտում
դեռ մնացել էին հարուստ, կենդանի տարրեր,
միայն պէտք էր ջերմացնել նրանց, պէտք էր
բորբոքել, ուժ տալ, և ահա մի և նոյն ստրկա-
ցած ժողովուրդը ոտքի կը կանգնէր հսկայի
անձնաւստահութեամբ: Ստեփաննոսը գիտէր
այդ բոլորը: Նա հաւատում էր հայի տոկունու-
թեանը: Նա գիտէր, հայը որքան համբերող է,
որքան տանող է բռնութեան լծի ծանրութեանը,
այնքան չուտով պատրաստ է թօթափել այդ
լուծը, եթէ հանգամանքները կը նպաստէին:
Միայն հայը զգոյշ է, հեռատես է, խորհող է,

բայց շուտ վճռող չէ, և դրա մէջն է կայանում նրա բոլոր դանդաղկոտութիւնը: Զգուշութիւնը նրա մէջ յանցաւոր երկչոտութեան կերպարանք է ստացել: Նա երբեք չի սկսի մի գործ, եթէ հաւատացած չէ, թէ յաջողութիւնը իր կողմը կը լինի: Ուր մի փոքր անզգուշութիւն, մի փոքր զոհողութիւն, մի փոքր խենթութիւնն անգամ կաբող էր մեծ գործ կատարել, — այնտեղ հայը խնայող է և խելացի: Նա միշտ իրան հեռու է պահում անմիտ բաղտախնդրութեան ցնորքներից, և այդ, Ստեփաննոսի կարծիքով, վատ էր: Նրա թէօրիան շատ պարզ էր. «կամ մեռնել, կամ լաւ ապրել»: Ճնշված, հարստահարված, անապահով կեանքը նրան տանելի չէր:

Ստեփաննոսը մի ուրիշ բան ևս գիտէր: Նա գիտէր, որ հայ ժողովուրդը ~~կոտորվելու էր~~ ~~ուխտարային քնատորութիւնում~~ մէկը պէտք է առջևից դնայ, որ միւսները հետեւեն նրան: Բայց ով կաջող էր լինել այդ «մէկը»: Ո՞վ կարող էր առաջնորդել ամբոխին: Նա դիմեց բոլոր հայ իշխաններին, բոլոր հայ մէլիքներին և ամենից սառն ընդունելութիւն գտաւ: Նա չէր ձանաչում ժողովրդի այդ գլխաւորներից և ոչ մէկին, որ համակրէր իր մտքերին: Իսկ ինքը, — Խնքը, որ համակրէր էր անել: Ժողովուրդը հեղինակութիւն էր պահանջում: Ժողովրդի վրա ազդելու, նրան շարժելու համար պէտք էր փոքր ի շատէ:

Նշանաւոր մարդ լինել: Թէև ինքն էլ նշանաւոր մարդերի կարգից դուրս չէր, բայց ինչ կարող էր անել մի փառազուրկ իշխան, որի հայրենական ժառանգութիւնից մնացել էին՝ մի ձի և մի ձեռք զէնքեր միայն: Գենուազի ամբողջ գաւառը, որ նրա հօրերին էր պատկանում, այժմ զարծել էր մի խանի սեպհականութիւն: Իսկ ինքը անտուն, անտեղ, անօթեան թափառում էր երկրից երկիր, որպէս մի արկածախնդիր ասպետ, որին իջևան էին տալիս միայն այն պատճառով, որ նրանից վախենում էին: Այս մտածութիւնների մէջ խորասուզված, երիտասարդը քչում էր իր ձին Ներքին Ագուլիսից դէպի Օրդուբաթ տանող ճանապարհով, և այնքան զբաղված էր իր մտքերով, որ կարծես, չէր նկատում անձրևի տարափը, որ մանր, փոշիանման կաթիլներով մազվում էր նրա վրա: Երեկոյեան խաւարը դեռ այնքան չէր թանձրացել, որ գծուար լինէր առարկաները որոշել: Առջևում երևում էր խիտ այգիների մէջ թաքնված Օրդուբաթը: Փոքր ինչ հեռու Արաքսը մի արծաթեայ ժապաւէնի նման ոլորվում էր ձորի միջով: Գետի մըւս ափի վրա Քամ-քուհ լեռան բարձր գագաթը կիսով չափ ծածկված էր մթին ամպերի մէջ: Կայծակը շեշտակի կերպով ճեղքեց այդ ամպերը և նրան հետևեցին սաստիկ որոտ և զղրդիւն: Կարծես, ամբողջ երկինքը թափ տուեցին և

անձրերը միանգամից սկսեց հեղեղի նման թափ-
վել: Այդ ժամանակ միայն երիտասարդը արթ-
նացաւ. իր մտայուղութիւնից, քարշեց ձիու սան-
ձը, ձին կանգնեց, և նա սկսեց բաց անել իր
վերարկուն, որ կապած էր երիվարի դաւակի
վրա: Նա խնամքով փաթաթվեցաւ վերարկուի
մէջ, ոչ այնքան իր մարմինն հոգ տանելու հա-
մար, որքան իր դէնքերը թրջվեցուց պահպանե-
լու համար: Այդ միջոցին հասան նրա երկու
ուղեկիցները, որ բաւական յետ էին մնացել:
Երիտասարդը դարձաւ դէպի նրանցից մէկը,
ասելով.

— Զումշուդ, դու գիտեմ քաղաքի որ փողո-
ցումն է այն հրէայի տունը:

— Գիտեմ, պատասխանեց Զումշուդը:

— Գէ, առաջ քշիր, մեզ տար ուղիղ դէպի այն
կողմը:

Զումշուդը իր ձին առաջ քշեց, երիտասարդ
իշխանը հետեւում էր նրան: Ետեից գալիս էր իշ-
խանի միւս ծառան՝ Աղասին:

Քամին հետզհետէ սաստկանում էր և մրրիկը
աւելի սպառնալի կերպարանք էր ընդունում:
Գիւղացիները սարսափով քշում էին իրանց ա-
նասունները դաշտից դէպի տուն: Լեռներից լսելի
էին լինում հովիւների խառն աղաղակները:
Սաստիկ անձրևների ժամանակ հեղեղը այդ կող-
մերում սոսկալի էր. նա տանում էր իր հետ ոչ

միայն մարդիկ և անասուններ, այլ անաղին քա-
րաժայռեր, որ պոկում էր սարերի կուրծքից:

Բոլորովին մութն էր, երբ իշխանը մտաւ Օր-
դուբաթ քաղաքը: Փողոցներում ոչ ոք չէր երե-
ւում: Բոլոր դռները կողպած էին: Անձրեւ,
թէև փոքր ինչ մեղմացած, բայց տակաւին մաղ-
վում էր: Անցնելով մահմեդականների թաղերը,
նրանք մտան հայերի թաղը: Այստեղ բնակվում
էին հրէաները մի առանձին փողոցում: Զում-
շուդը իր ձին կանգնեցրեց աներից մէկի դռն
հանդէպ, ցած իջաւ ձիուց և սկսեց դուռը բաղ-
խել: Երկար բաղխում էր նա, իսկ բաց անող
չը կար: Գիշերային այն տարաժամ պահուն
հրէան հեշտութեամբ իր դուռը չէր բաց անի
օտարականի առջև: Կարծում էին, թէ ներսում
մարդ չը կար: Բայց դռնն ձեղքերից ճրագի
լոյս էր երևում:

— Կոտրեմ, հարցրեց Զումշուդը:

— Զէ, ասաց իշխանը, — կարելի է բաց անեն,
բաղխեցէք:

Ներսից լսելի էին լինում ոտքի ձայներ և
մարդկային երկչոտ շնչոց:

— Նս այս բոպէում բաց կանեմ, ասաց Աղա-
սին, իր ձին մօտեցնելով տան պատին և կանգ-
նելով ձիւ թամբի վրա: Պատը շատ բարձր չէր.
ճարպիկ երիտասարդը ձեռքերով չանկուեց պատի
անհարթ մակերևոյթը և կատուի արագութեամբ

թուաւ կտուրի վրա: Մի բոսկից յետոյ բակից լսելի եղաւ նրա ձայնը, որ վիճում էր տան տիրոջ հետ, պահանջելով դռան բանալին:

— Է՛յ... վայ... մի սպանիր... լսելի եղաւ հրէայի դռուն հառաչանքը: Երևում էր, նա մի քանի ապտակ կերաւ Աղասու ձեռքից:

Գուռը բացվեցաւ. չէմքի վրա յայտնվեցաւ հրէան ճրագը ձեռին: Նա անդադար միւս ձեռքը քսում էր իր երեսին, կարծելով, թէ Աղասու մատները դեռ կպած էին այնտեղ: Նա ինքն իրան մըթմըթում էր:

— Չի էլ ասում, որ աղան է գալիս... աղայի առջև ո՞վ կը փակէ իր դուռը... իմ տունը աղայի տունն է... անիծված... ախ, ինչ ծանր ձեռք ունի...

— Նս քեզ հաղար անդամ ասեցի, պատասխանեց Աղասին, — բայց դու էլի չէիր ուզում բաց անել:

— Լաւ է, լաւ, խօսեց իշխանը վէր գալով ձիուց, — Հարունը լաւ մարդ է, նրան պէտք չէ ծեծել:

— Հա, այդպէս, քո հոգուն մատաղ, պատասխանեց հրէան, և դառնալով դէպի Աղասին էլի կրկնեց. — Ախ, ինչ ծանր ձեռք ունի այդ անիծվածը...


Հրէան ծեծը ուտելուց յետոյ փափկացել, մոմ էր դարձել. նա ամեն կողմ ծալվում էր, զործ

գնելով շողոքորթութեան բոլոր ձևերը: Նա մի քանի բոսկէի մէջ ձիերը տեղաւորեց իր տան բակում և հիւրերին հրաւիրեց մի և նոյն սենեակում, ուր ինքը իր կնոջ հետ ապրում էր:

Գ.

Հարունը Օրդուբաթի հրէայ ոսկերիչների մէջ միակ վարպետն էր, որ բացի ոսկերչութիւնից գիտէր և կնիքներ փորագրելու արհեստը: Նա բաւական հարուստ էր, ինչպէս ամեն մի հրէայ, որ գոհարների և թանկագին մետաղների հետ զործ ունի: Իշխանի անակնկալ այցելութիւնը, որի անունը միայն լսած էր, իսկ անձամբ չէր ճանաչում, սատիկ վախեցրեց նրան: Ո՞ր սատանան բերեց այդ թափառաշրջիկ ասպետին իր տունը, այն ևս գիշերը, երբ հարեանները բոլորը քնած էին: Ի՞նչ էր ուզում նա: Ինչ էլ որ լինէր, հրէան համոզված էր, որ մի բարի բան նրանից սպասել չէր կարելի:

Խրճիթը, ուր ներս տարաւ Հարունը իր հիւրերին, բաղկացած էր երկու փոքրիկ սենեակներից, որոնցից մէկը ծառայում էր որպէս մթերանոց և բովանդակում էր իր մէջ նրա անտեսութեան բոլոր պարագայքը, անկարգ, խառնիխառն կերպով ածված միմեանց վրա, — իսկ միւսը նրա քնարանը, հիւրանոցը, խոհանոցը, մի խօսքով, ամեն ինչն էր:



— Բարով, հազար բարով, իմ աչքիս վրա, իմ գլխիս վրա, համեցէք, նստեցէք, ասաց հրէան խնդրելով նստել։

Ջուճշուղը և Աղասին մնացին ոտքի վրա, իսկ նրանց տէրը աչք ածեց իր շուրջը մի յարմար տեղ չը գտաւ նստելու համար։ Սենեակի յատակը բաւական ցած լինելով բակի յատակից, անձրեւի ջուրը դռան շէմքից ներս էր թափվել և լճացել էր սենեակի մէջ։ Միակ տեղը, որ իր բարձրութեամբ ազատ էր մնացել այդ ջրհեղեղից, էր տան տիկնոջ սնդուկը, որ նա բերել էր որպէս օժիտ իր հօր տնից։ Նրա վրա նստեց իշխանը։ Ջուճշուղը և Աղասին դուրս գնացին, երբ նկատեցին, որ այլ ևս իրանց տիրոջը պէտք չէր։ Անձրեւը դադարել էր։ Գարնանային երկինքը այժմ պարզ էր հայելու նման։ Աստղերը ժպտում էին։ Փոթորիկը անցել էր, ինչպէս մի քմահաճ երեխայ, որ յանկարծ բարկանում է, աղմուկ, արտասուք և աղաղակ է բարձրացնում, և քանի ըստէից յետոյ կրկին հանգստանում է, սկսում է ծիծաղել։

Ջուճշուղը և Աղասին գնացին ձիաների մօտ, որ կապած էին բակում։ Նրանցից մէկը բարձրացաւ հարեանի կոտրի վրա, ուր խոտ էր դիպած, մի քանի խորձ գողացաւ, բերեց, ցրվեց ձիաների առջև։ Յետոյ երկուսն էլ նստեցին հաւաքունի վրա, սկսեցին ծխել։

Իշխանը դեռ նստած էր սնդուկի վրա։ Հարուներ նրանից փոքր ինչ հեռու պըպըղել էր, մէջքը տալով պատին և չը համարձակվելով նստել, որովհետեւ գետինը թաց էր։ Տան տիկինը այդ միջոցին մի խեցեղէն ամանով սենեակում լճացած ջուրը հաւաքում էր և դուրս էր թափում։ Երկու երեխայ, միմեանց զրկած, պառկած էին ցեխի մէջ և ոչինչ չէին զրուս։ Նրանց մայրը իր աշխատութիւնը մասամբ վերջացրել էր այժմ։ սենեակում այլ ևս ջուր չը կար, միայն ռաստիկ ցեխ էր. պէտք էր չորացնել նրան։ Նա բոլրիկ ոտներով, մերկ սրունքներով, ներքին հագուստը մինչև ծնկները վեր քաշած, ցեխը կոխ տալով, դուրս գնաց։ Մի բոպէից յետոյ նա վերադարձաւ, բերելով իր հետ, գոգնոցի մէջ ածած, ցամաք մոխիր, և սկսեց սփռել յատակի վրա։ Այդ գործողութիւնը մի քանի անգամ կատարելով, յատակի վրա գոյացաւ մոխրի բաւական թանձր խաւ, որ ծծեց իր մէջ գետնի խոնավութիւնը։ Յետոյ տան տիկինը տարածեց նրա վրա մի փախթ և փախթի վրա մի կապերտ։ Հիւրի օթոցը արդէն պատրաստ էր։ Չը նայելով այս բոլոր աշխատութիւններին, իշխանը չը կամեցաւ իջնել իր սնդուկից, ասելով, որ այնտեղ էլ լաւ է։ Կապերտի վրա նստեց Հարուներ։ Այնը դեռ պտոյտ էր դալիս այս կողմ և այն կողմ, ինքն էլ չիմանալով, թէ ինչ պէտք է անել։ Ամենապիտաւոր

հոգսը, որ մնացել էր նրան, այն էր, որ պէտք էր ոտները լուանալ: Բայց այդ մասին չը մտածեց նա: Միայն հազուադէպ ներքի փեշերը ցած թողեց, մերկ սրունքները ծածկվեցան, և այնպէս ցեխոտ ոտներով մտնեցաւ, նստեց իր երեխաների մօտ, որոնցից մէկը պառկած տեղից գլուխը վեր բարձրացնելով, սկսեց լալ: Մայրը նրան հանգըստացնելու համար մի սատարիկ ապտակ տուեց երեսին: Երեխան աւելի ևս խտտացրեց աղաղակը: Նրա ձայնից միւսն էլ զարթնեց, և առանց գիտնալու պատահածը, սկսեց ձայնակցել իր եղբորը:

— Նրան էլ, նրան էլ... ասաց հայրը:

Մայրը միւսին էլ իրատեց իր ապտակով:

Իշխանը տհաճութեամբ սպասում էր, որ երեխաները իրանց ձայնը կտրեն, որ կարողանայ խօսել տան տիրոջ հետ: Այդ միջոցին մայրը գլուխը խոնարհեցրեց, յայտնի չէ, ինչ փախաց երեխաների ակամջին, երկուսն էլ իսկոյն լռեցին: Նրանք, իրանց երկչոտ աչքերը լայն բացելով, նայեցին օտարական հիւրի երեսին և սատանայի նման մտան վերմակի տակը, կրկին պառկեցին:

— Եւ քեզ մօտ գործով եմ եկել, Հարուն, խօսեց իշխանը:

— Տապանակ ուխտին թող ինձ կուրացնէ, եթէ սուտ եմ ասում:— մի սև փող էլ չունեմ, պա-

տասխանեց հրէան, կարծելով, թէ եկել է փող խնդրելու:

— Եւ եմ բերել փող քեզ տալու համար, իշխանը կտրեց նրա խօսքը:

Հարունի կնճռած դէմքը պարզվեցաւ. նրա աչքերում փայլեց մի տեսակ լոյս, որ կարելի է տեսնել քաղցած դայի աչքերում միայն:

— Ինձ պէտք են մի քանի կնիքներ, Հարուն, և դրա համար եւ քեզ առատ կը վարձատրեմ:

— Հարունը ձեռք ծառան է, աղայ, Հարունը միթէ փող կառնէ աղայից կնիքներ չինելու համար, պատասխանեց հրէան. կեղծ բարեմտութեամբ:

— Կնիքներ օտար մարդկանց անունով:— Հասկանում ես...

— Հասկանում եմ... կրկնեց հրէան խորհրդաւոր ձայնով:— Բայց թող չը նեղանայ աղան, Հարունը իր մատները կը կտրի ու այգսկիսի բան չի չինի:

— Իւրաքանչիւր կնիքի համար կը տոանաւ հինգ ոսկի:

Հրէան բացատրական կերպով գլուխը շարժեց:

— Տասը ոսկի, աւելացրեց իշխանը:

Նա զարձեալ գլուխը շարժեց:

— Տասն և հինգ ոսկի:

— Անկարելի է, աղա, փողի համար չէ իմ խօսքը, ինչքան էլ կուղէք, աւելացրէք: Եթէ կարելի

լինելը, ես ձեռքանից ոչինչ չէի առնի, և ինչպէս
ասեցի, առանց փողի կը շինէի: Այն էլ բաւական
էր, որ աղան քաղցր աչքով կը նայէր ինձ վրա:

Յետոյ նա սկսեց երկար ու բարակ պատմել,
թէ ինքը ուխտ է գրել՝ երբէք կեղծ կնիքներ չը
շինել: Թէ միանգամ սատանան մուրեցրեց նրան
և մի այսպիսի մեղք գործեց. այն օրից իր գոր-
ծերը չեն յաջողւում, երեւի, Աստուած քարկացաւ
նրա վրա, և նրա խարդախութիւնը յայտնուեցաւ:
Դատաւորը քիչ էր մնում, որ նրա ձեռքը պիտի
կտրել տար: Ատիպալեցաւ ահազին կաշառք տալ
և ձեռքի փոխարէն կտրեցին մօրուքը: Այդ էլ
մի հրէայի համար շատ մեղք բան է: Մովսէսը
հրամայել է մօրուքը չը խուզել: Եւ դրա համար
հրէաները առանձին հարկ են վճարում պարսից
խաներին, որ թոյլ տան նրանց մօրուք կրելու:
Թէ ինքը առաջ շատ երկայն մօրուք ունէր, բայց
այն օրից, որ խուզեցին, կարճացաւ:

— Ես հիմայ կերկարացնեմ քո մօրուքը, ասաց
իշխանը փոքր ինչ խռովեալ ձայնով:

— Ինչպէս:

— Ահա այսպէս...

Իշխանը բռնեց նրա մօրուքից, որ շատ էլ
կարճ չէր, սկսեց սաստիկ թափ տալ: Հրէայի
զուլսը զարկվեցաւ պատին. նա դռեց.

— Վայ, վայ... կը շինեմ, թող տաւր...

Կինը այս տեսնելով, ճիշ բարձրացրեց և վա-

զեց աղատելու իր այրիկը: Իշխանը թողեց մօ-
րուքը: Հրէան, որի զուլսը պատին զարկվելով,
ուշաթափ էր եղած, կրկին զգաստացաւ, և դեռ
աչքերը չը բացած, ասաց.

— Այլ չինեմ, բայց քսան ոսկուց պակաս չեմ
առնի:

— Անպիտան, դու խօ առաջ փող չէի պա-
հանջում, ասաց իշխանը ծիծաղելով:

— Ապա մօրուքս որ այսքան քաշեցիք, դա
ոչինչ չարժի, պատասխանեց հրէան ինքն էլ ծի-
ծաղելով:

Իշխանը զարմացաւ անամօթութեան վրա:

— Ախար ձեր ծառան էլ ապտակ տուեց, աւե-
լացրեց նա,— ան, որքան ծանր է անիծվածի
ձեռքը...

Հարուճը այնպէս էր խօսում այդ բոլորի վրա,
կարծես, նա շատ կը վիրաւորուէր, եթէ նրան չը
ծեծէին: Ոսկիները նրան մոռանալ էին տուել
մարմնի ցաւերը: Նա խնդրեց իշխանից ցոյց տալ,
թէ ինչ անուշներով և ինչ տեսակ կնիքներ է
կամենում:

Իշխանը հանեց իր ծոցից թղթերի մի մեծ
կապոց, որոնց վրա զրոյմված էին քառասունի
չափ կնիքներ զանազան ձևերով և զանազան
տառերով: Նրանց մէջ կային եպիսկոպոսների,
քահանաների, իշխանների, մէլիքների և տանու-

տէրներն կնիքներ, հայերէն կամ պարսկերէն տառերով:

— Դրանցից մի քանիսը իմ ձեռագործն է, ասաց վարպետը ակնոյցները քնթի ծայրի վրա դնելով, և ուշի-ուշով քննելով կնիքները, — բայց սատանայի աշխատութիւնն պէտք է այս բոլորին ճշտութեամբ նմանեցնելու համար:

— Մի և նոյն ժամանակ նա իր մտքում հաշուեց այն խոշոր գումարը, որ պիտի ստանար քառասուն կնիք փորագրելու համար, և սրտի հրճուանքը թագցնելով, հարցրեց.

— Թող իմ տէրը չը բարկանայ համարձակութեանս վրա, փողերը երբ կարող եմ ստանալ:

— Կէսը այս բողբէս, իսկ միւս կէսը՝ երբ աշխատութիւնը կը վերջանայ:

Հրէան առանց հարցնելու թէ ինչ նպատակով է իշխանը փորագրել տալիս այդ կնիքները, սկսեց բացատրել այն բոլոր վտանգները, այն բոլոր աշխատութիւնները, որ ինքը յանձն է առնում իշխանի պատուէրը կատարելու համար: Նա ասաց, թէ ինքը ստիպւած կը լինի մի ամբողջ ամիս իր խանութը կողպել և տանը աշխատել, որովհետեւ այսպիսի աշխատութիւնը բազարում, հրապարակաւ չեն կատարում: Եւ այդ ժամանակ նա իրան կը ձևացնէ իբրեւ հիւանդ, տանը պառկած: Բայց որքան վնաս կը կրէ, երբ մի ամբողջ ամիս, դուցէ աւելի, նրա խանութը

կողպած կը լինի: Այդ ժամանակ նրա ոսկերչութեան առևտուրը պիտի դադարի: Բայց այդ բոլոր զոհողութիւնները յանձն է առնում Հարունը միմիայն թողալի սիրտը չահելու համար, միմիայն աղային մի «լաւութիւն» անելու համար:

— Շնորհակալ եմ, պատասխանեց իշխանը, — բայց եթէ դու կը համարձակվիս այդ գաղտնիքը երևան հանել, զիտցած եղիլ, որ քեզ, այդ կնոջը և այն երկու երեխաներիդ անպատճառ կը մտրվեմ:

— Այդ եւս զիտեմ... պատասխանեց հրէան խորհրդաւոր ձայնով:

Սակարկութիւնը վերջացաւ: Իշխանը յանձնեց կնիքների օրինակները և այն գումարը, որ կանխիկ պիտի վճարէր: Քայլուէն ոսկիները բոլորովին չլացրին Հարունի և նրա կնոջ աչքերը, որը դեռ նստած երեխաների մօտ, լուռ լուռ էր իր ամուսնի և պատուելի հիւրի խօսակցութիւնը:

Այդ ոսկիները իշխանը այն օր պարտքով էր վեր առել մի աղուէցի հարուստ վաճառականից, այն պայմանով, երբ կունենայ, այն ժամանակ կը վճարէ: Բայց իշխանի որ և իցէ ժամանակ փող ունենալը չատ կատկածաւոր լինելով, վաճառականը սկզբում չը յօժարվեցաւ տալ: Բայց երբ իշխանը բռնեց նրա կողորդից և սպառնացաւ զլուսը կտրել, ժխտը իսկոյն բաց արեց

քաակի բերանը: Հարունը լսելով այդ պատմութիւնը, ծիծաղելով բացականչեց.

— Ա՛յ, լաւ բան էք արել, Աստուած է վկայ, շատ լաւ բան է:

— Բայց եթէ մի այսպիսի լաւ բան քեզ հետ անէին, դու, կարծեմ, շատ դո՛հ չէիր լինի:

— Օրհնած, ինձ մօտ ի՞նչ է մնացել. մի քանի շահի ունէի, բոլորը կորցրի, ում տուեցի, չը կարողացայ յետ առնել. տոկոսն էլ գլխի հետ կերան: Թո՛ղ հառամ լինի, հառամ...

Հրէան շարունակեց դանդաղով իր դրութեան վրա, թէ հազիւ է կարողանում ծայրը ծայրին կպցնել. ժամանակը վատ է, ամեն ինչ թանկ է: Այդ երեխաները նրան խալառ կողորպտեցին, ուտում են, ուտում և երբէք չեն կշտանում: Այդ պատճառով շատ փօշմանել է իր ամուսնանալու վրա, բայց ինքը մեղ չունի, ամենակին միտք չունէր պսակվելու: Անիծովին հարեանները, հաւաքվեցան զօռով պսակեցին, և ինքը ընկաւ կրակ—ցաւի մէջ...

Վերջին խօսքերը սաստիկ վիրաւորեցին կնոջ սիրտը, և նա մոռանալով իր արեւելեան ամօթ-խածութիւնը, թէ անվայել էր օտարների հետ կամ օտարների մօտ խօսել, — շառաղունած գէմքով դարձաւ գէպի իշխանը, և կատաղութեամբ ասաց.

— Սո՛ւտ է խօսում, չան նման սուտ է խօ-

սում... Ես գիտեմ, թէ սրտեղ են նրա փողերը...

Յետոյ նա սկսեց լաց լինել և արտասուքը աչքերում պատմել, թէ ամբողջ օրերով մնում է տանը քաղցած, երբ ամուսինը խանութից վերադառնում է, հարցնում է, թէ ի՞նչու հաց չը բերեցիր, նա միշտ պատասխանում է՝ «մոռացայ»: Եւ երբ ինքը շատ է խօսում, նա սկսում է ծեծել:

— Սո՛ւտ կաց, Յսթեր, քեզ ասում եմ՝ սո՛ւտ կաց, անդադար կրկնում էր բարկացած ամուսինը:

— Չէ, սուտ չեմ կենայ, դու իմ այս տեղը հասցրիր, և նա մատը դրեց իր կոկորդի վրա:

— Սուտ է խօսում, աղայ, ես նրան երբէք չեմ ծեծել. թող Աստուած իմ ձեռքը չորացնէ, եթէ միանգամ գոնէ նրան ծեծած լինիմ:

— Չեն ծեծել, հէնց այսօր ծեծեցիր: Հիմա ցոյց կը տամ... ասաց կինը սպառնալից գէմքով, և բոլորովին մոռանալով իրան, մօտեցաւ քով, և բոլորովին մոռանալով իրան, մօտեցաւ իշխանին: Նա գլուխը թեքեց, ցոյց տուեց իր գեղեցիկ երեսը, որի վրա երևում էին մի քանի կապոյտ նշաններ: Յետոյ նա շտապով բաց արեց շապկի օձիքը, մերկացրեց իր թիկունքը, այնտեղ ևս կային մի քանի կապոյտ նշաններ: Իշխանը բոլորովին հիացաւ, տեսնելով այդ հարուստ, սքանչելի մարմինը կեղտոտ ցնցոտիների մէջ:

Բայց Հարունի բարկութեանը չափ չը կար. նրա չիլ բիբերը բոլորովին թաղնվեցան աչքերի կոպերի տակ: Նա իր մտքում ասում էր. «Նիմայ խօ կը դնայ այդ մարդը, ես այն ժամանակ քո կապուտակների թիւը կրկին կաւելացնեմ...»

Եսթերը, կարծես, գուշակեց նրա միտքը և կնիկների սովորական թուելութեամբ, տեսնելով իր առջև մի դերազանց ուժ, աշխատեց նրա մէջ պաշտպանութիւն դնել ամուսնի բռնութեան դէմ:

— Դու զրա վիզը կը կտրես, երբ միւսանդամ կը ծեծէ ինձ, այնպէս չէ, հարցրեց նա իր գեղեցիկ, անբախտութեամբ լի աչքերը դարձնելով դէպի իշխանը:

Իշխանին խիտ անախտութ էր դատաւոր լինել մի այսպիսի ընտանեկան կռիւի, բայց մանկահասակ կնոջ վրդովմունքը, նրա թշուառութիւնը և ծերունի ամուսնի անդթութիւնը այն աստիճան պողեցին նրա վրա, որ պատասխանեց.

— Կը կտրեմ...

Ծերունի հրէան սարսափեց:

— Եսթեր, ի սէր Աստուծոյ, գոչեց նա ողբալի ձայնով. — ես աղբ կուտեմ, գլուխս քարին կը տամ, ես քեզ էլ չեմ ծեծի, ինչ որ ուզես կառնեմ, միշտ իւզ, մեղր, փլաւ կուտացնեմ...

Եսթերը այս խօսքերից ուրախացաւ և մի զըրաւիչ ժպիտով, որի մէջ արտայայտվում էր և'

աւնածութիւն և' չնորհակալութիւն, մօտեցաւ իշխանին, և բռնելով նրա աջը, սեղմեց իր վարդապետ շրթունքի վրա: Կնոջ վարմունքը ամենակին օտարտուի չը թւեցաւ նրա ամուսնին, որովհետեւ այս կողմերում սովորութիւն էր կնիկներին ի նշան յարգանքի համբուրել տղամարդերի ձեռքը:

Հարունը ճշմարիտ էր ասում, որ ինքը աւամայ ամուսնացաւ: Ֆորի սէրը բոլորովին կուլ էր առել նրա սիրտը. կնոջ համար ոչինչ չէր մնացել: Վաթսուն և հինգ տարեկան հասակում նա ամուսնացաւ տասն և վեց տարեկան Եսթերի հետ: Այնը այժմ քսան և մէկ տարեկան էր, իսկ ինքը բոլորովին ծերացած: Խանդոտ ծերունին պահում էր Եսթերին իր այրի քրոջ պահպանութեան ներքոյ, որը սատանայի նման հսկում էր նրա վրա: Այս գիշեր մի դիպուածով նա տանը չէր, գնացել էր իր աղջկայ մօտ: Եթէ տանը լինէր, Եսթերը նրա մասին էլ շատ դանդաղանք կանէր իշխանին: Այդ պառաւը նրա հոգին առնում էր, չէր թողնում ջահել տղերքի հետ խօսի, չէր թողնում մենակ անից դուրս գնայ... Եսթերը շատ անբախտ էր, Եսթերը մի լաւ օր չէր տեսնում... Յուդիթների այդ գեղեցիկ, մանկահասակ քոյրիկը այրվում, տանջվում, խորովվում էր երկու պառաւների ճանկերի մէջ... և նրա սրտի բոլոր տանջանքները կարելի էր նկատել նրա վշտացած, գունաթափ դէմքի վրա:

Գիշերից բաւական անցել էր: Այժմ Հարունին անհանգստացնում էր ոչ թէ կնոջ անդամութիւնը, այլ գլխաւորապէս այն միտքը, թէ ինչ պէտք էր անել անտանիկ հիւրի հետ: Պահել նրան իր տանը չէր կարող, իսկ այն ուշ, գիշերային պահուն դռները բաց անել նրա առջև, այդ ոչ միայն անկարելի էր, այլ իր երկրի հիւրասիրական սովորութիւններին բոլորովին հակառակ: Բայց ինչու՞ հիւրասիրել նրան: Չը նայելով որ այն օր ուրբաթ էր, չը նայելով որ ուրբաթ օրը ամեն մի հրէայի տնում նախապէս պատրաստվում են շաբաթվայ բոլոր կերակուրները, իսկ իր տնում ոչինչ պատրաստութիւն չը կար: Ուրեմն, պահելով հիւրին իր տանը, նա պիտի արդարացնէր Նսթերի գանգատը, թէ հրէաների մէջ ամենահարուստ ամուսինը իր կնոջը քաղցած էր պահում: Այս պատճառով Հարունը շատ ուրախ եղաւ, երբ իշխանը հրամայեց նրան յայտնել ծառաներին, որ ձիաները պատրաստեն:

— Միթէ իմ տունը արժան չէ՞ ձեզ մի գիշեր անցկացնելու համար, ասաց նա կեղծ քաղաքավարութեամբ: — Այժմ ուր կարող էք գնալ, շատ ուշ է:

— Չեմ կարող մնալ, պատասխանեց իշխանը:

— Մ'նայէք, ինչդուրս եմ... աղաչում էր Նսթերը այնպիսի մի ձայնով, որ կարող էր ազդել ամեն մի երկտառարդ սրտի վրա:

Հարունը թեքվեցաւ և այնպէս պարզ փափաց կնոջ ականջին, որ բոլորը լսեց իշխանը:

— Դու չես հասկանում, յիմար, որ հրէայի տունը, հրէայի հացը պիղծ է քրիստոնեայի համար:

— Ես նրա համար մաքուր անկողին կը պատրաստեմ, ասաց կինը լսելի ձայնով, ուշադրութիւն չը դարձնելով, որ այրը նրա հետ ծածուկ է խօսում:

— Շնորհակալ եմ, Նսթեր, ասաց իշխանը դառնալով դէպի կինը, — ցաւում եմ, որ չը պիտի կարողանամ մնալ. մի անհրաժեշտ գործ ստիպում է ինձ հեռանալ այստեղից: Բայց խօսք եմ տալիս, երբ միւսանգամ կը գամ կնիքները ստանալու, գիշերը հիւր կը մնամ ձեզ մօտ:

Հարունը առանց սպասելու իշխանի հրամանին, դուրս եկաւ խրճիթից ծառաներին պատուիրելու, որ ձիաները պատրաստեն: Այդ միջոցին Նսթերը մօտեցաւ իշխանին, և նրա աջը բռնելով իր դողդոջուն ձեռքերի մէջ, կրկին սեղմեց իր վառված շրթունքների վրա, ասելով.

— Ես ձեզ շատ բաներ ունէի խօսելու... խիստ շատ բաներ... Ափսոս, որ չը մնայիք...

Խեղճ կնոջ աչքերում երևացին արտասուքի կաթիլներ:

Գրսից լսելի եղաւ Հարունի հազաւու ձայնը,

որ նշան էր, թէ ահա գալիս եմ: Այնքն հեռացաւ իշխանի մօտից:

— Լսում ես, Հարուն, ուղիղ մէկ ամսից յետոյ կ'նիւթները պէտք է պատրաստ լինեն, քառասուն հատ:

— Լսում եմ, աղայ, միամիտ կացէք: Հարունը մի աշխատութիւն էր. յանձն առեց, իր ժամանակին կը կատարէ:

— Մնացէք բարեաւ, Նսթեր:

Այր և կին դուրս եկան հիւրերին ճանապարհ դնելու: Երբ նրանք փոքր ինչ հեռացան, Հարունը ասաց Նսթերին.

— Նս էգուց ատաւօտեան քո հողին կ'առնեմ...

— Կանչեմ... կանչեմ աղային... սպառնացաւ կինը բարկանալով:

— Չէ... չէ... մի կանչիր, թէ Աստուած կը սիրեա, մի կանչիր...

— Տես, այդպէս կատու կը դառնա...

Դ.

Արնչե հրէան կը պատրաստէ կնիւթները, ես կը պատմեմ մի անցք, որ պատահեց մօտաւորապէս տասն և հինգ տարի առաջ:

Ալեքէվիների ժամանակ, երբ աֆղանները արեւելքից օր լստ օրէ դօրանում էին, երբ պարսից հարաւային երկրների մի մասը անցաւ օսմանցիների ձեռքը, — այդ ժամանակ Պարսկաստանի

արեւմտեան մասնում, մանաւանդ Ատրպատականում շահերի իշխանութիւնը բոլորովին թուլացաւ: Խաներից շատերը ապստամբվեցան և կազմեցին զանազան մանր, անկախ իշխանութիւններ: Այդ խաներից մէկն էր Փայտակարանի (այժմեան Ղարաղաղի) Բարգիւշադ գաւառի Ֆաթալի խանը: Նա մի ազնուական էր աննշան տոհմից, որ իր ամբողջ կեանքում պարագել էր աւաղակութեամբ և ասպատակութիւններով: Նուաճելով Բարգիւշադի բոլոր թուրք բէկերին, Ֆաթալի խանը, ոչ միայն այդ գաւառի բռնապետը դարձաւ, այլ մտածում էր տիրել ամբողջ Ղափանին: Նւ այն գաղանը, որ առաջ իր փոքրիկ խումբով մեծ ճանապարհների վրա միայն քարվաններ էր կողոպտում, այժմ սկսեց ահագին խումբեր կազմել և ամայի դարձնել հարեան երկրները:

Ամասնային ամիսներից մէկն էր:

Ֆաթալի խանը, թողնելով Ղափանի ջերմ տափարակները, իր Չալարիան կոչված խաշնարած ցեղի հետ, անցել էր Փայտակարանի հովիտուն և անտառապատ լեռների վրա ամառը անցկացնելու համար:

Վրէլը էր: Հովիտների բոլոր վրանները պատած էին թանձր խաւարով. միայն խանի կանանոցը կազմող չտղրների մէջ վառվում էին մի քանի գունաւոր լապտերներ: Այդ չտղրներից

զգոյշ և յուշիկ քայլերով դուրս եկան երկու հոգի, որ փաթաթված էին լայն վերարկունների մէջ: Մէկը գնում էր առաջ, իսկ միւսը հետեւում էր նրան: Մի փոքր հեռանալով կանանոցից, նրանք անհետացան գիշերային մթութեան մէջ:

— Ձեռքդ տուր ինձ, տիկին, ասաց նրանցից մէկը, որը, երևում էր, տղամարդ էր, — այդ ճանապարհը անծանօթ է քեզ, դու անդադար սայթաքում ես:

— Շնորհակալ եմ, Ահմէդ, այսպէս էլ կարող եմ գնալ, պատասխանեց մի վշտալի կանացի ձայն, — դու միայն առաջ գնա և ճանապարհը ցոյց տուր ինձ:

Նեղ շաւիղը, որի վրայով անցնում էին նրանք, տեղ-տեղ կորչում էր թուփերի և մացառների մէջ: Շակոտող փուշերը պատառոտում էին նրանց հագուստը և երբեմն ծւառում էին նրանց մարմինը, բայց նրանք, կարծես, ոչինչ չէին զգում և շարունակում էին իրանց ճանապարհը: Անցնելով մի քանի կիրճեր, մի քանի դժուարին տարուփոսեր, նրանք հասան մի տեղ, ուր լճան քարաժայռերը գոգաւորվում էին, կաղմելով այրի նման մի ահազին խուռոյ: Նրա մուտքի առջև պառկած, խռմիւմ էին մի քանի պահապաններ: Տիկինը կանգնեց փոքր ինչ հեռու, իսկ նրա ուղեկից տղամարդը մօտենալով, զարթեցրեց պահապաններից մէկին:

— Բաց արա դուռը, ասաց նրան հաղիւ լսելի ձայնով:

Այդ դուռ կոչվածը մի ահազին սալ էր, որով փակած էր այրի նեղ մուտքը: Ուժեղ պահապանը, թիկն տալով, մի կողմ գլորեց ծանր սալը և մուտքը բացվեցաւ: Այդ միջոցին տիկինը, աւելի զգոյշ կերպով փաթաթվելով իր այրացի վերարկուի մէջ, մօտեցաւ այրին և ներս մտաւ: Նրա հետ եկող տղամարդը, որ կանանոցի ներքինապետն էր, պատուիրեց պահապանին հսկել մուտքի մօտ և ոչ ոքի ներս չը թողնել: Պահապանը, որի ամեն ձևերից երևում էր ակնածութիւն և խոհարհուրթիւն դէպի այդ մարդը, խոստացաւ, թէ կը կատարէ նրա հրամանը:

Այրի մէջ տիրում էր մթին խաւար: Արթնք, նրանք իջնում էին մի ստորերկրեայ տարտարոսի մէջ: Մի քանի քայլ առաջ գնալուց յետոյ, տղամարդը կանգնեց, և չախմախը զարկելով կայծքարին, վառեց արեթը, որով կպցրեց ծրծումբի մէջ թաթախած լուցկին, և նրանով վառեց ձեռքի փոքրիկ լապտերը, որ իր հետ ունէր բերած: Մռայլ լոյսը տարածվեցաւ այրի մթին կամարների մէջ: Այդ ստորերկրեայ զնդանը ոչ խարների աղբւլ էր *), ուր պատասպարվում էին

(*) Աղբւլ կոչվում են այն գոմերը, որ զբոսնում են լեռների մէջ և ծառայում են որպէս անասունների փարախ տարվայ ցուրտ և-

հովիւներէ հօտերը աշնան և ձմեռվայ փոթորիկներէ ժամանակ, իսկ ամառը մնում էր դատարիւ։ Այդ ժամանակ ոչխարները այսպիսի մթին, խեղդված խորշերի կարօտութիւն չունէին, լեռներէ արձակ, բացօթեայ կեանքը աւելի լաւ էր նրանց համար։ Անասունների այդ խաւար պտտապարանը այժմ ծառայում էր որպէս մարդիկներէ զնդան։ Խանը այնտեղ էր բանտարկում իր կալանաւորներին։ Նա կատարելապէս լաւ ըլրինթոսի ձև ունէր. մի ահագին զետեալիոր խոռոչ, ուրմուր պտոյտներով, տարածվել էր ժայռերի սրտի մէջ։ Անասունների բորբոսած ապականութիւնը, ամբարվելով այնտեղ, աւելի անտանելի էր դարձնում առանց օդի և լոյսի այրը, ուր տիրում էր մշտական կոնսաւութիւն, խեղդող ժահահոտութեան հետ։

Տղամարդը ձեռքի փոքրիկ լապտերով դուրսաւորում էր այրի մուտքը և խարխալելով առաջ էր գնում, իսկ տիկինը հետևում էր նրան։ Նրանք հասան մի տեղ, ուր այրի նեղ անցքը լայնանում էր, կազմելով մի ընդարձակ քարանձաւ։ Այստեղ ներկայացաւ նրանց առջև մի սարսափելի տեսարան։ Մօտ երկու հարկւր բանտարկեալներ, առանձին զաթ աւրն ու վ,*)

զանակների ժամանակ. նրանք ըստ մեծի մասին լինում են բնական այրեր։

*) Ղ ա թ ա բ. նշ. չարք, այսպէս է կոչւում,

պառկած էին սառն և խոնաւ գետնի վրա։ Իւրաքանչիւր զաթարը բաղկացած էր քսան հօգուց։ Մի երկայն շղթայ, որի ծանր օղակները անց էր կացրած նրանց պարանոցով, կապում էր բոլորին միասին։ Շղթայի այն օղակը, որ անց էր կացրած նրանց պարանոցով, աւելի լայն էր միւսներից և հտեից ամրացրած էր երկաթէ կողպէքով։ Այդ մի սոսկալի դրութիւն էր ողորմելի կալանաւորների համար։ Երկակայեցէք, քսան մարդիկ համարեա կապված են մինը միւսի հետ։ Բոլորի պարանոցները մի և նոյն շղթայով կապված լինելով, նրանք ստիպված էին միասին կանգնել, միասին նստել, միասին պառկել, մի խօսքով, ամեն շարժում պէտք է միասին դործէին, այլ կերպ անհնարին էր։ Որովհետեւ, եթէ մէկը պառկէր, երբ միւսները նստած էին, կարող էր խեղդվել. եթէ մէկը կանգնէր, երբ միւսները պառկած էին, նոյնպէս կարող էր խեղդվել։

Մի ծանր սոսկում տիրեց տիկնոջ սրտին, երբ նա տեսաւ այդ թշուառ, դատապարտված բաղմութիւնը։ Նրա աչքերի առջև սեպցաւ և փոքր էր մնում, որ ուշաթափ լինէր։ Նա թիկն տուեց քարանձաւի պատին և մի քանի բոպէ մնաց անշարժ, խորին տրտմութեան մէջ։

Երբ ուղտերին, ջորիներին և ձիաներին, թոկով կապելով միմեանց, խումբեր են կազմում։

Տեսնելով լաւտերի լոյսը, բանտարկեալներէց մի քանիսը շաբժվեցան. նրանք բարձրացրին իրանց գլուխները և կրկին դիտելն խոնար գետնի վրա, չը կամենալով զարթեցնել իրանց մօտ պառկած ընկերներին:

Տիկնոջը դժուար էր ճանաչել իր ծպտեալ հագուստի մէջ. նա նմանում էր մի գեղեցկադէմ պատանու, որի նմանները խիստ շատ էին խանի մանկլաւիկների թւում: Նրբ նա մի փոքր ուշիկաւ, նրա ուղեկիցը մօտեցաւ, ասելով.

— Մենք ուշանում ենք...

Նրկուսը միասին մօտեցան շղթայակապներով մի խումբի, որ գտնւում էր քարանձաւի խորին անկիւնում: Նրանցից մէկը վիրաւոր էր: Տիկնը գթութեան քրոջ ցաւակցութեամբ սկսեց բաց անել նրա վէրքի փաթեթները: Կա մի պատանի էր, որ հազիւ քսան տարեկան կը լինէր: Նուաղած, արիւնաքամ եղած այդ մանուկը, պատերազմի դաշտում ընկած Արայի նման, յանկարծ կեանք ստացաւ, երբ իր Շամիրամի դիւթական մատները դիպան նրա մարմնին: Վէրքը գտնուում էր գլխի վրա. թշնամու սուրը խորին սպի էր թողել նրա գագաթի վրա: Տիկնը սկսեց լուանալ վէրքը և սրբել մաքուր կտաւով: Նրա հետ եկող տղամարդը սպեղանի դիւց, իսկ տիկնը դարձեալ փաթեթեց վիրակապներով: Այդ բոլոր գործողութիւնը կատար-

վում էր լուռ և անխօս կերպով: Բայց ոչ ոք չը կարողացաւ նկատել այն բողբոս, երբ տիկնոջ հոգատար մատները զբաղված էին վիրաւորի փաթեթներով, պատանու գունաթափ չրթունքները տենդային ջերմութեամբ սեղմվեցան իր խնամակալի ձեռքի վրա: Այդ ամենաթանգաղին վարձատրութիւնն էր, որ ստացաւ նա իր գիշերային այցելութեան համար: Նա պատրաստ էր գրկել, համբուրել այդ գեղեցիկ, շղթայակապ վիրաւորին, բայց խեղդելով իր մէջ սիրոյ բուռն զգացմունքը, տխուր, սպանված սրտով վեր կացաւ նա, ասելով հիւանդին. — քո վէրքը հիմա բաւական լաւացած է, ես ամեն գիշեր կայցեւեմ քեզ մօտ, մինչև բոլորովին կառողջանաս:

— Իմ վէրքը... կոչեց հիւանդը դառն հառաչանքով. — Իմ վէրքը կը մնայ անբուժելի... նա այնքան խորն է, որ բժշկի ձեռքը հազիւ թէ կարող է չօշափել այնտեղ...

Պատանու խօսքը իր սրտի վէրքի մասին էր: Տիկնը պատասխանեց.

— Ես այն էլ կը բժշկեմ...

Նա վերջին անգամ իր գեղեցիկ, արտասուքով լի աչքերը դարձրեց դէպի պատանին և անցաւ մի քանի ուրիշ հիւանդների մօտ: Բոլորը վիրաւորներ էին: Տիկնը իր ձեռքով փոխում էր նրանց փաթեթները, իսկ նրա հետ եկած տղա-

մարդը սպեղանի էր դնում: Որպէս միջիթարու-
թեան հրեշտակ, ամեն տեղ հանդիպում էր նա
օրհնութեան և խորին չնորհակալութիւնների:
Շատերը բռնում էին նրա հագուստի փէշերը և
համբուրում էին: Այդ հիւանդ, քաղցած, ծարաւ
բաղմութեան կեանքը կախւած էր այդ տիկնոջ
առաքինութիւնից: Նրանք բոլորն էլ կը մեռ-
նէին իրանց խոնաւ, միջին գերեզմանի մէջ,
եթէ այդ կինը չը լինէր:

Նրբ ամեն հոգածութիւններ վերջացած էին,
տիկնոջ ուղեկիցը մի քանի անգամ դարձաւ դէպի
նա, շտապեցնելով, թէ ժամանակ է հեռանալու:
Բայց նա, կարծես, դժուարանում էր մի քայլ
անգամ փոխել, կարծես, մի ներքին, զաղտնի
զգացմունք կապում էր նրան այդ հոտած քա-
րանձաւի հետ, որի օդը խեղդելու չափ անտա-
նելի էր: Նա աւելի ուրախ կը լինէր այնտեղ
մնալ, նայել և միշտ նայել այն սիրուն պատա-
նու վրա, որի գունաթափ չրթունքների ջերմ
դրոշմը դեռ զգում էր իր ձեռքի վրա:

Մի գիւլ, ձգական ձայն լսելի եղաւ դրսից: Տի-
կինը ամբողջ մարմնով դողաց: Դա վազորդեան
ազանի ձայնն էր: Նը նշանակէ, նա շատ էր ու-
շացել քարանձաւի մէջ. պէտք էր շտապել, հե-
ռանալ որ ոչ ոք չը տեսնէ:

Գրսի թարմ, հովասուն օդը փոքր ինչ կաղ-
դուրեց տիկնոջ բոբրտքոված սիրտը և նրա թու-

Քառորդ ժամ հաղիւ էր անցել, սի՛ արարած
ստուերի նման անցաւ տիկնոջ վրանի ետեւի կող-
մը: Նրա սև մարմինը բոլորովին միախառնւում
էր գիշերային մթութեան հետ: Նա գաղաններ
անշունջ քայլերով մօտեցաւ վրանի ցիցերից
մէկին և զօրեղ ձեռքով դուրս քարչեց: Պարանը
թուլացաւ: Հետևապէս թուլացաւ վրանի պատ-
տառի այն մասը, որ ձգւած էր այդ պարանով:
Նա կուրծքի վրա սողալով, մօտեցաւ վրանին
և ձեռքով զգուշութեամբ բարձրացրեց նրա ան-
ջրակտը, որ բաժանում էր տիկնոջ քնարանը
վրանի միւս մասներից: Այս բացուածքից հաղիւ
կարող էր մի կատու անցկենալ: Նա իր ահագին
զուլէը ներս տարաւ: Քնարանի մէջ վառվող
լապտերի լոյսը, ընկնելով նրա երեսի վրա, երե-
ւան հանեց խափշիկի այլանդակ կերպարանքը:
Նա կամաց-կամաց սկսեց առաջ սողալ: Նրա
մերկ մարմինը մինչև մէջքը արդէն անցել էր
քնարանի մէջ: Այդ միջոցին երկու ձեռքերը, օ-
րանդուտանի երկայն թաթերի նման, զրեց յա-
տակի վրա, և զուլէը վեր բարձրացնելով, քննա-
կան կերպով աչք ածեց դէպի քնարանի շուրջը:
Այդ դրութեան մէջ նմանում էր նա մի քած
չան, որի ահագին սովնքը համարում է մինչև գե-
տին ծնունդից յետոյ: Նւ իրաւ, խափշիկը կին
էր: Պահպանելով իր դիրքը, նա սկսեց ուշա-
դրութեամբ ականջ դնել տիկնոջ չնչառութեանը,

առանց մի զթեթե հնչիւն անդամ փախցնելու իր սուր լսողութիւնից: Այդ քնած մարդու չնչառութիւն էր: Խափշիկի սև դէմքի վրա վաղեց մի վայրենի ծիծաղ և նրա հաստ շրթունքները կրծկուեցան, երեսն հանելով սպիտակ, մեծ առամաները: Նա սկսեց առաջ սողալ և այժմ ամբողջ մարմնով գտանվում էր քնարանի մէջ: Նա բողբոջումն հաղուստ չունէր, սակայն կտաւից մի տիպանսէիք միայն ծածկում էր նրա մերկութիւնը: Սատանայի զգուշութեամբ մօտեցաւ նա տիկնոջ անկողինն և չար դէի նման կկեցաւ նրա կողքին: Ալքանի բոլոր վարագոյցները ձգած էին. քնարանի մէջ բաւական տաք էր և օդը խեղդված: Տիկնոջ կիսով չափ յետ էր ձգել իր վերմակը, նրա սքանչելի կուրծքը և ձոխ ուսերը մնացել էին բաց: Նրա փոքր ինչ շառագունած երեսը համարեա սքողված էր խիտ ծամերի տակ, որ ծածկելով պարանոցը, տիւլիլ էին մախմուրէ ծաղկաւոր բարձի վրա: Սև դեղ մի առանձին դրժոխային մոլեգնութեամբ գեռ նայում էր երես-խաչի սկէս քնած կնոջ վրա: Նրա տափակ քթի ծակերը անհանգիստ չնչառութիւնից լայնանում էին և արագաչարժ աչքերի սպիտակուցը շողորմում էր երեսի խաւար մակերեսի վրա: Նա ներկայացնում էր մի դադան, որ դո՛ւր իր ձանկերի մէջ ունի: Նա իր ձեռքը մեկնեց և սկսեց անզգալի կերպով յետ քաշել սփռված ծամերը

տիկնոջ պարանոցի վրայից, կարծես, այդ խիտ, մետաքսանման ծամերը արգելում էին նրան կատարելու մի եղեռնական դործողութիւն: Նա այժմ իր երկու ձեռքերը տարաւ դէպի տիկնոջ պարանոցը և վայրենի կատաղութեամբ պատրաստվում էր խեղդել նրան, յանկարծ վրանի միւս մասնից լսելի եղաւ մի ձայն.

— Ահմէդ... Ահմէդ...

Դա տիկնոջ աղախնի, փէրի ձայնն էր, որ քաղցր երազների հրապուրանքի մէջ, կանչում էր իր սիրելի Ահմէդին: Բայց որովհետեւ նոյն անունով կոչվում էր և կանանոցի ներքինապետը, խափշիկը կարծեց, թէ նրան օգնութեան է կանչում:

— Ա՛խ, Ահմէդ... կրկին լսելի եղաւ աղախնի ձայնը:

Խափշիկը սարսափեց. կանչում էին Ահմէդին, կանանոցի սոսկալի պահապանին: Նա սկսեց աճապարել, որ չը բռնվի: Եւ հանելով իր տիպանսէիքի միջից մի սուր մկրատ, շտապեց նրանով կտրել տիկնոջ կոկորդը: Բայց երկիւղը և խռովութիւնը այն աստիճան չփոթել էին նրան, որ սխալվեցաւ իր դործողութեան մէջ. — փոխառակ կոկորդը կտրելու, կտրեց տիկնոջ ծամերից մի քանի հիւսեր:

Նա վազրի արագութեամբ, դարձեալ սողալով, դուրս թռաւ քնարանից և աներևութացաւ կանանոցի բաղմաթիւ չաղրների մէջ:

Ե.

Առաւօտ էր: Արեգակի առաջին ճառագայթները կորչում, անհետանում էին մութրազոյն մառախուղի մէջ, որ պատել էր Ղարադաղի լեռների գագաթները: Խիտ անտառները դեռ մութում էին գիշերային մուգլի մէջ: Մտեր չէին երևում: Սար, դաշտ և հովիտ ընկղմուած էին մի լացնատարած, մառախլապատ ծովի մէջ:

Հեռուից սև բծերի նման երևում էին Չալաբիանլիները *) օբաները: Ամեն մի գիւղի հովիտները, առանձին խումբեր կազմելով, տարածել էին իրանց չափները այդ լեռների ձօխ, խոտաւէտ արօտամարգերի վրա: Մի լեռնադաշտի վրա ցրված էին ցեղի պետի, ֆաթալի-խանի, չափորները: Նրանք թէ իրանց ձևով և թէ նիւթով, որից պատրաստված էին, զանազանվում էին հասարակ մահկանացուների չափորներից. նրանք աւելի փառաւոր, բարձր և ընդարձակ էին:

Խանը դեռ քնած էր: Նրա բազմաթիւ կնիկները, վաղուց արդէն զարթնելով, զբաղված էին իրանց անտեսութիւնով: Վրանների առջև, բայց օդի մէջ, օջախները ծխում էին: Այդ օջախ-

*) Չալաբիանլիների ցեղը մինչև այսօր կայ Ղարադաղի մէջ և յայտնի է որպէս մի վայրենի և աւազակաբարոյ ժողովուրդ: Նրանք կազմում էին պարսից հեծելազօրքի քաջ և ամենաբնորոշ մասը:

ների կազմութիւնը խիտ պարզ էր. հարթ գետնի վրա շարված էին երկաթեայ¹ եռոտանիներ, որոնց տակին կրակ էր վառվում և տաքացնում էր նրանց վրա դրած մեծ և փոքր կաթսաները:

Ամբողջ փայտակարանի բռնապետի կնիկները, որոնք ամեն յարմարութիւն ունէին իրանց տընտեսութեան մէջ բոլոր աշխատութիւնները աղախինների ձեռքով կատարելու, բայց դարձեալ հաւատարիմ մնալով աւանդական սովորութիւններին, իրանց գարծը իրանց ձեռքով էին կատարում: Քաղաքակրթութեան բացակայութիւնը ազատ էր պահել նրանց տանտիկնոջ թէ քնքշութիւնից և թէ ծուլութիւնից: Բայց պէտք է նկատել, որ աշխատում էին պառանքները միայն, իսկ աւելի մանկահասակները կամ դեռ քնած էին, կամ զբաղված էին իրանց առաւօտեան զարդարանքով:

Չափորները, որոնց մէջ զետեղված էր կանանցը, բոլորովին առանձնացած էին խանի միւս վրաններից: Նրանք թւով քսանից աւել կը լինէին, որոնց իւրաքանչիւրը յատկացրած էր նրա կնիկներից մէկի բնակութեան համար: Ագուլեցի հայ վաճառականների Սպահանից և Հնդկաստանից բերած թանդազին փարչաները զարդարում էին այդ չքեղ օթեակները, որոնց մէջ ապրում էին երկրի ամենազեղեցիկ կնիկներից ընտրեալները:

✓ Չատրները կրօնաբողոքականի ձևով շարված էին մինը միւսի մօտ, թողնելով մէջ տեղում հրապարակի նման ընդարձակ տարածութիւն: Խոտերը այդ տարածութեան վրա կոխվելով, բողոքովին սեպել էին և կպել զետնին: Այստեղ խառնալին-թոր կերպով շարվում էր, վրժվրժում էր և խլրտվում էր մի ամբողջ լէզէօն: Այստեղ կա-րելի էր տեսնել մի բազմութիւն ամեն ազգից և ամեն գոյնի.— սեամորթ և սպիտակամորթ աղա-խիններ, ներքինի ծառաներ, Աֆրիկայի խորքե-րից բերած սև սպասաւորներ, խառն ահազին դամիւնների և նիհար որսորդական բարակների հետ: Գնչուների կատարեալ թաքուն էր դա:

Կանանց հագուստը շատ սլարդ էր, երեք կտո-րից միայն բաղկացած՝—շապիկ, շաւար և թիկ-նոց: Նուրբ, թափանցիկ կերպատից կարված, կարճիկ շապիկը հաղիւ սքողում էր կիսաբաց կուրծքը և իջնում էր մինչև այնտեղ, ուր փորը բաժանվում է մարմնի մի այլ մասնից: Յետոյ սկսվում էր շաւարը, որ մեր կանանց իւփկայի տեղ էր ծառայում: Նա կարված էր մետաքսեայ խառայից, զարդարած ոսկէհուս ծաղիկներով և հասնում էր մինչև ծնկները միայն, բողոքովին մերկ թողնելով ոտների լիքը և հաստիկ սրունք-ները *): Շաւարի սառլին եղբրքը, չորս մատ

*) Լիքը սրունքները դեղեցկութեան մի նշան համարվելով, մահմետական կնիկները արհեստա-

լայնութեամբ, նոյնպէս զարդարած էին ոսկէ թե-լերով: Շապիկի վրա հազած ունէին կարճիկ թիկ-նոցը, որ սեղմված էր մէջքի վրա և մեր կանանց բէզրովալիկի ձևը ունէր: Թիկնոցները ըստ մեծի մասին կարված էին թանգազին մանիշակագոյն և վարդագոյն թաւիչից և նախշած դարձեալ ոսկէ թե-լերով: Աղախինները կրում էին իրանց տիկիննե-րի հին հագուստը, որոնց մի կամ երկու անգամ էին հագել: Կարծես, այդ թիթեռների նման նախշուն և խայտաճամուկ արարածները, զեռ-նոր էին դուրս եկել կնոջ այն զրութիւնից, երբ նա իր մերկութիւնը ծածկում էր թղենու տերե-ներով: Բայց ոչ, հագուստի այդ ձևը հարեմական հանճարի, հարեմական հեշտասիրութեան արդիւնք էր, որ երևան էր հանում մերկ կուրծք, մերկ սրունքներ և մերկ բազուկներ: Անոջ մարմնի այդ մասերը միշտ կարող էին զրգուկ վալաշոտ կրքեր, որոնք թուլացած, բթացած էին հարեմի իշխանի մէջ, որը միայնակ տիրում էր կնիկների մի ահազին երամակի վրա:

✕ Աւելի խորհրդաւոր նշանակութիւն ունէին նրանց միւս զարդարանքները: Թանգազին ակնե-րով զարդարած, սրարանոցի մանեակները ունէին

կան կերպով հաստացնում են նրանց, վերելից միշտ պինդ կապած ունեհաւով, և արիւնը բնա-կանաբար հաւաքվելով ոտների ստորին մասնե-րում, հաստացնում է սրունքները:

իրանց շարքում մի տեսակ, ոսկուց չինած խողովակածն թելիսման, որի մէջ դրած էին կախարդական բժժանքներ: Թէ բազումները վրա, թէ թեքերի վրա (արմուկներից դէպի վեր) բոլորն էլ ապարանջաններ ունէին, այն զանազանութեամբ, որ թեքերի ապարանջանները կրում էին հագուստի վրայից, իսկ բազումներինը մարմնի վրա: Բացի դրանից, թեքերի ապարանջանները զարդարած էին գոյնզգոյն յուլուններով, որոնք դիւթական նշանակութիւն ունէին: Մատանիներին թիւ չը կար, բացի դրանից, բոլորի ոտների մերկ սրունքները նոյնպէս զարդարած էին գոյնզգոյն յուլուններով: Մի քանիսը ունէին համալիւն եր, այսինքն ակներկից ոսկուց և մարգարիտներից հիւսված մի զարդ, որ գեներալների ժապաւէնի նման ձգել էին իրանց ուսից և կապել աջ թեքի տակ: Կլինը, որպէս մի կախարդական էակ, բառի բուն նշանակութեամբ, իր զարդերի մէջն էր ամփոփել իր բոլոր գործերը *): Այդ զարդերը ոչ միայն աւելի փայլ էին տալիս նրա գեղեցկութեանը, այլ պահպանում էին նրան չար աչքից, սիրելի էին կացուցանում նրան իր իշխանի աչքում և ազատ էին

*) Պարսից լեզուում ամբողջ դրքեր կան գըրված, որոնք բացատրում են այս և այն գոհարի, այս և այն մետաղի կախարդական նշանակութիւնը:

պահում միւս կնիկների նախանձից ու նենգաւոր որոգայթներից: Երեք հայ ոսկերիչներ, իրանց աշակերտների հետ, խանի բանակի մէջ, անդադար գործում էին նրա կնիկների զարդարանքի համար, որ լսվում էր ամբողջ գաւառների եկամուտը:

Չապրների այդ խումբը, որ յատկացրած էր կանանոցի համար, բոլորովին անմատչելի էր: Նա շուրջանակի պատած էր բարձր ալալ ուղղով, *) որ կոչվում էր սարալ-էրդալ, այսինքն սերալի վարագոյր: Այնտեղ կարող էին մուտք գործել միայն ներքինները և սեամորթ ստրուկներն ու ստրկուհիք:

Այն առաւօտ կանանոցի հրապարակի վրա կատարվում էր մի արտակարգ շարժողութիւն: Բոլորը զբաղված էին մի մեծ պատրաստութիւնով: Աղախիներին մի քանիսը նստած էին մերկ գետնի վրա, բոլորն էլ ահադին, երկաթեայ կասկարայի շուրջը: Նրանցից մէկը ալիւր էր մաղում, միւսը փայտեայ տաշտի մէջ խմոր էր հունցում, երրորդը խմորից գնդակներ էր չինում, չորրորդը գնդակները հարթ տախտակի վրա դնելով, փայտեայ կլորիկ կոնակով բաց էր

*) Ալալ ուղղով նշանակում է մի հիւսվածք, որ պատրաստվում է բարակ եղեգներից. նրանով են շինում թափառաչրջիկ ցեղերը իրանց տաղավարները:

անում և նրանց բոլորակ լաւաչի ձև էր տալիս։
հինգերորդը վեր էր առնում լաւաչները, տա-
րածում էր տաքացած կասկարայի վրա և նրան-
ցից հաց էր թխում։ Աշխատութիւնը կատար-
վում էր ամենայն արագութեամբ. մի և նոյն
ժամանակ նրանց զբաղմունքը չէր արդելում
խօսել, ծիծաղել և բամբասել։ Երկու կնիկներ
գրանցից փոքր ինչ հեռու, պտտեցնելով շրջա-
կան երկանաքարի թեքը, ալիւր էին աղում։
Սպիտակ փօշին պատել էր նրանց սև մազերը
և երեսը։ Մի քանիսը կաթսաների մէջ տապա-
կում էին ամբողջ գառներ, կամ շամփուրներ
վրա միս էին խորովում։ Կարծես, մի ահազին
բանակի համար պատրաստվում էր նախաճաշիկ։

— Հաֆսան, գիտես ինչ է պատահել այս գիշեր,
ասաց մանկահասակ Այիշան մի սևաչեայ կնոջ,
որ նստած չաղրի մէջ, հարում էր խնոցին կա-
րագ պատրաստելու համար։

— Ի՞նչ է պատահել, հարցրեց Հաֆսան հե-
տաքրքրութեամբ և դադարեց խնոցին հարելուց։

— Ասում են, սատանաները այս գիշեր Սիւրին
մազերը մկրատով կտրել են։

— Ճշմարիտ, հարցրեց Հաֆսան, և մի և նոյն
ժամանակ ուրախութեան նման մի լոյս արտա-
փայլեց նրա սիրուն դէմքի վրա։

— Բոլորը կտրել են։

— Բոլորը, թէ զուլֆերը, թէ հիւսերը, — հիմայ

այլանդակվել, քէչալ Ասլօի նման է դարձել
Սիւրին։

— Նրա տեղն է։ — Շատ էր պարծենում իր եր-
կայն մազերով Սիւրին։ — Պէտք է նրա պոչն էլ
կտրէին։

— Ի՞նչ պոչ, հարցրեց Այիշան զարմանալով։

— Գու չես իմանում, ախար այդ հայ կնիկ-
ները պոչ ունեն։ Սիւրին էլ ունի։ Զէյնաբն էր
ասում։ Նա մի անգամ տեսել էր, Սիւրինի լողա-
նալու ժամանակ։

Երկու մանկահասակ կնիկները սկսեցին եր-
կար խօսել Սիւրինի պոչի վրա, սկսեցին դատել,
քննել, թէ ինչից էր այդ յետոյ այն եզրակա-
ցութեան հասան, որ բոլոր հայ կնիկները ջին-
ների տոհմից են, դրա համար Սիւրին այնքան
վարպետ և խորամանկ է, որ կարողացաւ կա-
խարդել, խեղքից հանել խանին, կարողացաւ
բոլոր կնիկներին նրա չաչքից գցել, և իրան
միայն սիրել տալ։

— Հիմա ինչ է անում Սիւրին, հարցրեց
Հաֆսան։

— Ի՞նչ պէտք է անէ, պատասխանեց Այիշան
արհամարհանքով, — իր վրանում նստած, լաց է
լինում, ասում է՝ ես գիտեմ, այդ սատանայի
գործ չէ, դա Զէյնաբի գործն է... Զէյնաբը մի
քանի օր առաջ ասել էր նրան, թէ ես քո գլխին
մի «օյին» պիտի խաղամ... Հիմա Սիւրին մոռա-

ծում է, թէ գիշերը քնած ժամանակ Զէյնաբն է կտրել տուել նրա ձագերը, ասում է, ես բոլորը խանին կը յայտնեմ...

Զէյնաբը խանի հարեմի թագուհին և նրա առաջնակարգ կնիկներից մէկն էր, բայց Սիւրիի խանի հարեմը մտնելուց յետոյ նա իր նշանակութիւնը կորցրեց: Գեղեցիկ Սիւրին ստուեր ձգեց նրա վրա, և այստեղից առաջ եկաւ երկուսի մէջ նախանձ և ատելութիւն: Հաֆսան և Այիշան հաւանական էին գտնուում, որ Զէյնաբը, իր վրէժխնդրութիւնը գոհացնելու համար, իր աղախինների ձեռքով կտրել տուած լինէր Սիւրիի մազերը, որ այլանդակէ նրան, որ նրա գեղեցկութիւնից մի բան խլած լինի: Բայց միւս կողմից, մեահաւատութիւնը նրանց թոյլ էէր տալիս բոլորովին հաւատալ այդ խայտառակութեանը, որ հարեմի մէջ մի սովորական բան էր: Նրանք կարծում էին, թէ անպատճառ սատանայի մատը պէտք է խառն լինէր այդ գործի մէջ, թէև դրա նման շատ գործեր կատարվում էին առանց սատանայի մասնակցութեան, ինչպէս էին՝ կնիկների միմեանց նոր կարված հագուստի վրա բծեր գցելը, մկրատով կտրատելը, միմեանց նոր գնված հողաթափների մէջ ցելի լցնելը, միմեանց զարդարանքները, ակննդէնները գողանալը և այլն: Վերջին ժամանակներում խանը այն աստիճան ձանձրացաւ կնիկների անընդհատ կռիւ-

ներից, և դժուարանալով արոշել, թէ ո՞րն է արդարը և ո՞րը մեղաւորը, սկսեց անխտիր կերպով ծեծել, թէ արդարին և թէ մեղաւորին, մտածելով, ի հարկէ նրանցից մէկը յանցաւոր կը լինի: Բայց Հաֆսան և Այիշան չէին կարծում, որ Սիւրիի վիրաւորանքը անց կը կենայ առանց հետեանքի, գիտէին, որ խանը նրան շատ սիրում է և Զէյնաբը լաւ ծեծ կուտէր նրա մազերը կտրել տալու համար: Թէև այդ սատանայի գործն աս լինէր, բայց պէտք էր աշխատել, որ Զէյնաբը պատժվի. նա էլ մի բարի պտուղ չէ. նա էլ առաջ փքվում էր, տրաքվում էր, աշխատելով բոլոր կնիկներին իր ոտների տակ դնել...

Թանձր մառախուղը սկսեց փոքր առ փոքր նստրանալ և կապոյտ երկինքը տեղ-տեղ բացվեցաւ. արեգակի ճառագայթները սկսեցին շողալ այդ բացուածքներից, որպէս սպիտակ վրանի պատուված ձեղքերից: Չը նայելով որ ամառն էր, բայց վաղորդեան արեգակը դեռ անդօր էր ջերմացնելու լեռնային օդի ցրտութիւնը: Առաւօտեան ցօղը մանր գոհարների նման դեռ փայլում էր խոտաբոյսերի վրա, յիշեցնելով տաք երկրների զարնան սկզբները:

Խանի կիսաքուն երեխաները, բոբլիկ ոտներով, առանց վարտիքի, դուրս էին թափվել չադրներից, և օջախների կրակի մօտ կկղած, տաքանում էին: Այստեղ նրանց մայրերը նախաձա-

շիկի պատրաստութիւն չին անում: Երեխաներից մէկը կատուի ճարպկութեամբ իր թաթիկը տարաւ կաթսայի մէջ և այնտեղից խեց մի կը տոբ միս: «Չօռ, ցաւ, վարամ ռւտես, ասաց բարկացած մայրը և առեց վառելու փայտը, որ պատժէ նրա լրբութիւնը: Տղան սատանայի նման փախաւ, տանելով իր կողոպուտը: մօր ձգած փայտը դիպաւ նրա ոտներին և նա ընկաւ երեսի վրա: Մսի կտորը դուրս պրծաւ նրա ձեռքից և թաւալվեցաւ դետնի փոշիների մէջ: Տղան շուտով ուշի եկաւ, և վեր բարձրանալով, կրկին յափշտակեց իր աւարը, փախաւ, և հեռուից ըսկսեց ծիծաղել, ջիգրացնել մօրը և ախորժանօք կրծել փոշեթաթախ մսի կտորը:

— Զըմ... հըմ... տեսնո՞ւմ, աչքդ հանեցի... տաբայ... ասաց նա երեսը ծռմուկով:

— Չօռ ուտես, ցաւ ուտես, վարամ ուտես, կրկնեց մայրը, — թէ ձեռքս կընկնես, ես գիտեմ ինչ կանեմ...

Չատրներից մէկի մէջ, Խորասանի գեղեցիկ գորգի վրա, միայնակ նստած էր մի մանկահասակ կին, գրկած ունելով մի փոքրիկ երեխայ: Նա կպած էր մօր կուրծքին և ծիծ էր ուտում: Արեւի ոսկեգոյն ճառագայթները թափվելով վրանի մէջ, լցրել էին նրան խիստ ախորժ և փափուկ ջերմութիւնով: Մայրը տխրութեամբ նայում էր երեխայի երեսին և նրա սևորակ աչքե-

րը լցվում էին արտասուքով: Երեխան երբեմն թողնում էր բերանից ծիծը, նայում էր մօր երեսին և ժպտում էր, կարծես, այդ անմեղ ժպիտով կամենում էր ասել, թէ դեռ չեմ կշտացել: Մօր գլուխը, չալմայի նման, փաթաթած էր մետաքսեայ սև քողով, որի տակից մազեր ամենին չէին երևում: Այդ կինը Սիւրին էր, Տաթևի Դաւիթ ուրացողի աղջիկը: Նրա առաջվայ անունը Մարիամ էր, բայց երբ մահմեդականութիւն ընդունել տուեցին, կոչեցին Սիւրի: Խանը ունէր այդ անունով մի ուրիշ կին, որին շատ էր սիրում, վաղահաս մահը զրկեց նրան այդ կնոջից, և նրա անունը չնորհեց գեղեցիկ Մարիամին: Հայրը ծախեց Մարիամին Տաթևի մեղքութիւնը ստանալու համար, և թողնելով քրիստոնէական կրօնը, ինքն նոյնպէս ընդունեց մահմեդականութիւն, այդ պատճառով հայերից ստացաւ «ուրացող» անունը և Տաթևի համար դարձաւ մի երկրորդ Վասակ, իսկ ինքը իրան թուրքի անունով Բաղր էր կոչում:

Սիւրիի տխրութիւնը նրա համար չէր, որ այն գիշեր իր նախանձորդների ռիսակալ ձեռքը զրկել էր նրան իր հարուստ և սև սաթի նման փայլուն գիսակներից: Նա այդ մասին չէր մտածում և ինչ հարկ կար մտածելու: Նրա գեղեցկութիւնից պակասեց մի զարդ: Աւելի լաւ, այդ մեծ կոբուստ չէր Սիւրիի համար: Այդ կոբուստ համա-

րում են այն կնիկները, որոնք ախորժակ ունեն սիրվելու: Բայց ձեռքից պէտք է սիրվէր Սիւրբին: Մի գազանից, մի եղեռնագործից, որին նա ամեն սրտով ատում էր, որի սէրը աւելի բարկացնում էր նրան, որի ձեռքում գերի էր նա: Նա զոհ էր, մի անբախտ զոհ հօր փառասիրութեան: Հայրը վաճառեց նրան Տատևի մէլիքութիւնը ստանալու համար. և ծնողական այդ անգթութեան հետ չէր կարող հաշտվել նա: Ամեն անգամ հայ քահանայի երեսը տեսնելիս, ամեն անգամ հայոց եկեղեցու զանգակի ձայնը լսելիս, նրա սրտում կրակ էր լցվում. նրա աչքերը հեղեղվում էին արտասուքով, և նա մտածում էր, որ կորած է թէ հոգով և թէ մարմնով: Այս աշխարհը սև էր նրա համար, իսկ այն աշխարհում սպասում էր նոյնպէս տանջանք: Կրօնական զգացմունքը ջերմ էր նրա մէջ: Իր մօրից լսել էր նա շատ բաներ մահմեդականների մասին: Մահմեդականի հացը ուտելը, մահմեդականի հագուստը հագնելը, մահմեդականին դիպչելն անգամ մեղք էր համարում նա, իսկ այժմ... այժմ սարսափում էր նա, երբ նայում էր իր սիրելի զաւակի վրա. այդ իր մարմինը և արիւնը կրող մանուկը մահմեդականի պտուղ էր... Քանիցս անգամ նա պատրաստվեցաւ խեղդել իրան, քանիցս անգամ կամեցաւ թունաւորել իրան, բայց ամեն անգամ, երբ նայում էր այդ մանուկի վրա, նրա ձեռքե-

րը թուլանում էին, նա անզօր էր լինում կատարել իր մտադրութիւնը: Ի՞նչն էր պահում նրան. մեղքի ծնունդը, թէ մայրական սէրը. — այդ մասին նա անկարող էր իրան հաշիւ տալ:

Խորին տխրութեամբ նայում էր նա այս առաւօտ փոքրիկ հրապարակի վրա, որ չքապատած էր սպիտակ չադրներով: Այնտեղ ման էին գալիս խանի կիսամերկ կանայքը, երեխաները արջի քոթոթների նման վխտում էին, աղախիւնները, գլուխը կորցրած այս կողմ և այն կողմ էին վազում, ամեն ինչ գտնվում էր մի անսովոր շարժողութեան մէջ: Ի՞նչ էր պատահել. ձեռք համար էր այդ մեծ պատրաստութիւնը: Կասկարայի վրա հացի թխելը դեռ չէին վերջացրած. կաթսաների մէջ կերակուրները դեռ եփվում էին. շարժական երկանաքարը անդադար ալիւր էր աղում. օդը լցված էր այդ մեծ խոհանոցի ախորժ հոտով: Արեղակը բաւական բարձրացել էր հօրիզոնի վրա, վաղորդեան մառախուղը բոլորովին փարատված էր. մօնիշակագոյն երկնքի վրա ամպի մի փոքրիկ կտոր անգամ չէր երևում: Անտառապատ լեռները ծփում էին արեգակի ճառագայթների մէջ, ներկայացնելով մի սքանչելի տեսարան: Սիւրբի երեխան, առանց մօր ծիծը թողնելու բերանից, աչքերը փակեց և ննջեց. նա դեռ իր վարդագոյն չրթունքները չարժում էր, երևակայելով, թէ ծծում է: Մայրը զգուշու-

թեամբ ցած դրեց նրան բարձի վրա, սկսեց պատրաստել լանդիկը, որ կապած էր վրանի երկու սկաների մէջ: Այդ միջոցին, իր շուրջը նայելով, ներս մտաւ մի մարդ, որը, ինչպէս երեւում էր, զգուշանում էր, որ իրան չը նկատէին: Դա մի կլորիկ մարդ էր, փոքրիկ հասակով. գլխի ալետրած մազերը ցոյց էին տալիս, որ նրա տարիքը վաղուց արդէն անցել էին յիսունից, բայց երեսի վրա մազերի մի նշոյլ անգամ չը կար: Մի այսպիսի թառամած, կնճռոտած, և զուրկ այրական բոլոր արտայայտութիւնից դէմք կարող էին ունենալ պառաւ կնիկները միայն: Երեսի լերկ կաշին դեղին պղինձի գոյն **?** ունէր մոյգի հետ խառնված, իսկ աչքերում ամենեւին փայլ չը կար: Նրա ձայնը երեխայի անզարգացած ձայնի կատարեալ նմանութիւնը ունէր, որը, կարծես, դուրս էր գալիս փորից: Այդ ծերունի երեխան խորին յարգանքով մօտեցաւ տիկնոջը, և չոքելով նրա առջև, ասաց.

— Մի խնդիրք ունեմ:

— Գիտեմ ինչ պիտի ասես, Ահմէդ, պատասխանեց տիկինը երեսը շուռ տալով: — Լաւ է, որ չը խօսես:

Ծերունին ձեռքը մեկնեց և վեր առեց տիկնոջ հողաթափների մի հատը, որ դրած էր վրանի մուտքի մօտ, և սեղմելով իր ցամաքած շրթերի վրա, ասաց.

— Ես ձեր ոտքը համաւորում եմ, լսեցէք ծերուկ Ահմէդի աղաչանքին:

— Երկար խօսել պէտք չէ, Ահմէդ, ես երդվել եմ երբէք չը տեսնել նրա երեսը:

Ծերունին փորձ փորձեց նորից կրկնել իր խնդիրքը, բայց տիկինը հրամայեց նրան հեռանալ, յայտնելով, թէ իր յիմարութիւններով կարող է զարթեցնել երեխային, որին պատրաստվում էր կապել օրօրոցի մէջ:

Ահմէդը ազգով հայ էր, զարաբաղցի, տեղային ամենալաւ թառածողներից մէկը: Նրան երիտասարդութեան ժամանակ բերել տուեց խանը և պահում էր իր սաղանդարների (նուագախումբի) մէջ, որոնց իր մօտից չէր հեռացնում: Եւ որպէս զի Ահմէդը կարողանայ հարեմի մէջ ևս մօտք գործել, խանումների համար ևս ածել, խանը հրամայեց նրան ներքինիացնել: Երկար տարիներ նա զուարճացնում էր խանումներին իր թառով, բայց երբ ծերացաւ, թողեց ածելը, այժմ կանանցի մէջ ներքինապետի պաշտօն էր կատարում: Բայց մի բան, որ պահեց նա ամենայն սրբութեամբ, — դա էր քրիստոնէական հաւատը, որ պաշտում էր զադանի կերպով:

Դուրս գալով Սիւրիի վրանից, Ահմէդը դիմեց դէպի մի վրան, որ բաւական հեռու էր

կանանոցից և գտնվում էր անտառի խորքում: Այստեղ կային մի քանի ուրիշ վրաններ ևս, որ յատկացրած էին խանի թիկնապահներին և նրա ծառաներին: Մի մարդ կէս ճանապարհի վրա կանգնած, սպասում էր նրան. երբ տեսաւ ներքինուն, մօտենալով հարցրեց.

— Ի՞նչ եղաւ...

Ահմէդը պատմեց նրան, թէ ինքը ամեն հնար դործ դրեց, աղաչեց, պաղատեց, ոտքը համբուրեց, բայց տիկինը ասում է. — չէ ու չէ, չեմ ուզում տեսնվել նրա հետ:

— Նա չէ ուզում տեսնվել իր հօր հետ... շատ լաւ... խորին դառնութեամբ կրկնեց Ահմէդի հետ խօսող մարդը և դիմեց դէպի այն վրանը, ուր նրան իջեան էին տուել:

Ահմէդը սառած կանգնել, երկար նայում էր նրա ետևից: Երբ նա բոլորովին աչքից հեռացաւ, ներքինին գլուխը չարժեղով, ասաց իր մոռեումը. — քեզ նման հայրը արժան չէ այնպիսի զաւակի երեսը տեսնելու...

Այդ մարդը Միւրիի հայրն էր, Տաթևի մէլիք Գաւիթ «ուրացողը», որ թուրքի անունով իրան Բաղը էր կոչում: Մի ժամանակ նա Տաթևի մէլիք Գիւլամբարի մօտ գըզիրի և լրտեսի պաշտօն էր կատարում և շատ սիրելի էր նրան, վերջը կամենալով իր բարերարի տեղը զբաւել, թոճաւորեց նրան, և իր աղջիկը կաշառք տալով խա-

նին, ոչ միայն կարողացաւ աղատվել այդ չարագործութեան համար պատժվելուց, այլ իր զոհի փոխարէն ժառանգեց Տաթևի մէլիքութիւնը: Բռնութեամբ, դաւաճանութեամբ և եղեռնագործութեամբ յափշտակված իշխանութիւնը բոլորովին անտանելի դարձաւ Տաթևի հայ ժողովրդին, առաւել այն պատճառով, որ Գաւիթը խանին աւելի հաճոյանալու համար փոխեց իր կրօնը: Այս պատճառով «ուրացողը» անբաւական ժողովրդին իր ճնշման տակ պահելու համար ստիպված էր այնուհետև միշտ նորանոր միջոցներ հրնարել խանի սիրտը զրաւելու և նրա պաշտպանութիւնը վայելելու համար, որպէս զի նրա օգնութեամբ կարողանայ պահպանել իր խախուտ դիրքը:

Միջակ հասակով մարդ էր նա, մի ոտքով կաղ. երեսը կապիկի դէմքի նմանութիւն ունէր, մազով պատած մինչև աչքերի կոպերը: Նիթէ հաւատանք ժողովրդական կարծիքին, թէ «չօլախ» մարդիկը «եարամազ» (հնարագէտ) կը լինեն, — պէտք է ընդունենք, որ Գաւիթը մարմնացած խորամանկութեան ճիշտ տիպարն էր: Գա այն տեսակ մարդիկներից էր, որոնց մասին ասում են, թէ սատանայից եօթն օր առաջ են ծնվել:

Բայց այդ մարդը, որ ոչ տխրել, ոչ յուսահատվել և ոչ բարկանալ դիտէր, այդ մարդը, որ ոչ մի անաջդութեան, ոչ մի դժուարութեան դէմ

իր կեանքում չէր դողացել, — ներքինու խօսքերը լսելուց յետոյ, մի խեցեղէն ամանի նման, կարծես, փշրվեցաւ: Հարազատ աղջիկը զզվում էր տեսնել նրա երեսը: Դա մի սարսափելի հարուածք էր: Աշխարհից արհամարհված, հաղարաւոր թշուառների անէծքով դատապարտուած մարդը միշտ ոչինչի տեղ էր դնում իր դոճերի լացը, տանջանքը և արիւնը... Բայց աղջկայ բողոքը աղղեց նրա վրա: Տատանվելով շարունակում էր նա իր անհաստատ քայլերը դէպի իջեանը, որ դեռ բաւական հեռու էր: Ճանապարհը ընկած էր ոտնակոխ եղած խոտաբոյսերի միջով, որ ձևացնում էր մի օձապտոյտ շաւիղ: Թռչունները չորս կողմում չըկէրկում էին, բայց նա ոչինչ չէր լսում: Արեգակի վառ ճառագայթների մէջ անտառի ծառերը նկարվում էին իրանց բուլոր գեղեցկութեամբ, բայց նա ոչինչ չէր տեսնում: Կարծես, ամեն զգացմունք, ամեն կիրք սպանւած լինէին նրա սրտում: Նրա ուղեղը այդ բոլորում այն ատիճան խառնաշփոթութեան մէջ էր, որ անկարող էր իր մտածութիւնները որ և իցէ կարգի դնել: Նա ասելու շատ բաներ ունէր իր աղջկան, նա իր նպատակները իրադործելու համար յոյս էր դրած աղջկայ աջակցութեան վրա: Բայց բոլորը քանդվեցաւ: Կամ այսօր պէտք էր յաջողեցնել, կամ ամեն ինչ կորած էր յաւիտեան...

Այսպիսի դառն և յուսահատ մտածութիւնների մէջ գնում էր նա, յանկարծ թուփերի միջից դուրս եկաւ նրա առջև մի մարդ, որը սպասում էր նրան:

— Բարի լինի... խօսեց մէլիքը հարցական հակացքով նայելով նրա երեսին:

— Կարող էր բարի լինել, բայց... անձանթ թը չաւարտեց խօսքը, սկսեց աչք ածել իր շուրջը, զգուշանալով, մի գուցէ մի ուրիշ լսող լինէր:

— Ուրեմն ոչինչ չը չինեցիք... հարցրեց մէլիքը անհամբերութեամբ:

— Ոչինչ... և անկարելի էր մի բան անել...

— Ի՞նչու...

Անձանթը սկսեց հաղիւ լսելի ձայնով պատմել, թէ ինքը ամեն հնարներ գործ դրեց, բայց չը յաջողեցաւ... Այն օրից, որ գերիները բերված են, ասաց նա, խանումը (խօսքը Սիւրբի մասին էր) մի առանձին խնամքով հոգ է տանում նրանց վրա: Իրան կատկածելի չանելու համար, խանումը իր հոգատարութիւնը ծածուկ յանձնել է Ահմէդ ներքինապետին: Այդ ծերունի աղուէսը այն ատիճան խորամանկ է, որ սատանային այնպէս կը նալէ, որ ոչինչ չի զգայ: Նա խանումին կուռքի նման պաշտում է: Եթէ խանումը ասէ՝ գնա քուրի կամ՝ կրակի մէջ ընկիր, նա առանց ծպտուն հանելու, կը կատարէ:

Ահմէդը ոչ միայն կերակրում էր զերիններին, այլ գիշերները այցելում էր նրանց մօտ և պահապաններ էր նշանակում հսկելու, որ նրանց զըլխից ոչ մի մազ չը պակսի: Անկարելի էր նրանց մօտ մտնել: Պահապանները բոլորը Ահմէդի մրտերիմներն էին, հազար թումանի համար նրան չեն դաւաճանի: Բացի զրանից, Ահմէդը խանի մօտ մեծ նշանակութիւն ունի, բոլորը նրանից վախենում են:

Որքան առաջ էր գնում անծանօթը իր պատմութեան մէջ, մէլիքի դէմքը աւելի և աւելի մրաւայլում էր, նրա շրթունքը դողդողում էր և աչքերում վառվում էր կատաղութեան կրակը: Անիրաւ աղջիկը հասցրեց նրան երկրորդ հարուածը և այդ աւելի սաստիկ էր: Նա զրկեց հօրը իր թանգագին յայտերից. նա ոչնչացրեց հօր բոլոր պլանները, որ այնքան մեծ աշխատութեամբ յորինել էր նա....

— Շնորհակալ եմ, Յիւսէին, խօսեց մէլիքը զսպելով իր բարկութիւնը, — դու դարձեալ արել ես, ինչ որ կարող էիր անել, եթէ չը յաջողվեցաւ, դրանում դու մեղաւոր չես: Նա դարձեալ կը տամ քեզ այն, ինչ որ խոստացել եմ:

Նա հանեց իր զրպանից մի քսակ և մեկնեց թուրքին. վերջինը հրաժարվեցաւ ընդունել: Մէլիքը երկար թախանձում էր նրան, յայտնելով, թէ շատ կը վշտանայ, եթէ նա մերժէ ոսկիները,

և դարձեալ յիշեցրեց, թէ ինքը Յիւսէյնի յանձն առած պարտքը կատարած է համարում, իսկ անաջողութիւնը պէտք է վերաբերել նրանից անկախ պատճառների: Թուրքը ընդունեց ոսկիները, և զըլխ տալով, հեռացաւ: Նա խանի ախոռապետն էր, որ մի ժամանակ դահճի պաշտօն էր կատարում: Իր ծառայութեան ընթացքում ուղիղ հազար մարդիկ մորթելուց յետոյ, նա մի ներքին սահաւատութեամբ զղջացաւ, թողեց այդ արիւնոտ պաշտօնը և իր դանակը թաղեց գերեզմանատան մէջ, ինչպէս լաւ որսորդները թաղում են հողի մէջ իրանց հրացանը հազար երէ սպանելուց յետոյ: Բայց Յիւսէյնը, որ այժմ իրան տուած էր չափազանց արբեցութեան, չը կարողացաւ պահել իր ուխտը, և մէլիքը օգուտ քաղելով նրա դրութիւնից, կարողացաւ կաշառել նրան, կատարել տալու մի նոր եղեւնահործութիւն, մանաւանդ, որ նա մի քանի օր առաջ խաղի մէջ տանել էր տուած բաւական խոշոր գումար, և մէլիքի խոստացած ոսկիներին շատ կարօտութիւն ունէր: Բայց բոլորը անցաւ իզուր... բոլորը ոչնչացաւ Սիւրիի բարեսրտութեան առջև... և այդ աւելի կատաղեցնում էր մէլիքին, որ հարադատ աղջիկը խոչնդոտներ էր տարքում նրա դէմ...

Գաւիթ ուրացողը երկչոտ էր, ինչպէս լինում են ամեն նեւագաւոր մարդիկ, որոնց բոլոր զօ-

րութիւնը ամփոփված է լինում մտաւոր ուժի մէջ: Նա զուրկ էր արութիւնից, նա զուրկ էր քաջութիւնից, բայց այդ չէր արգելում նրան միշտ խրած ունենալ մի զոյգ ատրճանակ գօտիի մէջ և միշտ կողքից քարշ ընկած ունենալ իր երկայն թուրը, որին երբէք չէր գործ ածում: Բայց նա սովորութիւն ունէր միշտ պարծենալով խօսել իր երեւակայական քաջագործութիւնների վրա և հաւատացնել, թէ ոտքի կաղութիւնը առաջ էր եկել հրացանի գնդակից, որը զեռ դուրս բերված չէր, թէ և մօրից կաղ ծնված «չօլախ» Գաւիթը բոլոր տաթևացիներին ծանօթ մի անձնատրութիւն էր:

Տխուր յուսահատութեան մէջ հասնաւ նա այն վրանը, որ նշանակված էր նրա համար իջևան: Այստեղ սպասում էր նրան մի երկրորդ մարդ: Նա քարձրահասակ, ցամաք կաղմուածքով և բաւական շնորհալի դէմքով մի ծերունի էր, որի սպիտակ, փառահեղ մօրուքը, ներկված լինելով հինաշով, տաացել էր ծիրանի գոյն: Նա նոյնպէս խրած ունէր իր քիրմանի շալի թանգագին գօտիի մէջ մի զոյգ ատրճանակ և երկայն թուրը, արծաթէ կօթով և արծաթէ պատեանով, դրած էր ծնկներին վրա: Նա ծալապառիկ նստած էր նախշուն գորգի վրա և թիկն էր տուած կարմիր մախմուրով պատած փափուկ մութաքաներին, որ բերված էին խանի հանդերձատնից յարգելի հիւրերին պա-

տուելու համար: Տեսնելով Գաւիթին, նա անհամբրութեամբ հարցրեց.

— Ի՞նչ լուր բերեցիք...

Գաւիթը թագգրեց նրանից, թէ Սիւրին, իր աղջկիւր, չընդունեց նրան, չը կամեցաւ տեսնվել հօր հետ: Այդ անպատուութիւնը կարող էր պակասեցնել Գաւիթի կշիռը իր խօսակցի աչքում, կարող էր կոտրել նրա համարումը: Գաւիթը սովորութիւն ունէր պարծենալ իր աղջկանով և ամենին ցոյց տալ, թէ նրա միջնորդութեամբ ամեն զժուարին գործ իր ձեռքում հնարաւոր էր, որովհետեւ Ֆաթալի-խանի սիրելի խանումը նրա աղջկին էր, և ամեն բան անել կը տար իր ամենակարող ամուսնին: Սիւրիի հետ չը տեսնվելու պատճառը, ասաց նա, տիկնոջ մի փոքր տկարութիւնն է, որի համար նա ոչ ոքի չէ ընդունում պսօր: Բացի դրանից, ասաց նա, այս գիշեր պատահել է տիկնոջ հետ մի անախորժ դէպք, և հազորդեց նրա մագերի կտրվելու պատմութիւնը, աւելացնելով, թէ այդ շատ լաւ է պատահել, որովհետեւ դրա համար գուցէ կարտաքսվեն խանի հարեմից մի քանի անդգամ կնիկներ, որոնք միշտ նախանձվում էին Սիւրիի փառքին: Գաւիթը դահճից ստացած տեղեկութիւններին, Գաւիթը ասաց, թէ դահճը ոչինչ չէ կարողացել յաջողացնել... միայն թագգրեց, որ արդէլառիթը եղել է Սիւրին...

—Կա շատ վատ է... պատասխանեց ծիրանի մօրուքով մարդը և ընկղմվեցաւ խորին մտածութեան մէջ: Նրա բազմահոգ զէմքից երևում էր, որ խնդիրը խիստ ծանր և կարեւոր էր, թէ շուտով պիտի ոչնչանային ահագին յոյսեր, թէ այդ յոյսերը կախված էին մի պատահու մահից... որը չը յաջողվեցաւ....

Այդ փառահեղ մարդը Կարմիր վանքի կամ Երիցվանիկ աւանի մէլիք Ֆրանգիւլն էր. հայոց հարուստ և ազդեցութեան տէր իշխաններից մէկը:

— Այդ վատ եղաւ... կրկնեց նա փոքր ինչ վերդովված ձայնով. — Դրանից յետոյ մեզ ինչ է մնում անել... ես յոյս ունէի, որ Բիւսէյինը (դահիճը) կը կատարէ մեր ցանկութիւնը... բայց բոլորը ոչնչացաւ....

✓ Նա սպասում էր Գաւիթից ստանալ մի մխիթարական պատասխան, բայց այս վերջինը, չը նայելով իր սատանայական խորագիրութեանը, այն աստիճան չփոթված, այն աստիճան մոլորված էր մտքով, որ չը գիտէր, թէ ինչ խորհուրդ պէտք էր տալ:

Այդ երկու հայ մէլիքները հագնված էին բոլորովին պարօից աւագների ձևով. զլխներին դրած ունէին բուխարայի սև մօրթից երկայն գդակներ, հագել էին նուրբ մետաքսից կարմիր գոյնով կ ա բ ա յ (պատմուճան), որ իջնում էր

ծնկներից ցած, և նր՛ջն վրա կանաչ մահուդից ջիւ բ բ ա յ (վերարկու), որ համառոմ էր մինչև գետին: Մէջքները պնդած էին Գիրմանի գոյն-զգոյն շալից հատտ դօտիով: Երկուսի էլ զլուխների մագերը բոլորովին ածեղած էին, թէև հայերը սովորութիւն ունէին ածիլել գագաթի մէջ տեղը միայն: Երկուսի էլ մօրուքները և ձեռները ներկված էին հինայով: Երկուսն էլ խօսում էին պարսկերէն, երբ սպասուողը ներս Լր մտնում և նրանց զէյլան էր մատուցանում ծխելու համար: Բայց երբ նա դուրս էր գնում, սկսում էին հայերէն խօսել, որ հասկանալի չը լինի:

— Կեռ յոյս կայ... ասաց Գաւիթը խորհրդաւոր կերպով. — այսօր Թորոս իշխանը պիտի գայ գերիները դնելու. մենք ամեն հնար պէտք է գործ դնենք, որ նա չը կարողանայ գնել:

— Ի՞նչ հնարք, հարցրեց մէլիք Ֆրանգիւլը, դարձեալ յուսահատ մարդու եղանակով:

— Մենք պէտք է աշխատենք համոզել խանին, որ նա նշանակէ գերիների համար մի այնպիսի մեծ փրկանք, որ Թորոս իշխանը չը կարողանայ վճարել:

— Դրանով ինչ կը շահենք:

— Դրանով կը շահենք մի քանի օրեր, գուցէ մի քանի շաբաթներ, և այդ ժամանակի ընթացքում շատ բան կարելի է անել...

«Ուրացողի» խորհուրդը բոլորովին նպատակա-

յարմար էր գտնում մէկը Ֆրանգիւլը: Նա
այնքան ուրախացաւ, որ քիչ էր մնում, պիտի
գրկէր և համբուրէր խորամանկին, բայց իր հը-
պարտութիւնը թոյլ չը տուէր այդ աստիճան
թեթեւ լինել: Նա հարցրեց.

— Դուք հաստատ գիտէք, որ թորոսը այսօր
գալու է:

Նա թորոս իշխանին, Չաւնդուրի ամբողջ գա-
ւառի տիրոջը, լոկ անուշով միայն թորոս էր
կոչում, կարծես, «իշխան» տիտղոսը այրում էր
նրա լեզուն: Հայերից իշխան, բայց իրանից,
ուրիշ ոչ ոք չը պիտի լինէր, — այդ էր այդ փա-
ռասէրի ուխտը:

— Գիտեմ, պատասխանեց Գաւիթը, ինքն էլ
հետեւելով մէլիքի եղանակին, — հաստատ գիտեմ,
որ թորոսը այսօր գալու է: Նրան հիւրասիրելու
համար խանի խոհանուցում մեծ պատրաստու-
թիւններ էին տեսնում:

Վերջին խօսքերը աւելի ղայրացրին մէլիք
Ֆրանգիւլին. պատրաստութիւններ էին տեսն-
վում պատուելու այն մարդուն, որին ատում էր
ինքը, որի թշնամին էր. որը այսօր պիտի գար
գնելու մի դերի, որի մահն էր ցանկանում ինքը...

— Ուրեմն պէտք է շտապել խանի մօտ, ասաց
նա, աշխատելով սառնասիրտ երեւալ. — քանի
դեռ այդ անպիտանը չի եկել, պէտք է խանի
հետ խօսել ինչ որ հարկաւոր է:

— Նա ճաշից առաջ չի գալ, պատասխանեց
Գաւիթը. — մենք մի քանի ժամ ունենք մինչև
ճաշ, այսու ամենայնիւ, պէտք է շտապել...

Երկու մէլիքները հագան իրանց թանգազին վե-
րարկունքը, որոնց եղերքը զարդարած էին ոս-
կէ թելերով. կապեցին իրանց արծաթապատ
թրերը և սկսեցին դիմել դէպի խանի վրանը,
խափանելու հարկւրաւոր հայ գերիների փրկու-
թիւնը, որ ընկած էին մահմեդական բռնապետի
ձեռքը... Մէլիք Ֆրանգիւլը, իբրև աւագ, զը-
նում էր առաջ, իսկ մէլիք Գաւիթը, որպէս նը-
րանից աստիճանով կրտսեր, գնում էր նրա ե-
տեից: Նրանց հետեւում էին մի խումբ ծառաներ,
որոնց պարսկական սովորութեամբ իրանց հետ
ման էին ածում: Ծառաները բոլորն էլ մի — մի
սուր ունէին կապած, իսկ իրանց մնացած զէն-
քերը թողել էին իջևանում, որ յատկացրած էր
երկու մէլիքների ծառաների համար: Հանդիսա-
ւոր «սալամը» առաջ էր ընթանում և ճանապար-
հին ու որ հանդիպում էր, նրանց զուգի էր տա-
լիս: Մէլիք Գաւիթը երբէք իր կիսանքում այս-
պիսի եռանդոտ ոգևորութեամբ չէր դիմել դէպի
մի ձեռնարկութիւն որպէս այսօր: Նա պիտի
աշխատէր խափանել հարկւրաւոր հայ գերիների
ազատութիւնը, նա պիտի ամեն ջանք գործ դը-
նէր մահել, ոչնչացնել նրանց խանի բանտերի
մէջ: Մէլիք Ֆրանգիւլը մի և նոյն չար դիտաւո-

բութիւնն ունէր, վրէժխնդրութեան մի և նոյն ախորժ տրամադրութեան մէջ էր գտնվում նա: Դրանք այնտեսակ մարդիկներէն էին, որոնց մեծ հաճութիւն է պատճառում գաղանային եղեռնագործութիւնը, մանաւանդ երբ գործի մէջ խառն էին շահի, փառքի և տիրական նպատակներ...

Է.

Վանանոցի չատրներէն փոքր ինչ հեռու կազմված էին երկու վրաններ, նրանցից մէկը փառաւոր, ընդարձակ և գեղեցիկ էր, իսկ միւսը փոքր և հասարակ: Առաջինի բարձր, նիզականման սիւնները զարդարած էին ոսկէզօծ և գոյնըզգոյն նկարներով: Ներսը ունէր մի քանի բաժանմունքներ, որ ձևացնում էին մի փոքրիկ պալատ իր բոլոր յարմարութիւններով: Այնտեղ կար հիւրանոց, առանձնարան, քնարան, դիւանատուն, դանձարան և այլն: Բաժանմունքների վայելչութեան համեմատ, վրանի աստառը պատած էր Քիչմիրի թանգազին շալերով, Սպահանի ոսկեհուռ զարբաֆներով կամ շնդկաստանի մետաքսեայ նուրբ գործուածքներով: Յատակը պատած էր Ֆէրահանի նաշխուն գորգերով: Թագաւորական փառքի վայելչութիւն ունեցող այդ վրանը դրսից ֆէրուզայի միակերպ գոյն ունէր և կարված էր Գաշանի ամուր, անթափանցիկ զադաքից: Նրա միջնասիւնի գլխին ծածանվում

էր մի կարմիր զրօշակ, որի վրա նկարված էր մի աջ դա Աքութալէրի որդի Ալիի զօրաւոր ձեռքն էր, որ առաջնորդում էր խանին նրա բոլոր յաղթութիւնների մէջ: Վրանի առջև զցած էին մի քանի երկաթեայ թառիկներ, որոնց վրա հանդարտ, խոհական կերպարանքով նստած էին որսորդական բազէների ամենաբնասիր տեսակները:

Գեղեցիկ թարլանը հպարտ վեհանձնութեամբ նայում էր իր շուրջը, կարծես, կամենալով ցոյց տալ իր պարանոցի թանգազին մանեակը, որ զարդարած էր խոշոր արմատներով: Բոլոր բազէները ունէին այսպիսի մանեակներ, և խրաքանչիւրի արժանաւորութեան համեմատ, զարդարած էին գոյնզգոյն գահարներով: Նրանց ոտներին կապած էին ոսկեայ փոքրիկ բոժոժներ, որոնք ամեն մի շարժման ժամանակ ճընկճընկում էին, մեղօղիական մեղմ ձայներ էին արձակում: Մի ծիտ, մի աղաւնի օղի միջով անցնելու ժառանգ, նրանք իսկոյն բաց էին անում իրանց լայն թեքերը, և նետի նման սլանում էին դէպի վեր, որ բռնեն, որ գիշատեն նրան: Բայց մետաքսեայ ոտնակապը կրկին ցած էր քաշում նրանց և նստեցնում էր երկաթեայ թառիկների վրա: Այս շատակեր թռչուններին շատ չէին կերակրում, և միշտ անյագ էին պահում, որ որսորդութեան ժամանակ աւելի սաստիկ ախոր-

ժակ ունենալու և գիշատելու: Այսպէս պահում էր խանը և իր ծառաներին, այսպէս պահում էր և իր որսորդական շներին: Այս վերջինները, թէ շները և թէ ծառաները, թիւ չունէին: Այնտեղ կարելի էր տեսնել արագավազ բարակներ, թանգագին վզնոցներով, որոնց նուրբ կաշմուածքը բաղկացած էր միայն ամուր օսկրներից, զօրեղ մկնակներից և կարճ մազերով պատած կաշուց. կարծես, մսի մի փոքրիկ քանակութիւնն անգամ դրանց մարմնի մէջ կարող էր արգելել այդ թիւթեաշարժ անասունների արմթացութիւնը: Այնտեղ կարելի էր տեսնել փոքրիկ, կատուի չափ, խորամանկ, չարածճի թուլաներ, որոնք սատանայի նման ամեն ծակ կարող էին մտնել, որոնք հոտոտալով, կարող էին գտնել թագնւած երէի հետքը: Այնտեղ կարելի էր տեսնել լայնականջեայ եւրօպացի շներ, որոնք թէ ցեղով և թէ սովորութեամբ, ասիականացել էին և աւելի գաղանային բնաւորութիւն էին ստացել: Այնտեղ կային թանձր մազերով, ահագին, գայլանման գամփունք, որ մի հարուածքով կարող էին ջարդել ամենազօրեղ եղջերուի մէջքը, և իրանց ճանկերի մէջ կարող էին խնդրել ամենի վարդին: Ծառաները, թէ իրանց հոգեկան և թէ բարոյական յատկութիւններով ամենեկին չէին զանազանւում շներից: Զանազանութիւնը միայն նրա մէջն էր, որ

շները որսում էին իրանց նման անասուններ, իսկ ծառաները որսում էին իրանց նման մարդիկ: Ամենի մէջ տիրում էր մի և նոյն անգլթութիւնը, մի և նոյն գաղանային անյագութիւնը արիւն լափելու...

Բոլոր ծառաները հազած ունէին սև զաւաքից արխալուղ, իսկ նրա վրա տեղային կոշտ մահուդից կարւած, մոյգ-մոխրագոյն գէյմայ. մէջքները պնդած էր կաշեայ զօտիով զարդարած արծաթեայ կապանքներով, որից քարշ էր ընկած լէկզու դաշոյնը: Գլխներին դրած ունէին գառան մորթից կարած ահագին փափախներ, իսկ ոտներին հազած ունէին տրեխներ կաշեայ զանկապաններով: Կեղատուութիւնը, անմաքրութիւնը տիրում էր նրանց վրա: Խնչպէս վայրենի խափշիկները որ և իցէ իւզալի բան ուտելու ժամանակ իրանց իւղոտ ձեռքերը քսում են մերկ մարմնի վրա, որ օժեն նրան, այնպէս էլ այդ կիսավայրենիները իրանց իւղոտ ձեռքերը այնքան քսել էին արխալուղների վրա, որ նրանց նիւթը կոկիւղէ, վայլում էր մուշամբայի նման:

Խանի վրանի առջև տալաւածված էր ընդարձակ, կանաչազարդ հրապարակ, որի վրա ամբողջած էր, վըժվըժում էր բաղմութիւնը: Ամենքը անհամբերութեամբ սպասում էին խանի դուռն գալուն: Ոմանք գործով էին եկած, ոմանք վէճ ունէին, նրանից դատավճիռ էին սպասում, ոմանք հե-

տաքերի նայողներ էին, իսկ մի մասը նրա ծառաներն էին: Եր սպասում էին, խանը նրանց մի ծառայութիւն յանձնէ, որից կա բողոքանալ չափել:

— Զարբար, ասաց ծառաներից մէկը խանի բազէակրներից մէկին, — այսօր խանը շատ ուշացաւ, չէ դուրս գալիս:

— Իրա քէֆը չէ, երբ կուզէ, այն ժամանակ կը դուրս գայ, ով է նրան ստիպողը, պատասխանեց Զարբարը, և սկսեց՝ փայփայել բազէի փետուրները, որ նստած էր նրա, մինչև արմուկը կաշեայ ձեռնոցով պատած, բազուկի վրա:

Մշտան, նկատելով, որ իր հարցմունքը վատ տպաւորութիւն գործեց բազէակրի վրա, խօսքը փոխեց, հարցնելով.

— Ն՞րբ պիտի բաց անէք այդ բազէի աչքերը:

Եւ իրաւ, բազէի աչքերը կապած էին մի տեսակ կաշեայ անթափանցիկ ակնոցներով, որոնց նմանը կրում են մարդիկ քամու ժամանակ, աչքերը փօշուց պահպանելու համար: Բազէն դեռ անվարժ էր, այդ դրութեան մէջ նրան պահում են մի քանի ամիս լոյս և աշխարհ չէ տեսնում, մոռանում է իր վայրենի անցեալը, յետոյ աչքերը բաց են անում, փոքր առ փոքր ընտելացնում են նոր կեանքի, վարժեցնում են որսորդութեան:

Խանի ամբողջ զիւանը հրապարակի վրա սպա-

սում էր նրան: Մի տեղ գետնի խոտերի վրա նստած էր Ֆարրաշբաշին (Ֆարրաշների կամ ժանդարմների գլխաւորը) աչքերը արիւնով և անգթութեամբ լցված մի մարդ: Նրա շուրջը խմբով կանգնած էին անողորմ ֆարրաշները, ձեռները իրանց դաշոյնի վրա դրած: Գանգատաւորները, հաւաքված այնտեղ, աղաղակում էին, խնդրում էին ֆարրաշբաշուն, որ իրանց դատը յայտնէ խանին: Շատերը մօտենում էին, չոքում էին նրա տուջ, և ականջին փսփսալով, կաշառք էին խոստանում: Մի տեղ նստած էր խանի գլխաւոր մունչի-բաշին, այսինքն՝ միրզաների կամ գրագրների մեծաւորը: Նա մի մաշված, ցամաք մարդ էր, և յաճախ աֆիօն ընդունելուց դէմքը դեղնել, դալկացել, մեռելի գոյն էր ստացել: Նրա հաստ գօտիի մէջ, առջևից խրած թղթերի փաթոթները բովանդակում էին իրանց մէջ խանի ամբողջ արխիւը, որ նա իր գօտիումն էր ման ածում: Այնտեղ էին տուրքերի, հարկերի հաշիւները, այնտեղ էին պաշտօնական թղթերի օրինակները, այնտեղ էին դատերի, վճիռների արձանագրութիւնները, — բոլորը թղթերի կտորտանքի վրա գրած, և խառն, անկարգ կերպով, խողովակի ձևով, միմեանց վրա փաթաթած: Նոյն գօտիի մէջ խրած էր նրա երկայն, նախուհի թանաքամանը իր բաղմաթիւ եղէգնեայ գրիչներով: Նոյն գօտիից քարշ էր ընկած բազ-

մաթիւ կնիքների մի փունջ, հազիկ կոչված քարի վրա փորված, և արծաթի կոթերով բռնված: Մունչի-բաշիի շուրջը հաւաքված էին իր ստորադրեալ միրզաները (զրազիրները): Նրանք էլ ունէին իրանց դօտիւ մէջ թղթերի փաթոթներ և թանաքամաններ: Այստեղ նոյնպէս բազմութիւնը զանազան խնդիրքներով դիմում էր մունչի-բաշիին՝ խանի գլխաւոր քարտուղարին, այս և այն թղթերն էր պահանջում: Այստեղ նոյնպէս շատերը մօտենում էին, չուքում էին նրա առջև և ականջին բաներ էին փսփսում...

— Այս մարդու թուղթը պատրաստ չէ, դառնում էր նա զրազրներից մէկին:

— Պատրաստ է:

— Ինչո՞ւ չէք տալիս:

— Գեւ ը ու ու մը չեմ ստացել:

Բուսումը այն ընծան էր, որ պիտի տար թղթի ստացողը զրազրին: Յետոյ սկսվում էր երկար սակարկութիւն այդ ընծայի քանակութեան մասին: Աշառակերութիւնը կատարվում էր հրապարակաւ, որովհետեւ դա ընդունված մի սովորութիւն էր:

Բազմութեան մէջ մի գորդոց ընկաւ և զէպի ամեն կողմ տարածվեցաւ խուլ շշուճ՝ «խանը դալիս է»: Բոլորը ոտքի վրա կանգնեցան:

Կանանցի. կողմից յայտնվեցաւ խանը: Նրա առջևից ընկած էին մի խումբ շաթրներ, իսկ

ետեից դալիս էին մի խումբ ֆէրբաշներ: Ինքը միայնակ, մէջ տեղում, վառվում էր ոսկու, արծաթի և գոհարների մէջ:

Մինչև դիւանխանէն հասնիլը բաւական տարածութիւն կար: Մի քանի տեղ կանգնեցրին նրան:

— Խան, քո ոտներին մատաղ լինենք, — խընդիր ունենք... ձայն տուեցին մի քանի հոգի, որ ճանապարհի ելքում չուքած, անդադաբ համբուրում էին գետինը:

Գրանք դիւղացիներ էին, որ կռիւ էին ունեցել ուրիշ դիւղացիների հետ, մի քանիսը վիրաւորված էին, և վէրքերի արիւնը տեսնվում էր նրանց հագուստի և երեսների վրա:

— Ֆարաշբաշի, հրամայեց խանը իր ժանդարմների գլխաւորին, — մարդիկ կուղարկես, բռնել կը տաս այն չարագործներին, և քանի հոգի որ լինեն, իւրաքանչիւրից քսան թուման ջարբի մալ (տուգանք) առնել կը տաս, լաւ պատժելուց յետոյ:

Գանդատաւորները գետինը համբուրելով, սկսեցին գոհութիւն յայտնել և օրհնել խանի կեանքը: Խանը անցաւ:

— Ձեր ոտներին մատաղ լինեմ, ասաց ֆէրբաշ-բաշին հաղիւ լսելի ձայնով. — միւս գիւղացիների մէջ նոյնպէս վիրաւորներ կան և երկու հոգի սպանված են...

Ո

—Այդ մի և նոյն է, պատասխանեց խանը,— որովհետեւ գրանք առաջ դանդաղեցան, պէտք է գրանց դատը վճռել. յետոյ կը լսենք, թէ միւսները ինչ են ասում...

Պարսկական դատաստանի կէտից շատ ճիշտ էր խանի վճիռը: Երկու գիւղի մարդիկ միմեանց հետ կռուել էին. մի կողմը շտապեց, դանդաղեցաւ և բաւականութիւն ստացաւ: Երբ կը յայտնվէր միւս կողմը, նրան էլ «կը լսէին», այն ժամանակ առաջինների պատիժը գուցէ աւելի սաստիկ կը լինէր. և այսպիսով երկու կողմն էլ «ջարիմայ» վճարած կը լինէին, և այդ աւելի օգտաւէտ էր խանի դանձարանին:

—Խան, քո ոտներին մատաղ, խնդիր ունենք... ձայն տուեցին մի քանի հոգի, որոնք նոյնպէս ճանապարհի ելքի վրա չոքած համբուրում էին գետինը:

Գրանք նոյնպէս գիւղացիներ էին, որոնց ոչխարները գողացել էին. բայց գողը յայտնի չէր. ոչխարների տէրերը «կասկած» էին յայտնում գող Գէրիմի վրա, ասում էին նրա գործն է: Խանը հրամայեց Գէրիմին կալանաւորել, ոչխարները առնել, իրանց տէրերին յանձնել, և յիսուն թուման էլ «ջարիմայ» առնել Գէրիմից յօգուտ դանձարանի: Արդեօք Գէրիմը յանցաւոր էր այդ գողութեան մէջ, թէ ոչ,—քննութիւն չեղաւ: Քննութիւնը միշտ մնում էր վճռից յի-

տոյ: Այսինքն, երբ Գէրիմից ոչխարները կառնէին գիւղացիներին կը յանձնէին, և յիսուն թուման էլ «ջարիմայ» կառնէին յօգուտ դանձարանի,—այնուհետեւ երբ կը յայտնվէր, որ Գէրիմը մեղաւոր չէ, այն ժամանակ կրկին ոչխարները գիւղացիներից կառնէին և կը տային Գէրիմին, և յիսուն թուման էլ նրանցից «ջարիմայ» կառնէին, որովհետեւ սուտ ասեցին: Այսպիսով երկու կողմից էլ դանձարանը կը շահվէր, բացի գրանից, ոչխարները անղաղար մէկից առնելով և միւսին տալով, ամեն անգամ «դահեք» (տասանորդ) կը վեր առնէին նոյնպէս յօգուտ դանձարանի:

Այսպէս, խանը մինչև իր զիւանխանէն կամ դատարանը հասնելը, ճանապարհին, ոտքի վրա, մի քանի գանդատներ լսեց, մի քանի վճիռներ տուեց, բոլորը մի խօսքով, բոլորին բոլեական ուշադրութիւն դարձնելէն յետոյ: Գրտում, բաց օդի մէջ, աւելի հեշտ էր դատախազներին իրանց բողոքները նրա ահանջին հասցնել: Բայց երբ նա մտնում էր իր զիւանխանէն, այն ժամանակ բոլորովին անմատչելի էր դառնում: Գանդատաւորը պէտք էր ֆաբրաշքաշուն զիմէր, մունչիւրաշուն զիմէր, և ով է իմանում, հարիւրաւոր շունուղայի պէտք է զիմէր, մինչև նրան թոյլ կը տային մերձենալ խանին և իր գանդատը յայտնել: Բայց մինչև այդ թոյլտուութիւնը ստա-

նալը, նա ստիպւած էր ամենին «փիշքէնէր» տալ...

✱ Խանը արդէն մօտեցել էր ղիւանխանէին: Ամբոխը ամեն կողմից յետ էր քաշվում և մինչև գետին զլուխ էր տալիս: Ֆէրրաշները իրանց ձեռքի վարոցներով գանակոծում էին հանդիպողին, ով որ փոքր ինչ ուշ էր շարժվում և ճանապարհ չէր բաց անում: «Բրօ... բրօ... (հեռացիր, հեռացիր) գոչում էին շաթրները: Նրկիւղը և սարսափը, տենդային ցնցումների նման, անցնում էին ամբողջ ամբոխի մէջ: Մի մեռելային լուսթիւն ավրել էր այդ ահագին բազմութեան վրա, միայն լսելի էին լինում ֆէրրաշների ու շաթրների զգուշացուցիչ ձայները: Յանկարծ հեռուից մի աղաղակ բարձրացաւ և ամբոխի ուշադրութիւնը դարձաւ դէպի այն կողմը:

— Այրվեցան... այրվեցան... հայերը այրվեցան... լսելի եղան խուլ ձայներ:

Կարծես, մի ահագին հրդեհ բոցավառվում էր խանի ղիւանխանէից փոքր ինչ հեռու: Թանձր ծուխը, խառն հրեղէն ալիքների հետ, բարձրանում էին դէպի երկինքը:

— Այդ ինչ է այրվում, հարցրեց խանը, կանգնելով ղիւանխանէի առջև:

— Հայեր են... պատասխանեց ֆարաշբաշին, այնպիսի մի սովորական եղանակով, կարծես թէ, այրվող նիւթը փայտ, խոտ կամ յարդ լինէր:

Ֆէրրաշները հրամայեցին ամբոխին յետ քաշվել, որ խանը տեսնէ այդ տարօրինակ տեսարանը:

Բոցերի և թանձր ծխի միջից երևում էին մի քանի մարդիկ. մայրը գրկել էր իր երեխան, ծերունի հայրը ընկած էր որդու բազուկների վրա. մի քանիսը, անշարժ կանգնած, ձեռքները դէպի երկինք բարձրացրած, գոչում էին՝ «գթութիւն... գթութիւն... մի քանիսը ընկած էին գետնի վրա, ձայն չէին հանում... Տեսարանը սոսկալի էր: Այրվում էին կենդանի մարդիկ: Այրվում էին ամբողջ մարմնով, իւրի մէջ թաթախած պատրոյցների նման: Ոչ ոք չէր մօտենում այդ տարօրինակ հրդեհը չիջուցանելու համար: Նա պիղծ էր, նա կարող էր ուղղափառ մահմեդականին պղծել: Բոցերը փոքր առ փոքր լափում էին նրանց և կանգնածները գլորվում էին ցած: Մի մարմին ընկնում էր ուրիշ մարմնի վրա և ձեռքները էր դիակների մի կոյտ—մի մարդկային խարոյկ, որ աւելի հեշտ կարող էր վառվել: Բոցերի միջից դեռ լսելի էին լինում խուլ հառաչանքներ, շարժվում էին ձեռքեր, որ բարձրանում էին դէպի սառնասիրտ երկինքը... Մեղմ քամին տարածում էր ճենճերային խանձանոտութիւնը դէպի ամեն կողմ: Գա մի կատարեալ մարդաղոհ էր, որ նուիրվում է աստուածներից ամենամեղութիւն:

Այրվում էին կանայք, երեխաներ, այրվում

էին աշխարհներ և առողջ տղամարդիկ: Այդ սարսափելի ողջակէզը կարող էր ամեն մարդու վրա սոսկալի տագնապութիւն գործել, բայց խանի մէջ նա բարձրացրեց ծիծաղ և մի տեսակ գազանային դուարձութիւն: Նա առանց ժպտելու չէր կարողանում նայել այդ սիրտ կտրատող տեսարանի վրա, որպէս Ներօնը նայում էր Հոօմի Նրդեհին: Նա զարմանում էր այդ թշուառների սատանայական հնարադիտութեան վրա, թէ ինչ խորամանկ միջոց էին ընտրել դարձնելու իրանց վրա խանի բարձր ուշադրութիւնը: Նրանք գանգատաւորներ էին: Մի քանի ամբողջ ամիսներ դեղերովում էին խանի չատրների մերձակայքում, բայց ոչ ոք թոյլ չէր տալիս նրանց մօտենալ և իրանց գանգատը յայտնել խանին: Զուսահատութիւնը ստիպեց զիմել այսպիսի սոսկալի ձեռնարկութեան: Նրանք օծեցին իրանց մարմինը և հագուստը նաւթով, նրանք անցկացրին իրանց պարանոցը նոյնպէս նաւթի մէջ թաթալւած հասիրներ, և կրակ տուեցին... Այդ բոլորը խիտ ծաղրաշարժ էր թուում խանին:

Մարմինները դեռ ծխում էին: Թանձր մուխը պատել, պաշարել էր նրանց: Նրբեմն միայն բարակ լեզուների նման յայտնվում էին բոցերի գունատ շառավիղներ, զողզողում էին, պտոյտվում էին և իսկոյն մարում էին ծխի թանձրութեան մէջ: Ղրանք թշուառ զոհերի վերջին բո-

ղոքը, վերջին մրմունջն էին արտայայտում...

Հասարակութեան ուշադրութիւնը այդ միջոցին դարձրած էր դէպի մի մանկահասակ պատանի, որ չը կարողանալով դիմանալ կրակի զարհուրանքին, դուրս էր պլծել իր մօր դրկից և ընկած էր խարոյկից հեռու: Յանկարժ մի մարդ շուտ վրա հասաւ, ջրով թրջած իր վերարկուն շտապով ծածկեց նրա վրա, և այսպիսով հանգրեց նաւթի բոցերով բռնկված նրա հագուստից կրակը: Զեռ քաշելով վերարկուն, նա սկսեց խնամքով մերկացնել մանուկին, որովհետեւ կիսավառ հագուստը զարձեալ այրում էր նրա մարմինը: Մագերը և մինչև անգամ աչքերի թերթերունքը բռնորովին խանձված էին: Պատանին ուշաթափութեան մէջ էր գտնվում, բայց կեանքի նշոյլները իսպառ անհետացած չէին: Երեսի կաշին այրված էր, իսկ մարմնի վրա երեւում էին մի քանի մրկած տեղեր:

— Ի՞նչ պիտի անես այդ լակոտին, Ահմէդ, հարցնում էին նրա շրջապատողները:

— Ես նրան կառողջացնեմ և ինձ որդի կը շինեմ, պատասխանեց ծերունի ներքինապետը ծանրութեամբ:

— Գաւուրին, գոչեցին ամեն կողմից զգուսնեքով:

— Ես նրան մահմեդական կը դարձնեմ:

Թէև ծերունի Ահմէդը հաւատքով ծածուկ քրիս-

տոնեայ էր, բայց այդ խօսքը ասաց նա իր շրջապատողների մոլեռանդութիւնը չը գրգռելու համար: Լսելով թշուառ դիւղացիների արկածքը, նա շտապեց, եթէ կարելի կը լինէր, բոլորին օգնութիւն հասցնել. բայց մինչև իր դալը ամեն ինչ վերջացած էր.... Նա կարողացաւ ազատել այդ մանուկը միայն:

Բայց նրանից առաջ, երբ բոցերը ձարակում էին իրանց բոլոր դժոխային արհաւիրքով, երբ զոհերը մրմնջում էին, երբ թանձր ծխի միջից լսելի էր լինում «գթութիւն... դթութիւն»... հառաչանքը,—նրանց մօտից անցան հայոց ժողովրդի երկու ներկայացուցիչները՝ մէլիք Ֆրանգիւլը և մէլիք Գաւիթի: Նրկումն էլ Դսկոյն հասկացան եղելութիւնը և այդ թշուառների յուսահատ անձնասպանութեան դրդիչ պատճառները: Մէլիք Գաւիթի դէմքի վրա անցաւ տխրութեան մի ամպ, նա ամբողջ մարմնով սոսկաց, սիրտը ըսկսեց դողդողալ և ոտքերը սկսեցին կարկամիլ: Այդ խղճի և ցաւակցութեան զգացմունքը չէր, որ այսպէս շանթահարեց նրան. դա եղեռնագործի, դա չարագործի այն սոսկումն էր, որի զազանային խռովութիւնը անցնելուց յետոյ, յանկարծ տեսնում է իր աչքի առջև անմեղ զոհերը.... և նոր է հասկանում յանցանքի մեծութիւնը: Իրանց անձը այրողները տաթևացիներ էին, մէլիք Գաւիթի կառավարութեանը յանձն-

ված հարստահարեալներ էին: «Ուրացողը» այն աստիճան կողոպտել էր նրանց, այն աստիճան ծանրաբեռնել էր զանազան տուրքերով, որ վերջին ժամանակներում անկարող էին վճարել: Չարագործը նախ սկսեց ծախել տալ նրանց տնային կարասիքը, անասունները, իսկ երբ դրանք էլ սպառվեցան, սկսեց այնուհետև վաճառել նրանց զաւակները մահմեդականներին: Մի սյսպիսի բարբարոսութեան անկարող էր համբերել աղքատ և ապրուստի ամեն միջոցներից զրկված գիւղացին: Նա սովորած էր ինչքի և կայքի հարստահարութեան, բայց իր սիրելի զաւակների մահմեդական դառնալուն չէր կարող համբերել: Նա աւելի բարւոք կը համարէր, որ նրանք մեռնէին, օջնչանային, քան թէ կրօնափոխ լինէին: Մէլիք Գաւիթի անդթութիւնները կատարեալ զազանութեան էին հասնում: Նա տանջում էր հայերին աւելի քան մի թուրք, մի պարսիկ, կամ մի այլ մահմեդական: Անճարացած ժողովուրդը կամենում էր դիմել խանին, յայանել իր ցաւերը և արդարութիւն պահանջել:

+ Ժողովուրդը յոյս ունէր, որ բռնակալ խանի մէջ կը դռնէ աւելի գութ, աւելի մարդասիրութիւն, քան թէ մի հայ զաւաճանի մէջ, որ փառքի և պաշտօնի համար վաճառել էր մինչև անգամ իր կրօնքը: Բայց խորամանկ մէլիքը այնպէս փակել էր բոլոր մօռտքերը նրանց առջև,

որ ոչինչ հնար չէին գտնում իրանց բողոքը հասցնելու խանի ականջին: Ակսեալ ֆազրաշաշիից մինչև վերջին ծառայողը կաշառված էին մէլիքից, որ այդ գիւղացիներին թոյլ չը տան խանին մօտենալ: Մի երկրում, ուր ամեն դատ կատարվում էր բերանացի, կամայական կերպով, ուր դատաւորը մատչելի չէր ամենին, ուր ամեն գործ քննվում էր լոկ խօսքերով միայն, — այսպիսի հանդամանքներում զրանիկների բարեխօսութիւնը կամ նրանց չարախօսութիւնը, ի հարկէ, մեծ նշանակութիւն կարող էր ունենալ դանդաժաւորների վերաբերութեամբ: Գրանիկները կարող էին դէպի ամեն կողմ ծռել դատաւորի կամքը, որը մի և նոյն ժամանակ ժողովրդի տէրն էր: Գրանիկները կարող էին գործը այնպէս սարքել, որ իշխանը ամենակին տեղեկութիւն չը ստանար, թէ ինչ է կատարվում ժողովրդի մէջ: Չափազանց անկարգութիւնները կառավարութեան մէջ, միշտ ծնեցնում են ծայրայեղ միջոցներ նրանց բառաւուր համար, այն է ոչնչացնել անիրաւ իշխանութիւնը արդարութիւնը վերականգնելու համար: Բայց զրա համար ժողովրդի մէջ բաւական կեանք և բարոյական ուժ է հարկաւոր: Այդ ժամանակներում (և մինչև այսօր՝ Պարսկաստանի մէջ), ժողովուրդը այն աստիճան մեռած էր, որ սովորական իրերի կարգն էր անցել այն զրոյցը, թէ հասիր կը զցիւմ բողազս, կը գնամ

խանի դրանը, ինձ կայրեմ... Գա հարստահարված գիւղացու վերջին յուսահատական խօսքն էր, երբ կամենում էր, որ իր ցաւերի վրա ուշադրութիւն դարձնէին: Լուկրեցիան խէնջարը ցցելով իր կուրծքի մէջ, անձնասպան կղաւ և իր մահուամբ բողոքեց անբարոյական Հռօմի դէմ: Իսկ հայ գիւղացին մահմեդական իշխանի դրանը իրան այրելով, բողոքում էր տիրող բռնութեան դէմ:

— Այդ բանից վատ հոտ է գալիս... ասաց մէլիք Ֆրանգիւլը, դառնալով մէլիք Գաւիթին, երբ նրանց աչքին ընկաւ սոսկալի տեսարանը:

Մէլիք Գաւիթը ոչինչ չը պատասխանեց: Նա մտածում էր այն բանի վրա, թէ ինչ տպաւորութիւն կ'ունենայ այդ անցքը խանի վրա: Նա պատրաստում էր պատասխան նրա համար: Իր մտքում հարիւրաւոր պատճառներ էր հնարում, հարիւրաւոր փաստեր էր ստեղծում իրան արդարացնելու համար, երբ խանը բացատրութիւն կը պահանջէր նրանից սարսափելի անցքի մասին: Իսկ մէլիք Ֆրանգիւլին տանջում էր մի այլ միտք: Նա երկիւղ ունէր, որ գիւղացիների ինքնասպանութիւնը գուցէ կը շարժէր խանի մարդասիրական զգացմունքը և զրանով կը դժուարանար իրանց դիտաւորութիւնը հայ զերիների վաճառումը կամ խաղաւ խափանելու, կամ յետաձգելու մասին: Այդ նպատակով նրանք դի-

մում էին խանին, որ արգելեն հայ գերիները վաճառումը, և Թորոս իշխանին ձեռնթափ յետ դարձնեն, որը այսօր գալու էր գերիներին զնելու: Իսկ այդ անիծված գիւղացիները վատ ժամանակ ընտրեցին իրանց այրելու: Այսօր պէտք էր խանի անգթութիւնը իր գաղանային բորբոքման մէջ պահել: Իսկ այդ անիծված գիւղացիները փոքր ինչ մեղմացրին նրա բարբարոսութիւնը: Ո՞ւմ սիրտը չի ցաւի, տեսնելով երեխաներին և կնիկներին կրակի բոցերի մէջ... Այսպէս էր մըտածում մէլիք Ֆրանգիւլը, երբ նրանք հասան խանի վրանի մօտ:

Խանը դեռ կանգնած էր իր վրանի առջև և նայում էր, թէ որպէս մի քանի հրէաներ երկաթէ կարթերով, շան գէշերի նման, քննելին տալիս կիսախորով դիակները, տանում էին հեռու, ձգում էին մի փոսի մէջ և ծածկում էին հողով: Մահմեդականները չէին մօտենում նրանց, պիղծ էին համարում, այս պատճառով պիղծ ծառայութիւնը յանձնել էին նոյնպէս պիղծ հրէաներին, որոնք գործով եկել էին խանի բանակը:

Տեսնելով երկու մէլիքներին, որոնք հանդիսաւոր կերպով իր մօտ էին գալիս, խանը մի առանձին հեղնական ժպիտով դարձաւ նրանց, ասելով.

—Տեսա՞ք, ինչ արեցին այդ յիմար հայերը...
Երկու մէլիքները մինչև գետին խոնարհվելով,

զուլս տուեցին: Խանի ժպիտը քաջալերեց նրանց, և մէլիք Դաւիթը օդուտ քաղելով նրա ուրախ տրամադրութիւնից, պատասխանեց.

—Հային ո՞վ է տուել խելք, եթէ հայերը խելք ունենային, էլ ինչու էին հայ լինում...

«Ուրացողի» շողորթութիւնը բաւական դիւրեկաւ խանին, որը ձեռքը դնելով նրա ուսի վրա, ասաց.

—Այդ իրաւ է, Բադր բէկ (պարսիկները այսպէս էին կոչում նրան)—եթէ հայերը խելք ունենային, կը հետեւին քո օրինակին, կընդունէին մեր սուրբ կրօնքը, և համ այս աշխարհում, համ այն աշխարհում վայելչութիւն կ'ունենային:— Այսպէս չէ, մէլիք Ֆրանգիւլ, հարցրեց նա վերջինից:

Մէլիք Ֆրանգիւլը դարձեալ զուլս տուեց, ասելով.

—Այո, խան, այդպէս է, քո ոտքին մատաղ:

Խանը մտաւ վրանի այն մասը, որ յատկացրած էր զիւանի համար: Նա նստաւ իր համար առանձին պատրաստած թանգազին օթոցի վրա և հրաւիրեց երկու մէլիքներին նոյնպէս նստել: Նրանք տեղաւորվեցան խանից ցած: Խանի դրանիկներից նրա մօտ նստեց միայն մուշի-բաշին, իսկ միւսները ոտքի վրա կանգնած մնացին վրանի առջև: Այդ միջոցին անցաւ այնտեղից ծերունի Ահմէդը, և հեռուից լուռ աչքով ակնարկելով խանի ման-

կահասակ սպասաւորներէից մէկին, կանչեց իր մօտ:

— Սալամ, ասաց նրան, — ահա քեզ տան ոսկի, այդ մարդիկը ինչ որ խօսելու լինեն խանի հետ, շուտով խարարը կը բերես ինձ: Նա ցոյց տուեց երկու մէլիքներէ վրա:

— Փօղը ինչ կանեմ, պատասխանեց կանացի զէմքով զեղեցիկ սպասաւորը, — քեզ մի ծառայութիւն անելու համար ես ամեն բանի պատրաստ եմ:

— Ոչ, ընդունիր, ինչ որ քեզ ասում են՝ այն լսիր. ոչ մի խօսք չես վախճնի ականջիցդ, բոլորը կը պատմես ինձ:

Սալամը խանի համար զէյյան մատուցանող սպասաւորն էր, որ միշտ կանգնած էր լինում նրա սպասին: Նա առանց կաշառք եւ ընդունելու ծերունի ներքինապետից, միշտ պատրաստ էր կատարելու հարեմի այդ հզօր իշխանի կամբը, որից բոլոր ծառայողները դողում էին:

Խառնիճաղանձ բաղմութիւնը վրանի առջևից քաշվեցաւ զէպի նրա ետեւի կողմերը, նստեցին խոտերի վրա, որ խանի աչքին չընկնէ: Իսկ վրանի մուտքի աջ եւ ձախ կողմերը կանգնած մնացին ֆէրրաշները, շաթրները եւ միւս ծառայողները:

Խօսակցութիւնը կրկին դարձաւ հայերի վրա: — Ֆարրաշ-բաշի, ձայն տուեց խանը, — դուք

չը դիտէք պատճառը, թէ ինչո՞ւ համար այդ հայերը իրանց այրեցին:

Ֆարրաշ-բաշին մօտեցաւ, գլուխ տուեց, եւ շփոթված տատանվում էր, չը դիտէր, թէ ինչ պէտք էր պատասխանել: Վերջապէս ասաց նա, թէ ինձ ոչինչ յայտնի չէ:

— Ես գիտեմ... մէջ մտաւ մուշի բաշին, խանի առաջին քարտուղարը:

Այդ մարդը, որ ամբողջ մարմնով թունաւորված էր անդադար ափիօն ուտելով, որի ձեռքերը դողում էին շատ արագ խմելուց, բայց որպէս զրապէտ, որպէս շատ կարդացած մարդ, համեմատաբար աւելի բարոյական էր, քան թէ միւս բոլոր ծառայողները: Նա պատկանում էր պարսից մի ծածուկ աղանդի, որ հերքում էր ամեն կրօնքները, իբրեւ վնասակար, իբրեւ սղգերի եղբայրութիւնը խափանող եւ նրանց մէջ թշնամութիւն սերմանող մի վարդապետութիւն: Նա բացատրեց խանին, թէ հայերի յուսահատական ինքնասպանութիւնը առաջ է եկել հարկերի չափազանց ծանրութիւնից, թէ նրանք վճարում էին երեքպատիկ, չորեքպատիկ աւելի, քան թէ պարտաւոր էին. թէ նրանց ինչքը, ստացվածքը եւ մինչեւ անգամ զաւակները վաճառվում էին տուրքերի փոխարէն: — Ի հարկէ, այդ բոլորից յետոյ, աւելացրեց նա, — նրանց ոչինչ չէր մնում, բայց միայն մեռնել...

Այդ միջոցին մէլիք Դաւիթի դէմքը գունա-
թափվել, դալկացել, մեռելի գոյն էր ստացել:
Նրա աչքերում վառվում էր մի տեսակ դաղա-
նային կատաղութիւն, նկատելով, թէ դեռ ևս
կան աշխարհում անմիտ մարդիկ, որոնք բողո-
քում են չարութեան դէմ: Նա դսպեց իրան, ո-
չինչ չը պատասխանեց, սպասելով, թէ խանը ինչ
կասէ:

— Հաշիւներ կան ձեզ մօտ, հարցրեց խանը:

— Ինչպէս չէ, պատասխանեց քարտուղարը և
դուրս բերեց իր գօտիի միջից թղթերի ահագին
փաթոթը, սկսեց նրանց միջից ջոկել տաթևա-
ցիւնների հաշիւները:

Այդ միջոցին խանի վրանը մտաւ ցեղի ընդ-
հանուր հոգևոր ղեւիսը—խմամբ: Բոլորը ոտքի
վրա կանգնեցին, նրան զլուխ տուեցին: Խանը
հրաւիրեց նրան իրանից բարձր նստել, նոյն թան-
գազին օթոցի վրա, ուր առաջ ինքն էր նստած:
Քննութիւնը հայերի հարստահարութեան մասին
ընդհատվեցաւ:

Սովորական հարցութարկներից յետոյ, խանը
ծիծաղելով դարձաւ դէպի իմամը, ասաց.

— Ի՞նչ է չինում ձեր գէրվիչը, պատրաստեց
խոտաացած մաջուկը:

— Դեռ բոլոր նիւթերը ձեռք չեն բերված, պա-
տասխանեց իմամը լուրջ կերպով.— հարկաւոր է
դեռ ևս հարիւր մաղալ մարդարիտ, հարիւր մը-

դալ խոշոր մարջան, տասն մաղալ ալմաստ, տասն
մաղալ եաղութ, տասն մաղալ լւալ, հինգ մաղալ
մուշք, հարիւր մաղալ չուբի-չին, երկու հարիւր
մաղալ եաղուղի ոսկի, և մի քանի ուրիշ նիւ-
թեր: Այստեղ անկարելի է բոլորը գտնել, միտք
ունեւմ գրել թարվէզ, որ այնտեղից ուղարկեն:

— Ամենեին հարկաւոր չէ գրել թարվէզ, ասաց
խանը իր ծառայութիւնը ցոյց տալու համար
իմամին, — բոլորը կը գտնվեն ինձ մօտ, դուք կա-
րող էք ստանալ ինձանից այդ բոլոր գոհարնե-
րը, որքան պէտք է ձեզ, միայն այն պայմանով,
որ փողի փոխարէն չնորհէք ինձ ձեր սուրբ օրհ-
նութիւնը:

— Նս առանց այդ ևս ամեն օր իմ նամազների
մէջ յիշում եմ ձեզ, ասաց իմամը իր յատուկ
բարեւարտութեամբ:

Խանը լուռ զլուխ տուեց ի նշան իր շնորհա-
կալութեան:

Իմամը վաթոռն տարին անցրած մի չոր ու
ցամաք ծերունի էր, քոքից մինչև զլուխը սպի-
տակ հագնված, որդէս վայել էր այդ նրա բա-
րեպաշտութեանը: Նրա զլխի ձերմակ չալման
մի ահագին կաղամբի էր նմանում, իսկ մէջքի
հասա գօտին, փրփուրի պէս սպիտակ և նուրբ
դործուածքից, դիզվել էր փորի վրա: Նա տասն և
երկու կնիկներ ունէր, իսկ այդ հառակում կա-
մենում էր պսակվել մի դեռահաս, տասն և չորս

տարեկան աղջկայ հետ, յոյս դնելով իր գերվիշի հրաշալի մաջունի վրա, որը պէտք է վերադարձնէր նրա մանկութիւնը, և նրան մի առոյգ երիտասարդի սիրտ և ուժ պիտի տար: Նա բուրովին հաւատում էր իր վերածննդութեանը, թէ և հրաշալի մաջունը նրան շատ թանգ պիտի նստէր, թէ և բոլոր գոհարեղէնները պիտի մտնէին խորամանկ գերվիշի գրպանը: Եւ քանի որ մէջ իրան մի նոր օգնական էր ներկայացնում:

— Այդ գերվիշը, խօսեց խմամբ, — սքանչելի բաներ գիտէ, նա խոստանում է ինձ համար մի դարման չինել, որը մի անգամ ընդունելուց յետոյ բոլոր սպիտակ մաղերը սև դոյն կը ստանան: Գիտէ և մի ուրիշ դարման, որ կեանքը հարկւրաւոր տարիներով երկարացնում է:

— Ի՞նչու չէք չինել տալիս, հարցրեց խմամբ:

— Նիւթերը հազուադիւր են և ըստ մեծի մասին թանկագին:

— Այսպիսի դարմանները պատրաստվում են զլխաւորապէս գոհարեղէններէ:

— Այո, գոհարեղէններէ:

Խմամբ դարձեալ կրկնեց, թէ բոլորը իմամբ կարող է ստանալ իրանից, և ինչոքեց գերվիշին իր մօտ ուղարկել, յայտնելով, թէ ինքն էլ նպատակ ունի նոյն մաջունները պատրաստել տալ իր համար, և այսպիսով մի օգուտ հասցրած կը լինի գերվիշին, որը իմամբ թէ բժիշկը և թէ

հիւրն է: Մի խօսքով, խմամբ աշխատում էր ամեն տեսակ հաճութիւն ցոյց տալ այդ սպիտակեղէնների մէջ փաթաթված, չորուցամաք ձերուկին, որ բովանդակում էր իր մէջ ամբողջ ցեղի հաւատը և համակրութիւնը: Խմամբ այնքան վարպետ էր, որ գիտէր, թէ այդ մարդուն զրաւելով, ամբողջ ժողովուրդը իր ձեռքում սանձահարկած կարող էր պահել:

Մի մարդ միայն այդ վրանում իր մտքում ծիծաղում էր այդ բոլոր խօսակցութիւնների վրա, — դա մունչի-բաշին էր: Նա խիստ դժգոհ էր, որ իմամբ այցելութիւնը խանդարեց իր բացատրութիւնները հայերի հարստահարութեան մասին, և բարկութիւնից, հանեց իր ծոցից մի փոքրիկ ոսկեայ տուփ, և նրա միջից վեր առնելով ափիօնի երեք հատ խոշոր դնդակներ, զրեց բեբանը, կուլ տուեց:

— Միրզայ-Ջաֆարը — այսպէս էր մունչի-բաշիի անունը, — արդէն կուլ տուեց իր մաջունը, նկատեց իմամբ հեղնական եղանակով:

— Այո, պատասխանեց նոյնպէս հեղնական ոճով քարտուղարը, — այդ է իմ մաջունը, թէ և չէ մանկացնում, բայց դոնէ մոռանալ է տալիս ինձ աշխարհի վշտերը...

— Միթէ դուք էլ վշտեր ունէք, հարցրեց իմամբ ծիծաղելով:

— Նո վշտեր չունեմ, բայց ուրիշի վշտերը նե-

ղացնում են ինչ... ասաց նա փխբաօխայական
գուարճախօսութեամբ,— աշխարհի մէջ շատ չար
ու բարի եմ տեսնում... կան մարդիկ, որ ամեն
հնարներ գործ են դնում իրանց կեանքը երկա-
րացնելու համար, որ աւելի շատ վայելեն աշ-
խարհի հեշտութիւնները... կան և այնպիսի մար-
դիկ, որոնք կամաւ կարճացնում են իրանց
կեանքը և մահուան մէջ են որոնում հանգստու-
թիւնը...

Թէ խանը և թէ խմամը առաջուց սովոր էին
քարտուղարի տարապայման խօսակցութեանը,
այս պատճառով չը բարկացան նրա բացարձակ
ակնարկութիւնների վրա: Դէրվիշները առհասա-
րակ յարգանք ունեն պարսիկների մօտ, չը նա-
յելով որ, նրանց հայացքները և սովորութիւն-
ները շատ անգամ հակառակ են լինում ընդուն-
ված նախապաշարմունքներին: Միրզա-Ջաֆարը
նոյնպէս գէրվիշ էր: Իր վերջին խօսքերով նա
ակնարկում էր խեղճ հայերին, որ մի քանի բո-
ւալէ առաջ այրվեցան հրապարակի վրա: Իմամը
հասկանալով այդ, պատասխանեց նրան.

— Նրանք առանց այդ էլ պիտի այրվէին դը-
ժոխքի կրակների մէջ: Լաւ է, որ այս աշխար-
հում փորձեցին նախապատրաստվել գեհնի կը-
րակների համար:

Քարտուղարը կամենում էր պատասխանել ի-
մամին, բայց խանը նրան աչքով արաց, որ լռէ:

Մէլիք Գաւիթը, որ բոլոր ժամանակը լուռ լը-
սում էր, մտածեց օգուտ քաղել իմամի ներկա-
յութիւնից և իր հաշիւը վերջացնել քարտուղարի
հետ: Բայց առիթ չէր գտնում: Առիթը տուեց
ինքը իմամը, որը գոհ մնալով իր սուր պատաս-
խանով հայերի վերաբերութեամբ, դարձաւ դէպի
մէլիք Գաւիթը, հարցնելով.

— Այսպէս չէ, Բադր բէկ:

— Իրաւ, այդպէս է, տէր, ասաց «ուրացողը»
— բոլոր հայերը դժօխքի կրակի մէջ պիտի այր-
վին: Աստուծոյ դրախտը միայն Մուհամմէդի
ուղղափառների համար է: Մի քանի բուալէ ա-
ռաջ պարոն քարտուղարը ինձ մեղադրում էր,
իբր թէ ես եմ եղել զլխաւոր պատճառը, որ
այդ յիմար հայերը իրանց անձերը կրա-
կին մատնեցին: Իբր թէ ես նրանցից ծանր
հարկեր եմ առել և նրանց զաւակները վաճառել
եմ: Խոստովանվում եմ, որ այդ երկուսն էլ
արել եմ ես աւելի յարգանք ընդունելու համար,
քան թէ նախատինք: Հարկերը ծանրացնելով,
ես ծառայութիւն եմ արել խանի զանձարանին,
խակ «զաւուրների» զաւակները մահմեդականնե-
րին վաճառելով, ես աշխատել եմ բաւականել
մեծ մարդարէի հաւատացեալների թիւը:— Դրանք
են իմ արածները, եթէ մի որ և իցէ յանցանք էք
գտնում դրանց մէջ, ահա իմ պարանոցը, կտրել
տուեցէք:

—Այդ գործերի մէջ ոչ ոք ձեզ մեղադրելու իրաւունք չունի, ընդհակառակն, դուք պատուի և շնորհակալութեան էք արժանի, պատասխանեց իմամը ծանրութեամբ:—Գրանցով դուք ցոյց էք տալիս, որ անկեղծութեամբ և հաւատքով էք ընդունել մեր կրօնը: Եւ կը խնդրեմ խանից, որ ձեզ ըստ արժանւոյն վարձատրէ:

—Ես այսօր իմ սեպհական հանդեքձատնից մի խաւած կը կընծայեմ Բաղը բէկին, ասաց խանը իմամին դոհացնելու համար:

Մէլիք Գաւիթը գլուխ տուեց և օրհնութիւններով յայտնեց իր շնորհակալութիւնը: Այժմ չարագործի մռայլված դէմքը կրկին սկսեց փայլել ուրախութիւնից: Իմամը մէլիք Ֆրանգիւլի վրա ամենեկին ուշադրութիւն չը դարձրեց, թէն նա ատրիճանով լաւելի բարձր էր մէլիք Գաւիթից: Մուսուլմանների բարձր հոգևորականը, կարծես, զգվում էր այդ «գաւուրի» ներկայութիւնից, մայնաւանդ, որ նա համարձակվել էր նստել նոյն վրանի տակ, ուր ինքն էր նստած: Այդ սրբաւարճանքը սատարիկ աղղեց փառասէր մէլիք Ֆրանգիւլի սրտին և նրա զլխում կրկին ծագեց այն միտքը, որ երկար ժամանակ տանջում էր նրան...

Իմամը վեր կացաւ, յայտնելով, թէ երկար նստել չէ կարող, թէ իր նամակի ժամանակը անցնում է, թէ նա մի քանի բոլեով միայն

կամեցաւ անցնել խանի մօտ, նրա առողջութիւնից տեղեկութիւն ստանալու համար, թէն նա եկած էր զլխաւորապէս գոհարեղէնների համար, որ պահանջում էր նրանից դէրվիշը: Թէ խանը և թէ բոլոր ներկայ գտնվողները կանգնեցին և բաւական տեղ, վրանից հեռու, ճանապարհ դրին իմամին:

Իմամի գնալուց յետոյ խանը երկու մէլիքների հետ մնաց միայնակ: Քարտուղարը խուովված մարդու նման առանձնացաւ վրանի միւս մասնում, ուր նստած էին նրա ստորադրեալ զրադրները և սկսեց զբաղվել իր գործերով: Այդ միջոցին խանը կանչել տուեց իր մօտ ձիաւորների զլխաւորին, որին կոչում էին զուլար-աղասի և հրամայեց նրան պատրաստել երկու հարիւր զինված ձիաւորներ թորոս իշխանին ընդունելու համար:

—Թորոսը, հարցրեց մէլիք Ֆրանգիւլը զամացած կերպով, իբր թէ ոչինչ բանից տեղեկութիւն չունի,—ինչու համար է դալիս թորոսը:

—Իշխանը պիտի գայ մեզ մօտ գտնված հայ գերիներին գնելու համար, պատասխանեց խանը: —Այսօր, ճաշից երկու ժամ առաջ, ժամանակ ենք նշանակել նրան ընդունելու:

—Ներեցէք համարձակութեանս հարցնել,—որքան փրկանք էք նշանակել:

—Ես դեռ ոչինչ չեմ նշանակել, տեսնենք իշ-

խանը որքան կը տայ. ի հարկէ, փողի մասին սակարկութիւն կը լինի:

— Ես հէնց այդ էի ուզում գիտենալ, ասաց մէլիք Ֆրանգիւլը խոհեմ կերպով. — Պորոտը հօթըն սատանայից աւելի խորամանկ է, վախեցում էի, որ այդ անիրաւը ձեզ կը խաբէ: Լաւ է, որ դեռ գործը վերջացած չէ, ես այժմ կարող եմ ձեզ մի քանի օգտաւէտ խրատներ տալ:

Սալամ մանկլաւիկը, որ ներքինապետից պատուէր էր ստացել լրտեսել խանի և երկու մէլիքների խօսակցութիւնը, աւելի սրեց իր ականջները մէլիք Ֆրանգիւլի «խրատները» լսելու համար: Ընդունելով իր մատուցած ղէշլանը խանի ձեռքից, նա մի կողմ քաշվեցաւ, կանգնեց վրանի մուտքի մօտ, և լարված ուշադրութեամբ լսում էր նրանց:

Մէլիք Ֆրանգիւլը խանի ուշադրութիւնը դարձրեց նախ այն կէտի վրա, թէ ո՞վքեր են գերինները, ինչ տոհմից են, որքան կարողութիւն ունեն և նրանց ազդականները ինչ գումար կարող էին վճարել նրանց գնելու համար: Բոլորի անունները մի առ մի յայտնելուց յետոյ, նա աւելացրեց, թէ ինքը, կռիւի ժամանակ, որովհետեւ խանի զօրքերի մէջն էր գտնվում, և խանին աւելի շահ հասցնելու մտքով, աշխատեց ընտրել գերիններին ամենահարուստ ընտանիքներից, որպէս զի, նրանց ազատելու համար կարելի

լինի պահանջել նշանաւոր գումարներ: Գերինները թուով հարիւր քսան և հինգ հօգի են. մի մասը մեռել են բանտի մէջ, բայց հարիւրի չափ դեռ մնում են: Գրանց մէջն է գտնվում Ստեփաննոս պատանին, որ Շահումեան իշխանների տոհմիցն է, մէլիք Վարթանէսի որդին, ամբողջ Գենուազ դաւառի ժառանգը, այն դաւառի, որ դուք տիրեցիք, որ այժմ ձեր իշխանութեան ներքոյ է գտնվում: Այդ պատանուն ամենեւին պէտք չէ ձեռքից թողնել, եթէ կամենում էք, որ Գենուազը մնայ ձեզ որպէս մշտական սեպհակա-նութիւն: «Վիշապի ձաղը երբ որ մեծանայ, դարձեալ օձերի թագաւորը կը դառնայ» — այդ պարսկական առածի միտքը դուք լաւ էք հասկանում: Ուրեմն, պէտք է Շահումեանների տան այդ վերջին շառաւիղը արմատից կտրել, այդ տոհմի հետքը աշխարհի երեսից ջնջել, եթէ ցանկանում էք, որ Գենուազը ձեզ մնայ: Իսկ եթէ պատանու կեանքին ղիպչել չէք ցանկանայ, խոհեմութիւնը պահանջում է, որ նրան պահէք ձեզ մօտ որպէս պատանդ:

Մէլիք Ֆրանգիւլը այնպէս հասարակ և սովորական կերպով առաջարկում էր խանին իր «խրատները», որպէս բժիշկը տալիս է իր հիւանդին զանազան առողջապահական խորհուրդներ, որոնց մէջ նա խղճի, պատուի և ազնու-թեան դէմ ոչ մի յանցանք չէ գտնում:

— Այդ բոլորը, ինչ որ ասեցիք, չափ խելացի են, պատասխանեց խանը ռազադրութեամբ լսելոյց յետոյ. — Բայց ես այդ պատահունն ոչ կարող եմ պահել ինձ մօտ որպէս պատահել և ոչ ոչնչացնել նրան, որովհետեւ Թորոս իշխանին խօսք եմ տուել բոլոր գերիները դարձնել նրան, և ես իմ խօսքը յարգում եմ:

Կարծես մէլիք Ֆրանգիւլլի գլխին սառը ջուր ածեցին: Նա չէր սղափում խանից մի այսպիսի պատասխան: Բայց դարձեալ իր վստահութիւնը չը կորցնելով, դաւաճանը շարունակեց.

— Ես երբէք չեի ցանկանայ, որ դուք ձեր խօսքը կոտրէիք, խան, բայց այդ չէ արգելում ձեզ պահանջել որպէս պատանու, նոյնպէս և միւս գերիների համար արժանաւոր փրկանք:

Մէլիքի նպատակը այն էր, որ խանը պահանջէ այնպիսի ահադին գումար, որ Թորոս իշխանը չը կարողանայ վճարել. դրանով դարձեալ գերիները կը մնային խանի բանտի մէջ, այնտեղ կը մաշվէին, կը տրորվէին և վերջապէս կոչնչանային, — այն ժամանակ մէլիքը դարձեալ հասած կը լինէր իր նպատակին: Բայց ինչ սատանայական նպատակ էր այդ, — պէտք է պարզել:

Մէլիք Ֆրանգիւլլը վաղուց դիտաւորութիւն ունէր Գենուաղ դաւառի մէլիքութիւնը իր ձեռքը ձգել: Այս նպատակով, նա իրան աջակից ընտրելով տաթեացի Դաւիթ ուրացողին, երկու-

սը միասին կարողացան խանին գրգռել Գենուաղի վաղեմի իշխան մէլիք Վարթանէսի դէմ: Կաւադրութիւնը այնպէս սարքեցին, որ մէլիք Վարթանէսը բոլորովին ապատրաստ, խանի հրոսակները յանկարծ մօտն նրա երկիրը: Շահումեանների տունը բոլորովին ընալինջ եղաւ, ինքը մէլիք Վարթանէսը ընկաւ կռիւի մէջ: Այդ ահագին իշխանական տոհմից ազատվեցաւ մի պատանի միայն, Ստեփաննոսը, որը գերի ընկաւ խանի զօրքերի ձեռքը: Նրա հետ գերի առնվեցան Գենուաղի գիւղերի բոլոր նշանաւոր տանուտէրների որդիները: Այնուհետեւ խանը իր կողմից նշանակեց այդ դաւառում պարսիկ կառավարիչներ: Գերիները այնքան ժամանակ պահվում էին խանի բանտերում, մինչև Գենուաղը բոլորովին հպտտակէր և ժողովուրդը ապստամբական փորձեր չանէր: Բայց որովհետեւ ժողովրդի գլխաւորները ոչնչացրած էին, և նրանց դաւակները որպէս գորաւական պահվում էին տիրող բռնակալի ձեռքում, այս պատճառով անտէր, անառաջնորդ Գենուաղը շուտով խռնարձվեցաւ պարսիկ խանի իշխանութեան ներքոյ: Այնուհետեւ աւելորդ էր պահել գերիներին, երբ կարելի էր ստանալ նրանց փոխարէն բաւական մեծ գումար: Բայց մէլիք Ֆրանգիւլլն այդ ձեռնտու չէր: Նա ժառանգական թշնամութիւն ունէր Շահումեանների տոհմի հետ: Նա ցանկանում էր ոչնչացնել

այդ հոյակապ ընտանիքից մնացած միակ ներկայացուցիչը, Ստեփաննոսին, որ ինքը լինի Գենուաղի տէրը: Թէև այդ մասին նա ղեռ ոչինչ խօսեցած չէր խանի հետ, բայց մեծ յոյս ունէր, որ կարող է հասնել իր նպատակին, որովհետև խանը նրա օգնութեամբ, նրա առաջնորդութեամբ միայն կարողացաւ տիրել Գենուաղին և յաղթել մէլիք Վարթանէսի նման մարդուն, որը մեծ զօրութեան տէր էր: Պարսկից խաները սովորութիւն չունէին իրանք կառավարելու հայոց գաւառները. նրանք յանձնում էին հայ մէլիքներին և տարեկան մի նշանակեալ հարկ էին ստանում: Ո՞վ աւելի արժան էր այդ պաշտօնին, քան մէլիք Ֆրանգիւլը, որ այնքան հաւատարիմ էր խանին, որ այնքան օգնել էր նրան Գենուաղի տիրապետութեան մէջ:

Մէլիք Ֆրանգիւլը երկար ժամանակ աշխատում էր պատանի Ստեփաննոսին խեղդել տալ բանտի մէջ, բայց այդ փորձը ինչպէս տեսանք, չը յաջողեցաւ: Նա այնքան խելիւղ չէր կրի այդ պատանուց, եթէ նա չունենար մի այնպիսի հզօր քեռի, որպիսին էր Թորոս իշխանը, Չաւդուրի ամբողջ գաւառի տէրը: Ստեփաննոսի մայրը այդ իշխանի հարազատ քոյրն էր:— Տարակոյս չը կայ, մտածում էր մէլիք Ֆրանգիւլը, որ Թորոս իշխանը, ազատելով իր քրոջ որդուն, կը պահէր իր մօտ, կը մեծացնէր, և վերջը

կաշխատէր նրան կրկին իր հայրենական ժառանգութեան տէր դարձնել:

Արծաթի սէրը խանի մէջ մեծ էր ամեն բանից: Մէլիք Ֆրանգիւլի բոլոր խորհուրդները, բոլոր փաստերը, թէ դերիներին իր մօտ պահելով կամ ոչնչացնելով, կարող էր նա ապահովացնել Գենուաղի տիրապետութիւնը,—այդ «խորատներին» խանը մեծ նշանակութիւն չը տուեց: Նրան միայն զրաւեց փողի խնդիրը և այս պատճառով հարցրեց, թէ ինչքան կարելի է պահանջել Թորոս իշխանից:

—Մէլիք Վարթանէսի ամբողջ գանձը, պատասխանեց մատնիչը:

Սանը զարմացաւ, ասելով, թէ մէլիք Վարթանէսը ինչ որ ունէր, ինչ որ չունէր, բոլորը կողոպտեցաւ կռիւի ժամանակ. միթէ ղեռ ևս նրանից մի բան մնացած է:

—Ինչպէս չէ, պատասխանեց մէլիքը ժպտելով, որպէս մի մարդ, որ ժպտում է երեխայի միամտութեան վրա:—Մէլիք Վարթանէսը ղեռ կռիւից շատ առաջ հօտը առել էր, որ ձեր զօրքերը պիտի մոռնն նրա երկիրը. այս պատճառով իր գանձը նախապէս տեղափոխել էր իր աներոջ՝ Թորոս իշխանի ամրոցը: Չէր զօրքերը գտան մէլիք Վարթանէսի ամրոցում նրա հարստութեան փառանքները միայն:

Յետոյ նա սկսեց պատմել այդ առասպելական

գանձի մասին շատ բան. թէ մէլիքը իր ամբողջում մի ներքնատուն ունէր երկաթէ դռներով, թէ այնտեղ յատակի վրա, ցորենի չեղջերի նըման, դիզված էին՝ մի կողմում ոսկի, միւս կողմում արծաթ, մի տեղ պղնձէ դրամներ, միւս տեղ թանգազին քարեր: Թէ այդ կոյտերը այնքան բարձր էին, որ եթէ մի մարդ միւս կողմում կանգնած լինէր, անկարելի էր նրան տեսնել: Եւ փողը այնտեղ չէին համբարում, կամ կշռում էին կշիռքով, կամ չափում էին սօմարով: Այդ բոլորը նա ուղարկ բեռներով առաջուց ուղարկած էր Թորոս իշխանի տունը:

Այդ պատմութիւնը խանի վրա նոյն ազդեցութիւնն էր գործում, ինչպէս քաղցած մարդու մօտ համեղ կերակուրների պատմութիւնը. Նրա ախորժակը աւելի բացվեցաւ, և ինչպէս ասում են՝ «բերնի ջուրը գնաց», երբ մէլիք Գաւթիթը, որ բոլոր ժամանակը լուռ էր, վկայութիւն տուեց, թէ բոլորը ճշմարիտ է, թէ ինքը իր աչքովն է տեսել այդ ահագին գանձը, թէ այնտեղ կային սկսեալ Սըկանդար Զուլկարնէյից (Աղէքսանդր Մակեդոնացուց) ամեն ժամանակների դրամներ, թէ այնտեղ կային մինչև անգամ քաջքերի դրամներ:

Այդ միջոցին հեռուից լսելի եղաւ փողի ձայն, որի դողողուն հնչիւնները կոտորաովելով տարածվեցան լեռների մէջ: Մի քանի անգամ կըրկնվեցաւ ձայնը, յետոյ լուռ:

— Իշխանը դալիս է, ասաց խանը և հրամայեց ֆարաշ-բաշուն, իր դրանիկներից գլխաւորների հետ ընդ առաջ գնալ:

Երկու մէլիքները կանգնեցան, յայտնելով, թէ իրանց անյարմար է նրա գալուց յետոյ ներկայ գտնվել:

— Շնորհակալ եմ, «իմ» մէլիքներ, ասաց խանը բարեկամաբար, — շատ շնորհակալ եմ, որ դուք այդ բոլորը նախապէս յայտնեցիք ինձ: Ես պատանի Ատեփանին չեմ տայ, մինչև չը ստանամ նրա հօր ամբողջ գանձը, և միւս գերիներին նոյնպէս չեմ աղատի, մինչև չը ստանամ արժանաւոր փրկանք: Ես չեմ մոռանայ, որ դուք իմ աչքերու բաց արեցիք...

Ը.

Երբ երկու մէլիքները հեռացան, խանը գտնվում էր մի տեսակ հոգեկան բերկրութեան մէջ: Առասպելական գանձի պատմութիւնը այն աստիճան դրդեւ էր նրա ազահութիւնը և այն աստիճան լցրել էր նրա սիրտը շուտ հարստանալու յոյսերով, որ երեակայում էր, թէ քանի բոսէից յետոյ աշխարհի Ղարունը *) կը դառնայ: Ի՞նչեւ չէր կարելի անել այդ գանձով: Նրանով կարելի էր կաղմակերպել զօրքերի այնքան բազմութիւն, որոնցմով շատ հեշտ կը լինէր տիրել ամբողջ

*) Ղարուն, պարսից Կրեսոսը:

Ատրպատականը... որոնցմով կարելի կը լինէր մինչև անգամ յափշտակել Սէֆէվիներին թագը...

Ազահութեան և փառասիրութեան բաղձանքը ծնեց նրա մէջ յանցաւոր խորհուրդ—մեղանչել հիւրասիրութեան սրբութեան դէմ և չը յարգել տուած խօսքը: Երկուսն էլ մեծ անպատուութիւն էին մի պետի համար, որքան վայրենի, որքան և բարբարոս լինէր նա: Թորոս իշխանի ընդունելութեան պայմանները սկզբից որոշված էին նրա հետ. իշխանը պիտի դար երկու հարիւր ձիաւորներով, բերելով իր հետ զերիները ազատելու փրկանքը: Փրկանքի քանակութիւնը կամ ընծաների արժէքը որոշված չէին, դրանք թողված էին իշխանի մեծահոգութեան վրա: Երկու հարիւր ձիաւորներ խանի կողմից պէտք է ղիմաւորէին նրան: Իշխանին պէտք է ցոյց տրվէր, նրա պատուի համեմատ, ամեն յարգանք և հիւրասիրութիւն: Բայց այդ բոլոր կարգադրութիւնները փոխվեցան խանի մտքում: Նա վճռեց, եթէ Թորոս իշխանը չի համաձայնվի տալ նրան մէլէք վարթանէսի դանձը, այն ժամանակ ոչ միայն զերիները չէ կարող ազատել, այլ խանը կը հրամայէ նրան կալանաւորել, բանտարկել և բանտի մէջ մաշել, մինչև դանձը ստացվի: Բայց Թորոս իշխանը միայնակ չէր լինելու, նա իր հետ պիտի բերէր հայոց քաջերից երկու հարիւր զինված ձիաւորներ: Այդ ոչինչ, խանի բանակի մէջ կա-

րելի էր մի բռնութեամբ պատրաստել հաղար զինված մարդիկ: Կարծեալ մկանը կարելի էր պցել թակարդի մէջ....

Մինչ խանը այդ խորհրդածութիւնների մէջ էր, կանանոցի վրաններից դուրս եկաւ մի կին. նա ոտքից ցզլուլա փաթաթված էր մոյգ-կապտապոյն չաղրչարի (զաղիֆայ) մէջ և երեսը ծածկած ունէր սպիտակ, անթափանցիկ քողով, որի աչքերը ծածկող մասը միայն ունէր մաղաձև հիւսվածք տեսութիւնը խաղաւ չը խափանելու համար: Յուշիկ, նազաքայլ ընթացքով ղիմում էր նա գէպի խանի վրանը և նրա առջևից գնում էր ծերունի Ահմէդը ներքինապետի բոլոր ինքնավատահոլութեամբ: Ճանապարհից բոլորը յետ էին քաշվում, երեսները շուռ էին տալիս, մտածելով, որ անցնողը խանի հարեմի խանուաններից մէկը պէտք է լինի: Նւ իրաւ, դա Սիւրին էր, ծերունի Ահմէդից տեղեկացած լինելով երկու մէլիքների մատնութիւնների մասին, գնում էր իր ամուսնի մօտ հայ զերիների ազատութեան համար բարեխօսելու: Նա անցաւ դէպի խանի վրանի այն մասը, որ կոչվում էր խալվաթ-խանայ (զաղտնարան), ներքինին բաց արեց նրա առջև մուտքը, նա ներս մտաւ, կրկին նրա ետևից մուտքը փակվեցաւ: Սիւրին մնաց միայնակ գաղտնարանի մէջ: Նա մի կողմ ձգեց մոյգ-կապտապոյն չաղրչարը, որի մէջ փաթաթված էր և յայտնվեցաւ

որպէս մի ծովային յաւերժահարս, որ յանկարծ դուրս է գալիս ոտորէի միջից: Նա երեսից յետ քաշեց քօղը: Այդ թանձր, անթափանցիկ քօղը, կարծես, խեղդում էր նրան: Այժմ սկսեց ազատ շունչ քաշել: Այն օրվայ բոլոր անցքերը թողել էին նրա սրտում դառն և ցաւալի տպաւորութիւններ: Հարեմի կանանց նախանձը, գլխի մազերի կտրվելը, հայ գիւղացիների սոսկալի վախճանը, իր հօր և նրա համանման արբանեակի բանասարկութիւնները, — այդ բոլորը այն աստիճան վրդովել, այն աստիճան տխրութեան մէջ էին գցել նրան, որ նմանում էր մի անմխիթար սգաւորի, որը կորցրած է լինում այն, ինչ որ ամենաթանկագինն է աշխարհում նրա համար: Այսուամենայնիւ, այս բոլորը չէր կարող պատճառ տալ հարեմի ստրուկին ուշադրութիւն չը դարձնել իր հագուստի և դարդարանքի վրա, որպէս վայել էր իր իշխանի աչքին երեւալու համար: Նա տխուր էր, թէ ուրախ, — մի և նոյն է. պէտք էր սովորական պէրանքով ներկայանալ իր իշխողին: Նրա կարճիկ շաւլարը (լւփկայ) կարված էր վարդագոյն առլասից, ոսկեհուռ բանվածքով և ստորին եզերքը չորս մատի լախութեամբ զարդարած մարդարիտներով և գոհարներով: Թիկնոցը կարված էր մանիշակագոյն թաւիչից, նոյնպէս ոսկէ թելերով նախշած և եզերքը մարդարիտներով զարդարած: Խոշոր մարջաններ

բով շարած մի թանկագին մանուակ քաղ էր ընկած պարանոցից կիսամերկ կուրծքի վրա: Ամբողջ մարմինը բուրում էր անուշահոտութեան մէջ: Անհանգիստ, անվճռական դրութեան մէջ կանգնած էր նա զաղտնարանում, տարուբերվում էր մտածութիւնների մէջ, թէ ինչպէս պէտք էր հանդիպել խանին, ինչ կերպով սկսել իր խօսքը: Արդեօք, իր վարմունքը կասկածելի չէր անի նրան խանի աչքում, և չէր մերկայցնի նրա համակրութիւնը գէպի հայերը և քրիստոնեաները, որ այնքան տարի ամենայն զգուշութեամբ ծածկած էր: Ի՞նչպէս բարեխօսել գերիների ազատութեան համար, ինչպէս ասել, թէ այն բոլորը սուտ է, ինչ որ յայտնեցին երկու մէլիքները երեսկայական գանձի մասին: Ախար նրանցից մէկը իր հայրն էր. ինչպէս ցոյց տալ նրա խաբէութիւնը: Արդեօք կը հաւատար խանը, — այդ զարձեալ մի հարց էր:

Հարեմի խնորհգաների մէջ սովորել էր նա փոքր ինչ խորամանկ լինել: Մտածում էր իր միջնորդութեանը մի գերբնական, գաղանի ազդեցութիւնից ներշնչված, խորհրդաւոր ձև տալ: Դրա համար բաւական էր հնարել մի ևրադ, ասել՝ թէ երազումս այս տեսայ, այն տեսայ և այս բոլոր տեսիլների ազդարարութեան համեմատ, պէտք է ազատել գերիներին, եթէ ոչ, հետևանքը վատ կը լինի, որովհետև Աստուած

մեծ պատիժ է սպառնում: Բայց ինչու այդ բո-
լորը նոր էր մտածում նա, ինչու սկզբից խոր-
հած, նախապատրաստված, չը դիմեց նա գոր-
ծին: Նա չտապեց: Հենց որ ծերունի ներքինա-
պետը հաղորդեց նրան, թէ ինչ թակարդ լարե-
ցին երկու մէլիքները, հենց որ լսեց նա փողի
առաջին ձայնը, որ աղարարում էր թորոս իշ-
խանի դալը, նա աճապարեց խանի մօտ, հազիւ
ժամանակ գտնելով հազնվելու: Այժմ միանգա-
մից հասկացաւ նա իր կատարած դերի վտան-
գաւոր կողմերը: Միթէ խանի կասկածը չէր
գրգռի նա, երբ կիմանար, թէ իր կինը լրտե-
սում է նրա խօսակցութիւնները, թէ Ահմէդի
ձեռքով կաշառում է սպասաւորներին, թէ....
վերջապէս շատ բաներ կարող էր գիտենալ նա,
այնուհետեւ ինքը կորած էր:

Ահա այդ մտատանջութիւնների մէջ գտաւ
նրան խանը, որ աւելի բարկացած, քան թէ
դարմացած իր ամուսնի անախակալ այցելութեան
վրա, ներս մտաւ գաղանարանը: Հարեմի մէջ
փակված կնոջ իր արգելարանից դուրս դալը, և
ահագին բազմութեան միջից անցնելով, այդ
վրանը մտնելը ոչ միայն անվայել, այլ բոլորո-
վին հակառակ էր կանոնոցի կանոններին: Եւ
դրանով պէտք է բացատրել այն սպառնական
հայեացքը, որով դարձաւ խանը դէպի իր կինը
հարցնելով.

— Դու ինչ դործ ունես այստեղ:

Սիւրին մնաց չփոթված. կարծես, նրա լեզուն
կապեցին, և մի խօսք անգամ չը գտաւ պա-
տասխանելու: Նրան տիրեց մի տեսակ երկիւղ,—
ստրուկի երկիւղը իր սարսափելի տիրոջ առջև:
Այդ առաջին անգամն էր, որ նա զգում էր իր
ոչնչութիւնը, թէ ինքը մահմետական ընտանիքի
մէջ մի կրաւորական առարկայ էր, մի փայլուն
և խայտաճամուկ զարդ էր, և ոչ կամքի ու
խօսքի տէր արարած, և ոչ ամուսնի ընկեր ու
նրա խորհրդակից: Խանը նայելով այդ գեղեցիկ,
չփոթված առարկայի վրա, սրբ, որպէս մի ա-
մօթխած հրեշտակ, ներկայանում էր նրա աչ-
քում իր բոլոր սքանչելի հրապուրանքով, մեղմեց
իր բարկութիւնը, և մօտենալով, բռնեց նրա ձեռ-
քից, նստեցրեց իր մօտ մախմուռի օթոցի վրա,
հարցրեց.

— Դիտեմ, մի խնդիրքով եկած կը լինես ինձ
մօտ, խօսիր, նաղելիս, ինչ ունիս ասելու:

Նեղ դրութիւնը մարդուն սրամիտ է չլինում:
Սիւրին յանկարծ յիշեց այն նշանաւոր բոսլէն
իր ամուսնական կեանքում, որ սկիզբը դրեց նրա
ամբախտութեանը: Նա յիշեց այն տաղնապալից
գիշերը, երբ ինքը տաճն և չորս տարեկան մի
անմեղ աղջիկ, փառասէր հօր ձեռքով ձգվեցաւ
խանի գիրկը: Նա յիշեց այն բոլոր հոգեկան
տանջանքը, այն բոլոր դարչելի զգուանքը, ու-

բով ինքը, որպէս մի նոր Հովիտիմէ, պատերազմում էր խանի գաղանային կրքերի դէմ և չէր կամենում անձնատուր լինել: Նա յիշեց այն խօսքը, որ ակտաբորբը խանը երդվելով ասաց նրան. «խնդրիր ինձանից ամեն բան և ես կը տամ քեզ, միայն թէ դու իմս լինես»: Սիւրին ոչինչ չը խնդրեց և անձնատուր եղաւ... Այնուհետեւ խանը մի քանի անգամ կրկնեց նրան մի և նոյն խոստմունքը, բայց Սիւրին միշտ սպասում էր մի կարեւոր դէպքի, որ իր խնդրածը մի նպատակայարմար և նշանաւոր բան լինէր: Այժմ դէպքը ինքն ըստ ինքեան առաջ եկաւ:

Նա չօքեց խանի առջև, որպէս մի խոնարհ աղերսարկու աստուածներից ամենասարսափելի արձանի առջև, և իր գեղեցիկ, արտասուքով լի աչքերը դէպի վեր բարձրացնելով, ասաց.

— Իմ իշխանը յիշում է, որ մի պարտք ունի ինձ վճարելու:

— Ի՞նչ պարտք, հարցրեց նա զարմանալով:

Սիւրին յիշեցրեց նրան հին խոստմունքը:

— Այդ ես չեմ մոռացել, ասաց խանը ժպտելով, — ես մեղաւոր չեմ, որ քո առջև վատ պարտական գտնվեցայ, դու առհասարակ անհող ես քո ապաւինների վերաբերութեամբ: — Հիմա, խնդրիր, ինչ որ կամենում ես, ես իմ խոստմունքը պատրաստ եմ կատարելու:

— Նս քեզանից մեծ բան չեմ խնդրելու, պա-

տասխանեց Սիւրին, տակաւին անշարժ մնալով իր չօքած դրութեան մէջ, — ես եկայ խնդրելու, որ ազատես հայ գերիներին և թորոս իշխանին ձեռնունայն յետ չը դարձնես:

— Ա՛... այդ շատ մեծ բան է քո խնդրածը... պատասխանեց խանը զարմացական բացականչութեամբ, և նրա փոքր ինչ մեղմացած դէմքը կրկին մռայլվեցաւ սովորական խստութեամբ: — Դու կամենում ես ինձ կորցնել տալ մէլիք Վըրթանէսի ամբողջ գանձը:

— Ի՞նչ գանձ:

Խանը սկսեց պատմել նրան բոլորը, ինչ որ լսել էր նրա հօրից և մէլիք Ֆրանգուլից առասպելական գանձի մասին, աւելացնելով, թէ մեծ յիմարութիւն կը լինէր իր կողմից մի այսպիսի ահագին կողոպուտը ձեռքից բաց թողնել, մանաւանդ, որ ինքը փողի շատ հարկաւորութիւն ունի:

Սիւրին պատասխանեց, թէ ինքը երբէք յանձն չէր առնի ձանձրացնել իր «իշխանին» անտեղի խնդրքով և երբէք չէր ցանկանայ զրկել նրան իր շահերից, եթէ գիտենար, որ այդ երեւակայական գանձը գոյութիւն ունի: Բայց նա այդ բոլորը զրպարտութիւն է համարում, թէև հաղորդողներից մէկը իր հայրն է:

— Ուրեմն ի՞նչ նպատակ ունէին նրանք խարելու ինձ, հարցրեց խանը խորին վրդովմունքով:

— Նպատակ ունեն... պատասխանեց Սիւրբին զգալի խռովութեամբ, — և նրանց նպատակը ինձ լաւ յայտնի է, բայց այժմ անյարմար եմ համարում հաղորդել ձեզ, յուսալով, որ իմ իշխանը կը հաւատայ, որ իր ազգայինը սուտ խօսող է:

Այս խօսքերը պատասխանեց նա այնպիսի մի զգացմունքով, որ ազգեց խանի քարացած սրբափ վրա, և նա բռնկւով իր առջև չոքած զեղեցիկ կնոջ թեքից, կրկին նստեցրեց իր մօտ, ասելով.

— Նա կը կատարեմ քո խնդիրքը:

Սիւրբին ուրախութեամբ ընկաւ իր «իշխանի» զիրկը, թեքերը փաթաթեց նրա պարանոցով, և իր բորբոքված, շառագունած թշերը սեղմեց նրա շրթունքի վրա: Այդ առաջին անգամն էր, որ մանկահասակ կինը այնպէս ջերմ, այնպէս անկեղծ սիրով զրկում էր իր բռնապետին, որին մինչև այն օր միշտ ատել, միշտ անիծել էր իր սրտում:

Այդ միջոցին կրկին հնչեց փողը և հեռուից լսելի եղան ձիւաների սմբակների ձայներ:

— Այժմ հեռացիր, նաղելիս, ասաց խանը կանգնելով և Սիւրբինին իր հետ վեր բարձրացնելով. — Թորոս իշխանը գալիս է:

Սիւրբին ծածկվեցաւ իր մոյլ-կապտադույն չափաւոր մէջ, ձգեց երեսի վրա անթափանցիկ

քօզը և դուրս եկաւ գաղտնարանից: Առաջին առջև նրան սպասում էր ծերունի ներքինապետը, որը առաջ ընկաւ և տարաւ տիկնոջը մինչև իր վրանը: Այնտեղ միայն հարցրեց ծերունին.

— Յաջողեցաւ:

Սիւրբին, ուրախութեան ժպիտը երեսին, պատասխանեց.

— Այո:

— Փառք Աստուծոյ, բացականչեց ծերունին իր գոհունակ ձեւքերը բարձրացնելով դէպի երկինք:

Թ.

Այնօր էր արդէն: Խանի վրանի առջևի հրապարակի վրա, դէպի աջ կողմը, կարգով շարված էին երկու հարիւր զինված ձիաւորներ խանի հեծելախմբից, հրացանները պատրաստ ձեռներին բռնած: Նրանց հանդէպ, դէպի վրանի ձախ կողմը, նոյնպէս կարգով շարված էին երկու հարիւր հայ ձիաւորներ, նոյնպէս հրացանները ձեռքներին պատրաստ բռնած: Հսկ և պարսիկ ձիաւորների մէջտեղը թռված էր փողոցի նման մի երկայն տարածութիւն, որտեղից պիտի անցնէր Թորոս իշխանը: Այդ փողոցի ծայրից յայտնվեցաւ նա: «Սալամ»... գոռացին բոլոր ձիաւորները մի քանի անգամ և օդը թնդաց բաղմամբ ձայների որոտմունքից: Իշխանը նստած էր մի զեղեցիկ, սպիտակ նժուղի վրա, որի ամբողջ

առաջադէնը զարդարած էր արծաթով: Նա մի հըս-
կայատիպ մարդ էր, այրական խրոխտ զէմքով
և առիւծի հրացայտ աչքերով: Նրա առջևից
տարվում էին իշխանի բերած «փիշքէշները», որ
պիտի ընծայէր խանին: Եօթն հոգի մինը միւսի
ետևից, զվաների վրա դրած, տանում էին եօթն
պղնձէ սինիններ, որ ծածկված էին քլրմանի
թանգազին շալերով և իրանց մէջ կրում էին
զանազան հազուագիւտ և ծանրազին իրեղէններ:
Նրանց ետևից, սանձերից բռնած, տանում էին
երեք գեղեցիկ նժուգներ, որոց թամբը, սանձը
և բոլոր պարագայքը զարդարած էին արծաթով:
Նժուգները նոյնպէս ծածկված էին քլրմանի շա-
լերով: Այդ «փիշքէշների» ետևից գալիս էր ինքը
իշխանը, չբնագատած իր թիկնապահներով: Բոլոր
մահմետականները մի առանձին նախանձոտ կա-
տազութեամբ դիտում էին հայ իշխանի փառքը
և մեծութիւնը: Նրա կշտից քարշ էր ընկած եր-
կայն, կեռ թուրը, որի երախակալը զարդարած
էր թանգազին ակներով, իսկ գօտիի մէջ խրած
էին մի զոյգ ատրճանակներ, արծաթով պատած
կոթերով: Նա թէև քառասուն և հինգ տարեկան
կը լինէր, բայց երիտասարդի բոլորովին թարմ
զէմք ունէր, բաւական գեղեցիկ և կանօնաւոր
գծադրութեամբ: Արմ կտրած մօրուքի և զվսի
գանդրահեր մազերի մէջ դեռ ոչ մէկը չէր սպի-
տակել, չը նայելով, որ այդ մարդը իր կեանքում

խիտ սակաւ լուպէներ ազատ էր մնացել մաշող
վշտերից:

Նրբ իշխանը մօտեցաւ խանի վրանին, տասն-
քայլ հեռաւորութեան վրա ձիուց ցած իջաւ,
այդ ժամանակ խանը դուրս եկաւ վրանից, դի-
մաւորեց նրան, և ձեռքիցը բռնելով, բերեց
չադրի այն մասը, որ յատկապէս պատրաստված
էր պատուաւոր հիւրին ընդունելու համար: Իշ-
խանի թիկնապահները, որ թուով քսան և հինգ
հոգի էին, բոլորը ամենի և քաջ երիտասարդներ,
ձեռքները իրանց սրերի վրա դրած, կանգնեցին
վրանի մուտքի այն կողմում, որ կողմը նստած
էր իրանց տէրը: Նրանց հանդէպ կանգնած էին
խանի ֆէրրաշները, և անընկերատէր կերպով
նայում էին կոպիտ սխնեցի հայերի երեսին:

— Բարով եկաք, հազար բարով, ձեր խրա-
քանչիւր քայլը ինձ համար մեծ շնորհ եմ հա-
մարում, ստաց խանը իր երկրի բազաքավարու-
թեան սովորական ձևով:

— Ինձ բերեց ձեր սպասին, իբրեւ մի ուխտա-
ւոր, ձեր շնորհալի զէմքի լոյսը տեսնելու ցան-
կութիւնը: Ես ինձ բաղդաւոր եմ համարում, որ
վայելում եմ ձեր շնորհը և բարեսրտութիւնը,
և յօւսով եմ, որ միշտ անխախտ կը պահպան-
վին մեր բարեկամական կապերը, որպէս եղել
են միշտ:

Այսպէս երկար, երկու տարբեր և թշնամական

ցեղերի պետերը, մինը միւսին յայտնի կերպով չողտարթեցնելով, թափոււմ էին միմեանց առջև իրանց բարեկամական ջերմ զգացմունքը և սէրը։ Այդ միջոցին իշխանի ծառաները «փիշքէջները» ներս բերեցին։ Կօթն աղնձէ սինինսր շարվեցան խանի առջև։ Երբ նրանց վրայից վեր առեցին քիրմանի շալի ծածկոցները, խանի աչքերը կատարեւապէս չլացան։ Այդ թանգազին իրեղէնները թէև մէլիք վրթանէսի գանձի չափ չէին լինի, բայց դարձեալ մեծ հարստութիւն գիշտած էր սինինսրի վրա։ Մէկի վրա կիտլած էին ոսկի դրամներ, միւսի վրա՝ արծաթի դրամներ, երրորդի վրա՝ արծաթով դարդարած ընտիր զէնքեր՝ դաշոյն, ատրճանակ, զարաբինայ, վառօդի և գնդակի ամաններ և այլն։ Զորորդի վրա՝ արծաթից շինված և ոսկէջրած անօթներ՝ թասեր, կուլաներ, զէյլանի և չիրուխի գլուխներ և այլն։ Տինգերորդի վրա՝ գեղեցիկ չինեական ամաններ, վեցերորդի և եօթներորդի վրա՝ դանազան տեսակ նուրբ մետաքսեղէն և շալեղէն դործուածներ հարեմի կանանց հագուստի համար։

— Ի՞նչ նեղութիւն էք քաշել, խօսեց խանը այդ բոլորը տեսնելուց յետոյ, — դուք ինձ չափազանց ամաչացնում էք ձեր առատաձեռնութեամբ։ Ես, իրաւն ասեմ, չը գիտեմ, թէ ինչով կարող եմ գուրս գալ ձեր պարտաւորութիւնից։

— Այդ բոլորը ոչինչ նշանակութիւն չունի ձեր բարեսրտութեան առջև, պատասխանեց իշխանը ուրախ ժպտով, — ես դերվիշի *) նման ձեզ համար մի հատիկ մեխակ եմ բերել և աւելի ոչինչ։

Այդ միջոցին կանգնեցրին վրանի առջև իշխանի բերած երեք աղնիւ նժոյգները իրանց գեղեցիկ ասպաղէնով։

— Փահ... փահ... փահ... մաշալլա... բացականչեց խանը հիացմունքով, — դրանք, երևի, ձեր սեպհական երամակիցն են, եթէ ոչ, Սիւնեաց սմբողջ նահանգում այս տեսակ ձիաներ չը կան։

— Այո, իմ սեպհական երամակիցն են, պատասխանեց իշխանը և հրամայեց ձիապաններին, որ չուռ տան նժոյգները, որպէս զի խանը աւտնէ նրանց ձախ ոտի ազդրի վրա իր դրօշմը, որ էր հայոց Թ տառը։

«Փիշքէջի» ձիան ատամներին չեն նայում, ասում է հասարակաց առածը, բայց խանը կամենում էր տեղեկանալ նժոյգներին տոհմը, ծագումը, կարծես, փողը նաղը էր տուել և այդ աւելի վերջովեցնում էր իշխանին, թէև նա ամեն կերպով աշխատում էր ծածկել իր խռովութիւնը։

— Հնորհակալ եմ, շատ հնորհակալ եմ, ասաց

*) Մեխակը կամ կանաչ տերևը դերվիշների ամենամեծ ընծան է։

խանը ծանուցեալ, — ես վաղուց գիտէի, որ դուք շատ լաւ մարդ էք, իսկ այժմ ուրախ եմ, որ ես սխալված չեմ եղել իմ կարծիքի մէջ:

Այնուհետեւ նա հրամայեց իր ակտուալետին, որ նժուղները տանել տայ և խառնէ իր ձիւների երամակի հետ, իսկ սանդուխտարին (զանձապահին) հրամայեց, որ սինիների մէջ բերված ընծաները տանէ իր սանդուխտանան (զանձաւորանը):

Այդ միջոցին խանի գեղեցիկ հագնված մանկ-
լաւիկները չինէական նախշուն գաւաթների մէջ մատուցին շարքէթ, պատրաստած Ռաշտի լիմօնի ջրից, որի մէջ լողում էին սառուցի մանր կտորտանք: Զովացուցիչ ըմպելին մի քանի անգամ տրվեցաւ, ընդմիջվելով Շիրազի անուշահոտ թամբաքուրից պատրաստված դէյլանով: Զը նայելով այն բոլոր շողօքորթական խօսքերին, չը նայելով այն բոլոր մեծարանքին, որ խանը ցոյց էր տալիս հայոց իշխանին, նա դարձեալ իրան խաբված էր համարում, ընդունելով իշխանի բերած ընծաները և զրկվելով մէլիք Վըրթանէսի գանձից: Այդ ինչ յիմարութիւն էր, որ նա ընդունեց իր կնոջ առաջարկութիւնը, միթէ կնոջ խօսքին կարելի էր հաւատալ, միթէ առաջին կինը չէր, որ խաբելով իր տղամարդին, զրկեց նրան դրախտի փառքից: Այսպէս էր մտածում նա և տարուբերվում էր զանազան

չարանէն: Կորհուրդների մէջ, բայց չը գիտէր ինչ կերպով յագեցնել իր աղահուծեան կրքերը:

Խանը այն տեսակ մարդիկներից չէր, որ շնորհակալ է լինում ստացածովը. այս պատճառով Թորոս իշխանի հարուստ ընծաները ոչ միայն չը բաւականացրին նրան, այլ ձգեցին խիստ խորին կասկածանքի մէջ, — արդեօք այդ մարդը, որ այսքան կարողացաւ տալ ինձ, ուրեմն ինքան պէտք է պահած լինի իր համար: Նա տխուր էր, որ շատ ստացաւ, որովհետեւ այդ շատը ապացոյց էր ուրիշ շատերի, որ պէտք չէր թող տալ մի հայ մարդու մօտ:

Երբէթի խմելուց յետոյ մանկլաւիկները ձեռք լուանալու ջուր բերեցին, և կամենում էին ճաշի սեղանը պատրաստել:

— Ես մի պատառ հաց անգամ բերանս դնել կարող չեմ, մինչև գերիններին բանտից դուրս եկած և իմ մարդիկներին յանձնված չը տեսնեմ, ասաց Թորոս իշխանը փոքր ինչ սառը կերպով:

— Ինչո՞ւ էք շտապում, պատասխանեց նրան խանը ծիծաղելով. — դեռ ես ճաշ անուշ արէք, հանգստացէք, այնուհետեւ, երեկոյեան զովի ժամանակ, երբ գնալու կը լինէք, գերիններին ձեզ հետ կը տանէք:

Բայց պարսկական ճաշը. հողկական անուշահոտութիւններով, իսկ յաճախ թոյներով համեմած ճաշը, Թորոս իշխանին շատ չէր գրաւում: Նա

խկապէս ամբողջակ չունէր մի բանի ուտելու, թէն ճանապարհից էր եկած, թէն ոչինչ չէր կերած: Գերիներն վիճակը սաստիկ տանջում էր նրա առաքինի և սիրող սիրտը: Նա ցանկանում էր չուտով տեսնել նրանց, տեսնել, թէ որն է մեռել, և որը կենդանի մնացել: Բայց խանը չէր կամենում, որ իշխանը գերիներին նոյն ցաւալի դրութեան մէջ տեսնէ, որպէս պահել էր նրանց. այս պատճառով իր մանկաւիկներից մէկի միջոցով ծածուկ պատուէր տուեց բանտապետին, որ նրանց դուրս բերէ բանտից, չլիտները արծալէ, և կեղտոտութեան մէջ ապականված այդ թշուառներին փոքր ինչ մաքրել տայ:

Այդ միջոցին երկու մէլիքներէն վրանը մատախանի սպասաւորներից մէկը, որին կաշառել էին լրտեսելու, թէ ինչ վախճան կունենայ թոռս իշխանի այցելութիւնը:

— Դ՛նչ լուր բերեցիր, հարցրեց նրանից մէլիք Ֆրանգիւլը:

Սպասաւորը պատմեց, թէ խանը սիրով ընդունեց իշխանին, և չնորհակալ եղաւ նրա բերած «փիշքէշներին» համար, և հրամայեց բանտից դուրս բերել գերիներին և յանձնել իշխանի մարդիկներին:

Սպասաւորի խրաքանչիւր խօսքը նետի նման ծակում էր երկու մէլիքների սրտերը: Նրանք

գծրաբանում էին հաւատալ, թէ խանը կարող էր այսպէս հեշտութեամբ իր միտքը փոխել, թէ նա այնքան կը յիմարանար, որ չէր հասկանայ իր սեպական շահերը, և չէր կատարի այն բոլոր օգտաւէտ խորհուրդները, որ նրա հաւատարիմ մէլիքները հաղորդեցին նրան: Ուրեմն դարձեալ խորտակվեցաւ այն մեծ որոգայթը, որի մեքենայութեան վրա այնքան շատ աշխատել էին այդ երկու մարդիկը, դարձեալ նրանց ջանքերը իզուր անցան: Բայց խանի տրամադրութեան անակնկալ փոփոխութիւնը առանց մի նշանաւոր պատճառի չէր լինելու, և այդ պատճառը գիտենալը աւելի հետաքրքրում էր մէլիք Կաւթին:

— Դու այն ասա, Կաֆար, հարցրեց նա սպասաւորից, — զեռ թորոս իշխանը չեկած, ով տեսնվեցաւ խանի հետ:

— Հարեմից մի կին եկաւ խանի վրանը, և նրա հետ ատանձնացած զաղտնարանում, երկար խօսում էին, պատասխանեց սպասաւորը: — Յերունի ներքինապետը, սատանայի նման կանգնած էր զաղտնարանի մուտքի մօտ և ոչ ոք համարձակութիւն չունէր մօտենալու, դրա համար ևս ոչինչ լսել չը կարողացայ:

Մէլիք Կաւթիմը հասկացաւ բոլորը, դա անիծված Սիւրին պիտի լինէր, որ այս անգամ ևս խոչնդոտ դրեց ձոր ձեռնարկութեան առջև, որ այս

անգամ ևս ոչնչացրեց նրա բոլոր յոյսերը: Աստա-
ղութիւնը, վրէժխնդրութիւնը իր ամբողջ գծովա-
յին վրդովմունքով լցրին թշուառ հօր սիրտը: Նա
այնքան մեծ ակնկալութիւններ ունէր իր աղջ-
կանից, նա հաւատացած էր, որ Սիւրբին կը լինի
մի լաւ միջնորդ, մի լաւ բարեխօս իր և խանի
մէջ, և կաշխատէ կատարել հօր բոլոր ցանկու-
թիւնները, իսկ այժմ հակառակն էր տեսնում:
Խաբւած յոյսը աւելի զայբացնում էր նրան:
Նրան յայտնի էին բոլոր պատճառները, թէ ին-
չու Սիւրբին այսպէս էր վարվում: Նա ծախեց
իր աղջկան, վաճառեց նրան փառք և իշխանու-
թիւն ստանալու համար: Նա խեց նրան քրիս-
տոնէական ընտանիքից և ձգեց մահմետական
հարեմի ապականութեան մէջ և, որ ամենագլ-
խաւորն է, նա զրկեց աղջկան իր սիրած տղա-
մարդից... որը այժմ գտնոււմ էր մի և նոյն դե-
րիներին թուում... և որի շղթաները կամենում
էին աւելի ծանրացնել, և եթէ հնար կը լինէր,
նրա կեանքին մահ նիւթէլ... Անգութ, անողորմ
փառասէրը կարծում էր, թէ կարող կը լինի
խեղդել բնութեան ձայնը իր սիրող դստեր մէջ,
կարծում էր, թէ պարսկական փակված հարեմի
խլութեան մէջ բոլորը կը մոռանայ նա, ինչ որ
առաջ այնքան թանգազին, այնքան մօտ էր նրա
սրտին: Նա չէր կարծում, թէ հայ ընտանիքի
ստրկացած դստեր մէջ կարող է լինել այս աս-

տիճան կամքի և բնաւորութեան հաստատութիւն:
Նա չէր մտածում, որ Սիւրբի այժմեան կեանքի
պայմանները կարող էին նրան աւելի խելամուտ
զարձնել և աւելի ջերմ կերպով բորբոքել նրա
սրտում կորցրած տղամարդի սէրը:

Մէլիք Ֆրանդիւլի արծուի տեսութիւնից ան-
յայտ չը մնաց իր գործակցի խռովութիւնը.
նա տեսաւ, թէ որպէս այդ սառնասիրտ և անա-
գորոյն մարդը շփոթութեան մէջ ընկաւ, երբ
լսեց սպասաւորի բերած համբաւը: Բայց ինքը
չէր հաւատում, որ խանը փոխած լինի իր միտ-
քը, նա աւելի հաւանական էր համարում, որ
խանը կընդունէ Թորոսի բերած ընծաները, կը
խոստանայ վերադարձնել գերիներին, իսկ յետոյ
կը հրամայէ նրան բանտարկել, և կը պահանջէ
նրանից մէլիք Վրթանէսի դանձերը: Ի՞նչ կարող
են անել իշխանի բերած երկու հարիւր ձիաւոր-
ները և քսան ու հինգ թիկնապահները, որոնց
առջև կանգնած են նոյն թուով զինված պարսիկ-
ներ: Շատ-շատ հայերի և պարսիկների մէջ կռիւ
կընկնի, մարդիկ կը սպանվեն, բայց զարձեալ Թո-
րոսը կը մնայ խանի ձեռքում:

— Դու հաստատ զիտեմ, որ խանը հրամայեց
գերիներին յանձնել Թորոսի մարդկանց ձեռքը,
հարցրեց նա սպասաւորից, չը նայելով, որ նա
արդէն հաղորդել էր այդ տեղեկութիւնը:

— Ինչպէս չը զիտեմ, պատասխանեց սպասա-

ւորը գործադէտ մարդու եղանակով, — ես իմ ա-
կանջով լսեցի և իմ աչքով տեսայ, երբ բանա-
պետը խանից հրաման ստանալով, գնաց, բաց ա-
րեց բանտի դռները և պատուիրեց իր սպառա-
ւորներին մաքրել գերիներին, որ իշխանը նրանց
այնպէս կեղտոտ չը տեսնէ:

Սպասաւորը կրկին հեռացաւ, պատուէր ստա-
նալով երկու մէլիքներից, եթէ մի նոր փոփո-
խութիւն կամ մի նոր դէպք կը պատահէ՝ չուտով
խմացում տալ նրանց:

Սպասաւորի հեռանալուց յետոյ երկու մէլիք-
ները, կայծակնահար եղած մարդու նման, եր-
կար մնացին մի սոսկալի չփոթութեան մէջ: Նը-
րանցից ամեն մէկը խօսք չէր գտնում իր սրտի
ցաւը և վրդովմունքը արտայայտելու: Մէլիք
Ֆրանգիւլը մինչև այսօր յոյս էր դրած մէլիք
Գաւիթի խորամանկութեան և բազմափորձութեան
վրա: Նա հաւատացած էր, որ այդ բանասարկուն
իր ազդեցութեան տէր գտեր միջնորդութեամբ
ամեն ինչ կարգի կը դնէ: Իսկ այժմ մի խուլ
զգացմունք նրան համոզում էր, թէ Սիւրին խիստ
անհորհակալ գործիք է հօր ձեռքում, թէ հայրը
այնքան ազդեցութիւն չունի նրա վրա, որքան
լնքը աշխատում է ցոյց տալ, և վերջապէս Սիւ-
րին հակառակ է գնում հօր ձեռնարկութիւններին:
Այդ կարծիքների մէջ աւելի համոզվեցաւ նա
սպասաւորի այն խօսքով, որով յայտնեց, թէ

Թորոս իշխանի գալուց առաջ, հարեմի կնիկնե-
րից մէկը վրանի զաղանարանում տեսնվեցաւ
խանի հետ: Ո՞վ կարող էր լինել այդ կինը, եթէ
ոչ Սիւրին. և կնիկներից որին կարող էր հետա-
քրքրել գերիների վիճակը, եթէ ոչ նրան:

— Դուք չէք կարծում, որ այդ բոլոր գործերը
փչացնողը ձեր աղջիկն է, հարցրեց նա մէլիք
Գաւիթից:

Թշուառ հօր լեզուն կապվեցաւ, չը գիտէր,
թէ ինչ պէտք էր պատասխանել. անակնկալ
հարցը սարսափեցրեց նրան:

— Նս չեմ կարծում, պատասխանեց նա բոպէ-
ական մտայնութիւնից յետոյ:

— Ապա ինչով էք բացատրում Սիւրիի խանի
հետ տեսնվելը Թորոսի գալուց առաջ:

— Նս առաւօտեան ձեզ պատմեցի, թէ այս գի-
շեր հարեմի մէջ պատահել է մի անկարգութիւն,
կնիկներից մէկը Սիւրիի քնած ժամանակ կտրել
է տուել նրա ծամերը, երևի, այս առիթով դիմել
է նա խանին, յայտնելու իր դանդաղը:

Թէև մէլիք Գաւիթի բացատրութիւնները հե-
ռու չէին հաւանականութիւնից, այսուամենայ-
նիւ, մէլիք Ֆրանգիւլի սրտում մնաց մի խուլ
կասկած դստեր և հօր յարաբերութիւնների մա-
սին, մանաւանդ երբ նա մտաբերեց, որ առաւօ-
տեան Սիւրին մերժել էր հօր այցելութիւնը,
պատճառ բռնելով իր տկարութիւնը: Հարազատ

հօրից աւելի ո՞ւմ կարող էր ընդունել հիւանդ աղջիկը, որ մահմեդականների մէջ ոչ մի աղգահան, ոչ մի բարեկամ չունէր: Եւ ի՞նչ հրաշքով այդ հիւանդը այնպէս շուտ առողջացաւ, որ ըստապէս բողոքել իր ծամերի կտրվելու մասին: Այդ բոլորը մէլիք Ֆրանզիսկին թւում էին անլուծանելի հանելուկներ:

Բայց մէլիք Գաւիթի համար ամեն ինչ պարզ էր, թէև նա աշխատում էր խորամանկութեամբ ծածկել: Նրան յայտնի էր իր դստեր սէրը Գեւուաղի Շահումեան իշխանների վերջին ժառանգի՝ Ստեփաննոսի հետ, որ այժմ գերիների թւումն էր գտնվում, որին սպանել տալու ամեն միջոցները անցան ապարդիւն...: Նա գիտէր, որ Սիւրին այնքան խելք ու այնքան համարձակութիւն ունէր, որ կարող էր ցրել խանի հրապուրանքը Ստեփաննոսի հօր՝ մէլիք Վրթանէսի առասպելական զանձի մասին: Եւ վերջապէս, նա բոլորովին բնական էր համարում, որ Սիւրին կաշխատէր յաջողեցնել գերիների ազատութիւնը, որպէս զի նրանց թւում ազատված լինի և իր սիրելին:—Այդ բոլորը ոչնչացնելու, այդ բոլորը խափանելու համար, և Թորոս իշխանին ձեռնունայն, ամօթալի վերադարձնելու համար՝ բաւական էր մի խօսք ասել խանին,—բաւական էր յայտնել նրան, թէ իր պաշտելի Սիւրին խաբոււմ է, դաւաճանում է նրան, թէ նա սիրում է այն

գերիներից մէկին, որոնց ազատութեան համար բարեխօսութիւն է անում, թէ նա վաղուց իր սիրտը տուած էր ալդ պատանուն, որ կարող է մի ժամանակ ոչ միայն խել նրա հարեմից կնիկներից ամենագեղեցիկին, այլ տիրանալ և այն դաւառին, որ պատկանում էր նրա հօրը, որը նուաճելու համար խանը դործ դրեց այնքան շատ զոհողութիւններ: Այդ բոլորը անագորոյն հայրը պատրաստ էր յայտնել խանին: Նա պատրաստ էր մատնել հարազատ աղջկան, Բայց ի՞նչ կը լինէր դրա հետեանքը:—Հետեանքը, որպէս պարզ հայելու մէջ, տեսնում էր նենդաւորը. խանը, արդարեւ, գերիներին դարձեալ կը պահէր իրանց շղթաների մէջ և Թորոս իշխանին դարտակ ճանապարհ կը դնէր: Խանը Ստեփաննոսին սպանել կը տար: Խանը նրա սիրուհուն՝ Սիւրին խեղդել կը տար կամ խայտառակութեամբ դուրս կը ձգէր իր հարեմից: Այդ բոլորը անտարակոյս կանէր խանը: Բայց ի՞նչ կը շահէր մէլիք Գաւիթը, —անա այդ հարցը տանջում էր նրան: Սիւրի անհաւատարմութիւնը պէտք է պատճառ դառնար նրա հօրը կորցնել իր բոլոր նշանակութիւնը խանի աչքում: Եթէ այժմ թէ հայ և թէ մահմեդական հասարակութիւնների մէջ համարում և ազդեցութիւն ունէր նա, դրանցով պարտական էր իր աղջկանը, որ խանի առաջին կինն էր: Բայց երբ Սիւրին այլ ևս չէր լինի, այնուհետեւ

նվ մարդու տեղ կը գնէր տաթեապի ուրացողին: Այժմ նրան թէն սրտով չէին յարգում, բայց նըրանից վախենում էին, որովհետեւ խանի նման մի հզօր փեսայ ունէր: Բայց երբ նրա բոլոր կապերը կը քանդվէին խանի հետ, այնօրից նա կընկնէր, այն օրից նա կը կորցնէր բոլորը: Թէն Սելւրին ոչ մի ժամանակ չէր օգնել նրա չար նըպատակներին, թէն նա միշտ հակառակել էր հօր եղեռնական դիտաւորութիւններին, բայց այդ գիտէր հայրը միայն, զրոյց այլապէս էին նաշում գործերի վրա: Գրտից այնպէս էին կարծում, թէ մէլիք Գաւիթը իր աղջկայ միջնորդութեամբ խանի խելքը, միտքը և սիրտը իր ձեռքումն ունի: Ի՞նչու չը շահվել միամիտներէ՝ այդ երեւութական կարծիքից: Ի՞նչու իր ձեռքով ոչնչացնել իր բախտը....

Խարէութեան սովորութիւնը զսպեց չարագործին հարազատ աղջկան մատնելու ցանկութիւնից, ոչ թէ նրա կեանքը և պատիւը խնայելու մտքով, այլ իր կարծիքական բարեկամութիւնը խանի ընտանիքի հետ պահպանելու համար:

—Այդ պարսիկներին խօսքերին ամենակին հաւատալ չէ կարելի, ասաց մէլիք Ֆրանգիւլը տըհաճութեամբ, ընդհատելով իրանց մէջ տիրող լըռութիւնը:

—Պարսիկները մեղաւոր չեն, պատասխանեց

մէլիք Գաւիթը սառնած հեամբ, —մեղաւորը մենք ենք, որ չը գիտենք իր ժամանակին ցանել, որ կարողանանք նոյնպէս իր ժամանակին սրտով ստանալ: Սուտ չէ ասած, թէ «հայի վերջին խելքն է գովելի», որովհետեւ գործի սկզբում նա խելք չունի: Այսպէս էլ վարվեցանք մենք: Թորոս իշխանը առաջուց իր պատուիրակներին ձեռքով ամեն ինչ խօսում է, ամեն պայմաններ վերջացնում է խանի հետ, իսկ մենք յետոյ ենք իմանում, և յետոյ ենք աշխատում նրա արդէն եփած սպուրի մէջ սառն ջուր խառնել: Այսպիսի յիմարութիւնները խիստ սակաւ անգամ են յաջողութիւն դառնում:

Ժ.

Մինչ երկու մէլիքները տխուր յուսահատութեան մէջ նախատում էին իրանց անհեռատեսութիւնը, պախարակում էին իրանց դանդաղկոտութիւնը, այդ միջոցին բանտապետը գուրս էր բերում գերիներին իրանց մթին խորշից: Նայողների հետաքրքիր բազմութիւնը հաւաքված էր այնտեղ, և անհամբերութեամբ սպասում էին տեսնել այդ թշուառներին, որոնք մի քանի ամիս մաշվում էին ստորերկրեայ զնդանի մէջ: Այնտեղից գուրս բերեցին գերիներին, մի քանի զաթար և քօվ, որպէս քարավանի գրաստներին կապում են միմեանց հետ: Իւրաքանչիւր զաթարը բաղկացած էր քսան հոգուց. մի եր-

կայն չղթայ, որի օղակները անց էր կացրած նրանց պարանոցով, կապում էր բոլորին միասին: Այդ բաւական չէր, բոլորի թեքերը ետեւից չղթւած էին կապանքներով: Բանտապետը սկսեց բաց անել կապանքները: Շատերը չէին կարողանում ոտքի վրա կանգնել. ստորերկրեայ զնդանի սպանիչ խոնաւութիւնը անցել էր մինչեւ նրանց ոտկները և թուլացրել էր նրանց ջգերը: Մարդ սարսափում էր, նայելով այդ մաշված, դեղնած, դալկացած թշուառների վրա, որոնք, կարծես, գերեզմանից էին դուրս գալիս: Տեսնելով դրսի օդը, դրսի լոյսը, նրանք փոքր ինչ զուարթացան, իսկ ազատութեան յոյսը կեանք տուեց նրանց: Շղթաների մէջ մի քանիսը մեռած էին. դիակը օրերով կապված էր մնացել կենդանի ընկերի հետ: Նրանց կրկին ձգեցին զնդանի մէջ, որ հրապարակի վրա չը մնան, որ թորոսի մարդիկը չը տեսնեն:

Դժուար է նկարագրել այն անսահման ուրախութիւնը, որ տիրեց այդ թշուառներին, երբ թորոս իշխանի մարդիկը եկան նրանց տանելու: Մի քանի բոպէ ցնորվածի նման գրկախառնվում էին, համբուրվում էին և շատերը արտասուք էին թափում: Թորոսի, այդ փրկարար հրեշտակի, պաշտելի անունը մոռանալ տուեց նրանց կրած տանջանքները: Շատերի համար մաքուր հագուստներ էին ուղարկված իրանց ազգականնե-

րից, և սկսեցին անմիջապէս փոխել իրանց կեդտոտ հագուստները: Պատանի Ստեփաննոսը հագնվեցաւ, որպէս վայել էր մի իշխանական տոհմի ներկայացուցչին: Նրա գլխի վերքը հոգատար տիկնոջ խնամքով բաւական լաւացած էր, իսկ գոնաթափ, հիւանդոտ դէմքը իր թառամութեան մէջ աւելի զեղեցիկ էր: Նրբ նա բոլորովին պատրաստ էր, խանի մանկլաւիկներից մէկը մօտեցաւ նրան, և գլուխ տալով, ասաց.

— Խանը հրամայեց իր հետ ճաշել, թորոս իշխանն էլ այնտեղ է:

Մանկահասակ իշխանազը, չրջապատված իր հօր վաղեմի ծառաներով, սկսեց հանդիսաւոր կերպով դիմել դէպի խանի վրանը: Նա անցաւ կանանոցի չաղրների մօտից: Այդ միջոցին չէր կարելի չը նկատել, որ կանանոցի սարայիէրդէից մի զեղեցիկ կանացի գլուխ կիսով չափ վեր բարձրացաւ, և երկու խոշոր, սևորակ աչքեր սկսեցին նայել նրա վրա: Մանկահասակ իշխանազը շուտ եկաւ դէպի այն կողմը և երկուսի աչքերը հանդիպեցան միմեանց: Այդ լուռ, խորհրդաւոր հայեացքի մէջ նրանք այնքան շատ բան ասեցին միմեանց և այնքան ազդու կերպով արտայայտեցին իրանց սրտերի զգացմունքները, ինչ որ անկարող էր կատարել պերճախօս լեզուն: Մնացած գերկները տարվեցան թորոսի ձիաւորների մօտ:

Խանը այնպէս ուրախութեամբ հանդիպեց Ստեփաննոսին, կարծես, մի ցանկալի հիւր էր ընդունուէ՞, կարծես, նրա հետ նոր էր ծանօթանում, և ընտել չը գիտէր, թէ նա իր բանտումն էր գտնվում: Շահումեանների տունը քանդողը, նրանց երկիրը բռնութեամբ դրաւողը և Ստեփաննոսի հօրը ու նրանց ամբողջ ազգատունը սրից անցկացնող դադանը, մի առանձին քաղցրութեամբ դարձաւ դէպի պատանին, հարցնելով.

— Լաւ էք, ռիշ էք, առողջ էք, ինչպէս է ձեր քէֆը. բարով եկաք, հազար բարով, և հրաւիրեց նրան նստել իր մօտ:

Հպարտ պատանին, որին աւելի էին ցաւեցնում այդ շողոքորթութիւնները, քան իր մի քանի ընկերացիները, առաջ կրած շղթաները, սառնութեամբ զլուխ տուեց խանին, յայտնելով իր չնորհալուծութիւնը նրա ուշադրութեան համար, և մօտեցաւ թորոս իշխանին, գրկվեցաւ նրա հետ: Իշխանի ուրախութեանը չափ չը կար: Այդ վեհ, մեծասիրտ մարդը չը կարողացաւ գրաւել իր արտասուքը, երբ տեսաւ իր ~~կողմէն~~ ^{հինգ տարեկան} ~~հինգ տարեկան~~ որը կարծես ողիւնների աշխարհիցն էր վերադարձել, որին միւսանդամ տեսնելու ամենաինչոյս չունէր: Պատանու մռայլ տաքերում նոյնպէս երեացին արտասուքներ: Այդ անսահման հոգեկան վրդովմունքի մէջ, նրանք ոչինչ միմեանց

ասել չը կարողացան: Խանի վրա առօգեց նրանց սրտաշարժ դրութիւնը և խնդրեց նրանց նստել, ասելով.

— Հանգստացէք, ամեն բան լաւ կը լինի... ամեն բան կը մոռացվի... Հարժէ այսքան տըլտըլ անցաւոր աշխարհի համար...

Բռնակալի խօսքերի մէջ կար և կարեկցութիւն և դառն հեգնութիւն: Նա խրատում էր չը տխրել անցաւոր աշխարհի համար, որ միայն հայ մարդու վերաբերութեամբ սև էր. նա խրատում էր մոռանալ սպանված հօրը, սպանված մօրը և սրից անցած ամբողջ ազգատունը. նա խրատում էր մոռանալ հայրենական կորցրած երկիրը, որ իր ձեռքումն էր գտնվում:

Պատանի Ստեփաննոսը իր աչքերը դարձրեց դէպի վրանի առջևի հրապարակը, որի վրա միմեանց հանդէպ կանգնած էին երկու շարք ձիաւորներ՝ հայոց և պարսից: Իւրաքանչիւր շարքը զուգահեռաբար ձգվում էր, որպէս մի ուղիղ պարիսպ կազմված ղինված ձիաւորներից: Թէ հայերը և թէ պարսիկները, հրացանները պատրաստ ձեռներին բռնած, լուռ և կասկածաւոր կերպով նայում էին միմեանց երեսին: Արեգակի ճառագայթները շողորդում էին փայլուն դէնքերի վրա և լուսաւորում էին անթիւ գլուխներ սև փափախներով, որոնք միախառնվելով, ձեացնում էին մի տեսակ մթին, լայնատարած զան-

դուած: Նոյն երեսը շուռ տուեց և հարցրեց թո-
րոսից:

— Մենք երկաթ պիտի մնանք այստեղ:

— Ոչ, պատասխանեց իշխանը լուռթեամբ, —
չուտով կը հեռանանք:

Խանը հասկացաւ, որ նրանք աճապարում
են, հրամայեց շուտով ճաշի սեղանը պատրաս-
տել:

— Գուք, ասաց նա դառնալով իր հիւրերին,
իմ աղուհացը անպատված կը լինէք, եթէ ինձ
հետ չը ճաշէք: Ձեզ սեղանակից կը լինեն և
երկու յարգելի հիւրեր՝ մէկը Ֆրանգիւլը ու
Բաղը բէկը:

Լսելով այդ երկու դարչելի անունները, թէ
իշխանը և թէ պատանին երկուսն էլ վերկացան,
յայտնելով, թէ չեն կարող սեղանակից լինել
այնպիսի անաղնիւ և զգուհի մարդկանց հետ:
Խանը նկատելով այդ, կատակի ձև տուեց իր
առաջարկութեանը, ասելով.

— Տեսնում էք, սուտ չեն ասում, թէ հայերի
մէջ միաբանութիւն չի լինի:

— Շների հետ չեն միաբանւում, խան, պա-
տասխանեց իշխանը փոքր ինչ բարկացած ձայ-
նով: — Սոսկիսի ցած խաբերանները, այսպիսի ա-
նամոթ ստախօսները, այսպիսի անարգ դաւա-
ճանները ձեզ մօտ միայն կարող են չնորճ գըտ-

նել, իսկ ես նրանց զգուհի երեսը տեսնել չէի
ցանկանայ:

Որքան և վիրաւորական լինէին իշխանի խօս-
քերը, դարձեալ խանը իրան զսպեց և ոչինչ չը
պատասխանեց: Նրան ինչ վիսա երկու հայ մէ-
լիքներ յած, անամոթ, դաւաճան լինելը, երբ
նրանց խաբէութիւններից և դաւաճանութիւննե-
րից միշտ օգուտ էր քաղում նա: Բայց ցանկա-
նալով իր հիւրերին, որքան կարելի է, գոհունակ
ճանապարհ դնել, նա իր խօսքը յետ առեց: Իշ-
խանը և պատանին հանդատացան, կրկին նստե-
ցին իրանց տեղերը:

Խանը սովորութիւն չունէր իր կանանոցում
ճաշելու. կանանց հասարակութիւնը կարող էր
ստորացնել նրա արժանաւորութիւնները: Բացի
զրանից, նրա կարծիքով, կանանց հետ պէտք
չէր շատ մտերիմ լինել, պէտք չէր շատ ընտա-
նեքար վարվել, այդ կարող էր նրանց աւելի հա-
մարձակութիւն տալ, կարող էր, ինչպէս ասում
են՝ նրանց շերտը բաց անել, լրբացնել: Այնի-
ներին պէտք էր միշտ երկիւղի և տարտափի տակ
պահել: Իսկ նրանց հետ ճաշելը գլխաւոր պատ-
ճառներից մէկն էր մտերմական յարաբերութիւն-
ների, որը շատ ցանկալի բան չէր: Եւ ո՞ր մէկի
մօտ կարելի էր ճաշել: Նրանք թիւ և համար
չունէին: Մէկի մօտ հիւր լինելիս, միւսը ան-
պատճառ կամ կը վիրաւորվէր, կամ կը նախանձ-

վեր և կամ մի ուրիշ ղալմադալ կը սարքէր: Կը-
նիկները ընդհանուր սեղանատուն չունէին, այլ
խրաքանչիւրը իր առանձին խոհանոցն ունէր:
Այս պատճառով խանը, հետեւելով բոլոր մեծ
մարդերի սովորութեանը, միշտ իր վրանումն էր
ձաշում և միշտ ունէր իր մօտ հիւրեր իր ցեղի
նշանաւոր պետերից: Հացը, առատաձեռնութիւ-
նը գլխաւոր պայմանն էր այդ գիշակներին իր
հետ կապելու: Բայց այս անգամ ոչ ոք չէր կանչ-
ված, որովհետեւ այնտեղ կային քրիստոնեայ հիւ-
րեր, որոնց հետ սեղանակից լինելը կարող էր
պղծել Քահնազականներին: Չէր կանչված և ցեղի
չէյիսը, հոգևոր գլուխը, որը խանի սեղանի ան-
պակաս հացկատակն էր: Այնտեղ կային, բացի
իշխանից և պատանի Ստեփաննոսից, գլխաւոր
քարտուղարը (մունչի-բաշին) և բժիշկ ղէրվիշը,
սրին խանի խնդրելով չէյիսը ուղարկել էր նրա
մօտ, որ հրաշալի մաջուրի մասին տեղեկու-
թիւն ստանայ: Այդ տարօրինակ մարդը իր օտա-
րտի կերպարանքով իր վրա էր դարձնում բո-
լորի ուշադրութիւնը: Յունական հին մերկիմաս-
տակների պէս, նրա ամբողջ հագուստը բաղկա-
նում էր մի կտորից միայն. դա հասարակ կտա-
ւից կարված մի սպիտակ շապիկ էր, հայոց ժամի
շապիկների նման, որ իջնում էր մինչև կրունկ-
ները: Բացի դրանից ունէր մի վագրի մերթի,
որ նստելու ժամանակ իր տակն էր ձգում որպէս

օթոց, իսկ ման գալու ժամանակ ձգում էր ու-
սերի վրա որպէս թիկնոց: Գլխարկ չունէր. նրա
տեղը բռնել էին գլխի խիտ, խճճված մազերը,
որոնք երբէք մկրատի և սանրի երես չը տեսնե-
լով, թաղիքի ձև էին ստացել: Մօրուքը նոյնպէս
սանրված չէր: Երևում էր, այդ ղէրվիշը պատ-
կանում էր Ֆաղիւրների այն դասակարգին, որոնք
ճգնութեան և իրանց անձը զրկելու ու տանջե-
լու փորձութիւնների մէջ, մտածում են գտնել
մի հոգևոր և գերբնական գոյափոխութիւն, որ
կը հեշտայնէր նրանց հաղորդակցութիւն ունե-
նալ անմարմին էակների հետ: Մերկ պարանոցի
վրա, կանանց մանեակների նման, անցուցած
էին զանազան տեսակ յուլուններ, որոնք կա-
խարդական և թիլիոմանական նշանակութիւն
ունէին: Երկու ձեռքերի, մինչև արմուկները
մերկ, բաղուկների վրա փաթաթած էին աղօթե-
լու «տէրողորմեաներ» իւսրից *) չինված,

*) Իւսր մի տեսակ ծովային կենդանի է պօ-
լիպների տեսակից:

նակում թիւն ունէր, քան հասարակ խօսակցութեան: Նա աւելի պատասխանում էր, քան թէ խօսում էր: Նրա պատասխանները կարճ հանելուկների ձև ունէին, որոնց պէտք էր մեկնել, բացատրել:

Ճաշի ժամանակ էր: Խանի մանկլաւիկներից մէկը, մի ձեռքում բռնած արծաթէ լազան, միւսում արծաթէ ջրածիկ (ափտաֆայ) մտաւ վրան: Նախ լազանը դրեց խանի առջև, չոքեց, սկսեց ջուր ածել նրա ձեռքերի վրա, նա լուացվեցաւ: Յետոյ լազանը դրեց դէրվիչի առջև. նա հրաժարվեցաւ լուացվելուց, յայտնելով, թէ լուացվելու սովորութիւն չունի: Յետոյ լազանը դրեց իշխանի առջև, իսկ նրա լուացվելուց յետոյ հերթը հասաւ Ստեփաննոսին և գլխաւոր քարտուղարին: Բայց պէտք է ասած, որ ամենքը աւելի թրջում էին իրանց ձեռքերը, քան թէ լուացվում էին:

Դէրվիչի իւրաքանչիւր խօսքը, իւրաքանչիւր սովորութիւնը միշտ խորհրդաւոր նշանակութիւն ունենալով պարսիկների աչքում, խանը հետաքրքրվեցաւ խմանալ, թէ ինչու նա լուացվելու սովորութիւն չունի:

— Պէտք է մաքրել ներքին մարդը, պատասխանեց նա:

— Ներքին մարդը ո՞րն է:

— Հոգին:

Եւ իրաւ, նա երկար տարիներ չէր լուացվել,

և ամբողջ մարմինը կեղտով պատած, հոտում էր: Աւելի զգուշիւն այն էր, որ զանազան միջատներ համարձակ կերպով շրջում էին, վրժվում էին նրա մօրուքի և գլխի մազերի մէջ, մարմնի վրա, որոնց յօժարակամ նա թոյլ էր տուել ուտել իր անձը *):

Լուացվելուց յետոյ մի ուրիշ մանկլաւիկ տարածեց յատակի գորգերի վրա սեղանի գոյնզգոյն սփռոցը: Սփռոցը գործված էր Սպահանում և նրա ծոպաւոր եղերքի վրա արարական խոշոր տառերով տպված էին զանազան աղօթքներ զօրանից և այլ գրքերից: Մէջտեղում գունաւոր թելերով ասղեգործած էին հրեշտակների պատկերներ, որոնք ձեռքներին բռնած ունէին փոքրիկ մանգաղներ և ցորենի հասկերից փունջեր: Այդ բոլորը արտայայտում էին խանի կրօնական ջերմ հաւատը: Իսկ աւելի ազատամիտ մահմեդականների սեղանի սփռոցը Պարսկաստանում այլապէս է պատրաստուում: Ղօրանի աղօթքների փոխարէն լինում են Հաֆիսի կամ Սաադիի երգերից զեղեցիկ կտորներ, իսկ հրեշտակների փոխարէն՝ կիսամերկ աղջիկներ, կամ մշտադալար հիւրիների ու փէրիների հրապուրիչ պատկերներ, որոնք կամ պար են դալիս, կամ դիսու բաժակ-

*) Մահմեդական ուխտաւորները Մեքքայ գնալու ժամանակ, նոյնպէս մեղք են համարում ողնչացնել իրանց մարմնի միջատները:

ներ են մատուցանում քէյֆի մէջ ընկղմված մի հեշտատէր տղամարդի:

Երբ սեղանի սփռոցը տարածվեցաւ, մի քանի ուրիշ մանկլաւիկներ, զլիններ Վրա դրած, բերեցին երեք մեծ պղնձէ սինիներ *), որ սքողած էին թանգազին ծածկոցներով, որոնց եզերքը զարդարած էին ոսկեթել ծաւերով: Սինիներէ մէկը դրեցին խանի առջև, միւսը իշխանի և Ստեփաննոսի առջև, իսկ երրորդը զերմիշի և զլխաւոր քարտուղարի առջև: Երբ բարձրացրին ծածկոցները, սինիների վրա տեսնվեցան չարված բաղմաթիւ մեծ և փոքր պղնձէ պնակներ, լի զանազան տեսակ կերակուրներով, որոնց տաքութիւնը պահպանելու համար ծածկված էին նոյնպէս պղնձէ կալպակներով: Այդ անօթները իրանց գեղեցիկ քանդակադործութիւնով, որպէս պարսկական արհեստի և ճարտարութեան ճոխ արդիւնք, կարող էին ամենանշանաւոր մուզեռումի զարդարանքը լինել:

Բայց թորոս իշխանի ուշադրութիւնը գրաւեց մի ուրիշ բան. ոչ միայն խանի սինին և նրա կերակուրները բաժանված էին միւս հիւրերի բաժիններէ, — այլ նա նկատեց, որ խանի սինի ծածկոցի ճոթերը կնքված էին մոմով: Նա ա-

*) Սինի նշանակում է պղնձից կամ արծաթից չինված մատուցարան, որը բոլորակ ձև ունի:

ռաջ խնամքով նայեց կնիքներին, յետոյ իր ձեռքով վեր առեց ծածկոցը:

Իշխանը չը կարողացաւ իր հետաքրքրութիւնը զսպել և կասկածաւոր կերպով հարցրեց.

— Այդ ինչ կնիքներ են:

— Ի՞նչու էք զարմանում, խօսեց խանը ժպտելով, — այն խոհանոցը, ուր պատրաստվում են ինձ համար կերակուրներ, զանվում է մօրս անմիջական հսկողութեան ներքոյ, նա սովորութիւն ունի իր ձեռքով ածել կերակուրները և իր կնիքով կնքած ինձ ուղարկել:

— Ի՞նչու համար:

— Ի՞նչպէս ինչու համար. կերակուրները կարող են թունաւորել:

— Ո՞վքեր:

— Կնիկները: Միթէ կարելի է նրանց հաւատալ, եթէ ինձ հետ թշնամութիւն էլ չունենան, կարող են կաշառված լինել դրսից: Անցեալ տարի փոքր էր մնում, որ ես պիտի մեռնէի, եթէ ինձ չազատէր մի թարմիղեցի հայ բժիշկ: Փլաւի մէջ թոյն էին խառնած, ես կերայ առանց զգալու. իսկոյն սկսեցին աղիքներս կտրատվել: Այն օրից մայրս արդեւեց այդ քածերին իմ խոհանոցը մոտնել, և կերակուրների սինին կնքված է ուղարկում ինձ, մի գուցէ սպտաւորները նոյնպէս չարութիւն գործեն: Ախար ամենն էլ այստեղ բարի պտուղներ չեն:

Խառնը այնպէս հասարակ կերպով էր խօսում իր ընտանեկան գաղտնիքների վրա, կարծես, այնտեղ մի սովորական բան լինէր թունաւորելը, սպանելը: Կնիկները, նրա կարծիքով, կեանքի ընկերներ չէին, այլ մի տեսակ անհաւատարիմ առարկաներ, որ լաւ չէին ծառայում, որոնց վրա յոյս դնել չէր կարելի:

— Յայտնվեցաւ թունաւորողը:

— Յայտնվեցաւ. ևս հրամայեցի անդամին ձգեցին մի տօպրակի մէջ և խենջարներով ծակ-ծկեցին:

Պարսիկների մէջ հարեմական դրութիւնը կնոջ վերաբերութեամբ պահպանուում էր և պատփի ժամանակ: Գահիճը չը պիտի տեսներ իր զոհի երեսը, այս պատճառով նրան սկզբից ձգում էին մի մեծ տօպրակի մէջ և բերանը կարում: Գործողութիւնը կատարուում էր տօպրակի դրսից, երբ ամեն ինչ վերջացած էր, մի և նոյն արւենաթաթախ պատանի մէջ գլխով տանում թաղում էին:

Խառնը մինչև անկամ պատմեց այն մանրամասնութիւնները, որ առիթ էին տուել այն «անդգամին» թունաւորել իրան. ասաց, որ նա մի հասարակ գիւղացի աղջիկ էր, մի օր որսորդութեան ժամանակ տեսաւ նրան լեռների վրա, ոչխարներ էր արածացնում. տեսաւ և հաւանեց նրան, ներքիններից մէկին ուղարկեց նրան բերե-

ցին իր կանանոցը. աղջկայ ծնողները ուրախացան, որ նա ընկաւ խանի կանանոցը, թէև մի ուրիշ տղայի հետ նշանված էր, բայց «անդգամ» երեխ չը մոռացաւ նրան, և խանին սպանելով, աշխատում էր կրկին ընկնել իր սիրելիի գիրկը:

Հարեմական խնորիզաները, խեղճ կնոջ եղբւրական պատմութիւնը, թոյնը, — այդ բոլորը այն աստիճան անախորժ տպաւորութիւն դործեցին թէ իշխանի և թէ պատանի Ստեփաննոսի վրա, որ նրանք բոլորովին կորցրին իրանց ախորժակը մի բան ուտելու, թէև պարսկական խոհանոցի արդիւնաբերութիւնը հրապուրելու չափ համադրւում էր: Պղնձէ պնակների կալպակները բարձրացնելով, գտան նրանց տակ ամեն տեսակ խորտիկներ, սխեալ մսեղէններից, մինչև ընդեղէն, բանջարեղէն կերակուրները և բազմատեսակ անուշեղէնները: Նրանց մօտ դրած էին անագին ամանների մէջ դանազան տեսակ քաղցր շերտէթներ և մածնաթան (աբդուդ), որոնց պէտք էր խմել անագին շերեփներով, որ խիստ նուրբ և զեղեցիկ կերպով չինված էին չիմշատի զեղին փայտից: Ոգեկից ըմպելիքներ չը կային: Գանակ, պատառաքաղ, սեղանի այսպիսի պարագայք չը կային: Բոլոր կերակուրները պէտք էր ուտել մատներով: Նրբեմն խառն իւղաթաթախ մատներով վեր էր առնում իր բաժնից մի պատառ:

տապալկած միս կամ մի բուռը փլաւ, և զնեւով իշխանի պնակի մէջ, ասում էր.— Կերէք, դա լաւ կտոր է: Այդ առանձին ուշադրութիւն և առանձին պատիւ էր հիւրին: Գէրվիշը ոչ մի կերակուրի չը դիպաւ, յայտնելով, թէ սովորութիւն չունի մսեղէն կերակուրներ ուտելու: Նրա կարծիքով, այդ մի տեսակ դազանութիւն էր, որ մի անասուն, մորթում, ուտում էր ուրիշ անասունի միսը: Նա առեց մի կտոր ցամաք հաց, թաթախեց աղի մէջ և կերաւ: Այդ եղաւ նրա ճաշը: Յետոյ հեռացաւ սեղանից, կուճ եկաւ վրանի մի անկիւնում, և հանեց իր կշտից քարը՝ ընկած, հովուի մախաղի նմանութիւն ունեցող դրպանից մի խնչ որ բան *), որեց փոքրիկ դէյլանի գլխի վրա, վառեց դէյլանը, սկսեց ծխել: Մի բողբոսում ամբողջ վրանը լցվեցաւ դառն, կծու և խեղդող ծխով: Բայց այդ արբեցուցիչ ծուխը որքան անտանելի էր ուրիշներին, այնքան բաւականութիւն էր պատճառում դէրվիշին: Նա արդէն մի տեսակ կիտաքուն դրութեան մէջ, աչքերը փակած, նիրհում էր, բայց դէյլանը բաց չէր թողնում ձեռքից և ծուխը մանր օղակներով դուրս

*) Գէրվիշների ծխելիքը կաշվում է բան կ, որ պատրաստվում է կանեփի ծաղիկներից ուրիշ բաղադրութիւնների հետ: Նա արբեցնում է ծխողին և նրա ուղեղի մէջ երեան է հանում գանազան տեսիլքներ:

էր դալիս երբեմն նրա սնչներից, երբեմն սևորակ և ուռած չրթունքի միջից: Սարսափելի էր նայել այդ կուճ եկած, մուսլոտ մարդու վրա, որ ներկայացնում էր մի չոր ու ցամաք կմախք, ոսկորների մի կոյտ, որ կոլոված էր իր սպիտակ շապիկի մէջ: Նրա ալյանդակ դէմքի վրա երևում էին երբեմն տենդային ցնցումներ, իսկ երբեմն անցնում էր մի տեսակ չարախնդաց ժպիտ: Մերթ-մերթ նրա բերանից դուրս էին թռչում խուլ, անորոշ հառաչանքներ անհասկանալի բառերի հետ:

— Նրեի, ողինների հետ է խօսում, ասաց խանը, մի առանձին շահաւատութեամբ նայելով դէրվիշի վրա:

Նա մի և նոյն դրութեան մէջ բոլորովին քրնեց, դարձեալ իր ձեռքից բաց չը թողնելով դէյլանը: Մանկաւիկներից մէկը վերառեց դէյլանը և ծածկեց նրան թանդազին շալից կարված մի թեթև վերմակով: Ի հարկէ, եթէ դէրվիշը տեսէր այդ, շատ պիտի վիրաւորվէր, որ նրա ճեղքնութիւններով սպանված մարմինը ծածկում էին այս տեսակ չքեղ վերմակով:

Ճաշելուց յետոյ, երբ վերքաղեցին սեղանը, դարձեալ լուացվելու ջուր բերեցին. այնուհետև փոքրիկ, նախշուն ֆինջաններով մատուցին սուրճ առանց չաքարի: Բոլորից վերջը տրվեցաւ դէյլան, բայց ոչ դէրվիշի դառն դէյլանի նման,

այլ պատրանոված Պարսկաստանի անուշահոտ ծխախոտից:

— Հիմա ժամանակ է մեզ արձակել, խան, առայ Թորոս իշխանը, շնորհակալութիւն յայտնելով նրա հիւրասիրութեան համար:

— Ի՞նչպէս կարելի է, դեռ մենք ձեզ ոչինչ ծառայութիւն չենք ցոյց տուած, պատասխանեց խանը ներողութիւն խնդրելով, — դուք պիտի մընաք մի քանի օրեր, մի քանի շաբաթներ, որ մենք կատարեկապէս կարողանանք ձեր պարտաւորութիւնից դուրս գալ:

Իշխանը նոյն կեղծ — քաղաքավարական ոճով յայտնեց, որ ինքը չափազանց շնորհակալ է խանից, որ կատարեց նրա խնդիրքը և իրան միշտ բախտաւոր կը համարէ, որ վայելում է նրա բարեկամութիւնը, և յոյս ունի, որ այդ բարեկամութիւնը անխախտ կը մնայ, եթէ խուսափարար մարդիկ չը խանդարեն նրան: Վերջին խօսքերով նա ակնարկում էր երկու հայ մէլիքներին վրա:

— Դուք այդ մասին անհոգ կացէք, իշխան, պատասխանեց խանը երդվելով, — իմ հօր գերեզմանում թող կրակ լցրած լինեմ, եթէ ձեր մի մաղը փոխելու լինեմ հազար այն տեսակ մարդիկների հետ:

Յետոյ հրամայեց նա իր սանդուխտարին (գանձապահին) իշխանի և պատանի Ստեփաննոսի

համար պատրաստեն ընծաներ: Իշխանի համար դուրս բերեցին մի փառաւոր վերարկու (ջուրայ) որ կարված էր Գիշմիրի Թանգագին շալից և զարդարած ոսկէ թելերով: Այդ վերարկուն խանի սեպհական վերարկուն էր, որ միանգամ միայն հագել էր նա, երբ ներկայացաւ պարսից շահին. այժմ ընծայելով իշխանին, պարսից մեծերի սովորութեամբ մի առանձին պատիւ էր անում իշխանին, պարգեւելով մի այնպիսի խալաթ, *) որ վեր էր առնված նորին գերազանցութեան խանի սեպհական թիկունքից: Բացի դրանից ընծայեց նրան մի գեղեցիկ ջօհվարդար**) թուր, խորասանի գործ, արծաթեայ պատեանով և թանգագին ակներով զարդարած երախակալով: Պատանի Ստեփաննոսի ընծաները աւելի հրապուրիչ էին. նա ստացաւ մի ալմաստ մատանի և զէնքերի մի ամբողջ թախում՝ թուր, հրացան, ատրճանակներ, գնտակի և վառօղի ամաններ, բոլորը ոսկեզօծ, արծա-

*) խալաթ նշանակում է պարսից այն ընծաները, որ տրվում են հագուստով. այստեղից է հայոց խալաթ բառը:

**) Ջօհվարդար կոչվում են այն տեսակ սրերի չեղքերը, որոնք խառայի նման նկարներ ունեն և որոնց պատճառած վէրքը անբժշկելի է դառնում: Այս տեսակ սրերը այժմ Պարսկաստանում համարվում են հնութիւն, որովհետեւ նրանց արհեստը կորած է:

թով զարդարած և սև սևադով մինա արած: Բայի դրանցից, նա ստացաւ մի գեղեցիկ նոյսի իր ամբողջ ասպաղէնքով:

Պատանի Ստեփաննոսին խիստ ծանր էր ընծաներ ընդունել այն գազանի ձեռքից, որ թաթախված էր իր հօր, իր մօր և իր ազգատոհմի արիւնով: Այսուամենայնիւ, նա զսպեց իր մէջ վրէժխնդրութեան զգացմունքը, և խռնարկելով ընդունված քաղաքավարական ձեւերին, յայտնեց իր չնորհակալութիւնը խանի առատաձեռնութեան և բարեսրտութեան մասին:

Թէ իշխանի և թէ պատանու նոյսերը արդէն կանգնեցրած էին վրանի հանդէպ. նրանք դուրս եկան, և խանը թափելով շողորբութեան և բարեկամական արտայայտութիւնների մի ամբողջ հեղեղ, ճանապարհ դրեց նրանց մինչև նրժոյգների մօտ: Նա իր ձեռքով բռնեց իշխանի նոյսի ասպանդակը և հրաւիրեց նստել:

— Այդ, արդէն չափից դուրս է, ասաց իշխանը հրաժարվելով:

Խանը խնդրում էր ընդունել այդ ծառայութիւնը, որ նրա հիւրասիրութեան և բարեկամական մտերմութեան աւելի ազդու արտայայտութիւնն էր: Բայց իշխանը չը կամենալով մինչև այս աստիճան ստորացնել նրան, ինքը թռաւ թամբի վրա, առանց ընդունելու նրա ձեռքից ասպանդակը: Պատանի Ստեփաննոսը իր նոր

զէնքերով զինաւորված, արդէն գտնուում էր իր նոյսի վրա: Հայոց ձիաւորների խմբից լսելի եղաւ փողի ձայնը, որ նշան էր հրաժեշտի:

— Մնաք բարեաւ, խան, ասեցին իշխանը և պատանի Ստեփաննոսը, իրանց նոյսերի վրայից գլուխ տալով:

— Բարի ճանապարհ, պատասխանեց խանը, նոյնպէս գլուխ տալով:

Վերադառնալով իր վրանը, նա իր մօքում ասաց. «ես քո հպարտութիւնը, չուն հայ, մի խեցեղէն ամանի նման ոտքերիս տակ կը փըշեմ...»

ԺԱ.

Մինչև այժմ երկու մէլիքների շահերը համաձայն և լծորդաբար էին ընթանում: Նրանց միաբանութիւնը՝ հայ գերիների շղթայակապ մնալու, պատանի Ստեփաննոսի սպանման և Գենուազի գաւառը իր միակ ժառանգից զրկելու վերաբերութեամբ՝ բոլորովին անկեղծ էր: Բայց երբ այդ բոլոր մեքենայութիւնները ոչնչացան, երբ գերիները ազատութիւն ստացան և Թորոս իշխանը յաղթող հանդիսացաւ, այնուհետեւ երկու մէլիքների միաբանութիւնը սկսեց փոքր առ փոքր խախտվել: Մինչև այժմ նրանք միաբան էին մէկ խորհրդի մէջ միայն, այն է՝ Գենուազի գաւառը զրկել իր միակ ժառանգից՝ Ստեփաննոսից, բայց թէ նրանից յետոյ ում կը մնար այդ գաւառը, —

վերջին հարցում երկուսի էլ շահերը տարբերվում էին: Մէլիք Ֆրանզիսկը ցանկանում էր իր ձեռքը ձգել Գենուաղը և ամբողջ Ղափանի իշխանը դառնալ, իսկ մէլիք Գաւրիթը նոյն իշխանութիւնը իրան էր վերապահում: Մէլիք Ֆրանզիսկը աշխատում էր օգուտ քաղել մէլիք Գաւրիթի և նրա աղջկայ աջակցութիւնից միայն սկզբնական գործողութիւնների համար, բայց երբ նա պարզ նկատեց, որ աղջիկը բոլորովին հակառակ է իր հօրը, այնուհետև աւելի ցած ընկաւ այդ մարդու նշանակութիւնը իր աչքում և աւելի հաստատ կերպով համոզվեցաւ իր յայտերի մէջ, թէ կարող է նրան ասպարէզից դուրս քշել:

Մէլիք Գաւրիթը իր կողմից նկատում էր, որ իր վարկը, իր նշանակութիւնը հետզհետէ ցած է ընկնում իր գործակցի աչքում, որ նա մինչև անգամ դադարել է իր հետ խորհրդակցելուց և ինչ որ դադանի ձեռնարկութեան պատրաստութիւններ է տեսնում: Մէլիք Ֆրանզիսկի այդ ծածկամտութիւնը աւելի զայրացրեց նրան, չես քո հէրը կանիծեմ... ասաց նա իր մտքում և դուրս եկաւ վրանից, անհամբերութեամբ սպասում էր իր ծառային, որին ուղարկել էր ներքինապետ Ահմէդի մօտ լուր բերելու: Ուրացողը ներքինապետի միջնորդութեամբ կրկին փորձ փորձեց տեսնուելու իր աղջկայ հետ, յայտնելով, թէ ինքը գնալու է Տաթև և ցանկանում է նրան մնաք

բարով ասել: Ծառան վերադարձաւ, բերելով ուրախալի լուրը, թէ տիկինը բարեհաճել է ընդունել նրան:

Գիշեր էր: Մէլիք Ֆրանզիսկը այս գիշեր նոյնպէս առանձին տեսութիւն էր խնդրել խանի հետ և գնացել էր նրա մօտ, առանց այդ մասին իմացում տալու մէլիք Գաւրիթին: Ընկերոջ այդ վարմունքը աւելի կատկածանքի մէջ էր գցում նրան: Այս պատճառով նա վարձել էր խանի մանկալսիկներից մէկին, որ լրտեսէ մէլիքի խօսակցութիւնը խանի հետ և իրան տեղեկութիւն տայ:

Սիւրբին ընդունեց հօրը մի առանձին վրանում, որ լուսաւորված էր լապտերի լուսով և գտանվում էր կանանոցից դուրս: Այնտեղ կանգնած էր միայն ծերունի ներքինապետը, իսկ տիկինը նստած էր գորգի վրա, և ինքն էլ չը գիտէր՝ թէ ինչու նրան հետաքրքրում էր համբարել գորգի փոքրիկ բառակուսիները: Տեսնելով հօրը, նա դարձաւ զէպի ներքինապետը:

— Ահմէդ, դուք կարող էք վրանի դրսում ըստպառել:

Ծերունին հեռացաւ և նստեց վրանի կողքին, խոտերի վրա: Սիւրբին դեռ գլուխը խոնարհեցրած, աչքերը չէր հեռացնում գորգից. հօր այցելութիւնը խանդարեց նրան և մոռացաւ գորգի եզերքի մի անգամ համբարած քառակուսիների

Թիւր: Նա սկսեց կրկին համբարել: Աղջկայ սառն ընդունելութիւնը սաստիկ վշտացրեց հօրը, բայց նա զսպելով իր վրդովմունքը, սկսեց հայրական մեղմ և զթառատ խօսքերով կշտամբել նրա սառնասրտութիւնը, — սկսեց յիշեցնել նրան, թէ ինքը հայր է, թէ հօր պատիւը, հօր յարգանքը ինքն Աստուած հրամայում է զաւակներին, թէ զաւակները իրանց պարտաւորութիւնը այլ կերպ կատարած չեն կարող լինել, բայց միայն սիրելով և հնազանդվելով իրանց ծնողներին:

— Դու գիտես, Սիւրբի, վերջացրեց նա իր քարոզը. — Ես ծերացել եմ, այս աշխարհում իմ միակ յոյսը, իմ միակ մխիթարութիւնը դու ես մնացել: Աստուած ինձ ուրիշ զաւակներ չը տուեց. եղածները բոլորը մեռան: Եթէ դու ես չը մխիթարես քս հօր ծերութիւնը, ինչ կը լինի նրա վիճակը:

Սիւրբին դեռ նայում էր գորդի վրա. այժմ ըսկսել էր համբարել նրա միւս եղերքի քառակուսիները:

— Ես չըջապատեմ եմ թէնամիներով, շարունակեց հայրը, — իմ խորհրդակիցները, իմ մտերիմներն անգամ փոս են փորում իմ առջև: Ամեն կողմից աշխատում են ինձ ցած դրել, ամեն կողմից սլաքաբաշտում են խել իմ փառքը: Իմ ծերութիւնը խայտառակութիւնով կը վերջանայ, եթէ դու չօգնես ինձ: Դու այն գաւաղանն ես,

որ պէտք է նեցուկ լինի ծերունի հօրը, որի վրա յենած, նա պէտք է շարունակէ իր ընթացքը: Բայց դու այն աստիճան անգութ ես, Սիւրբի, որ մինչև անգամ մերժում ես հօր այցելութիւնը:

Սիւրբին լսեց վերջին խօսքերը միայն: Նա անգիտակցաբար համբարում էր գորդի քառակուսիները, բայց նրա միտքը թռել, սլացել էր հեռու և հեռու, այն պատանու մօտ, որին թորոս իշխանը այսօր իր հետ տարաւ:

— Այո, ես առաւօտեան մերժեցի քո այցելութիւնը, պատասխանեց նա, գլուխը վեր բարձրացնելով և այժմ միայն ուղիղ կերպով նայելով հօր երեսին: — Հիմա ընդունեցի: Ի՞նչ ասելիք ունես:

Այդ հարցը աւելի խոր խոցեց հօր սիրտը: Կը նշանակէ նա չէր լսում իր խօսքերը, կը նշանակէ ոչինչ աղղեցութիւն չունեցան իր քարոզները: Նրա յոյսերը բոլորովին ջարդովիչուր եղան, բայց դարձեալ չը կորցնելով իր վստահութիւնը, ասաց:

— Սիւրբի, դու պէտք է միջնորդես խանի մօտ, որ Գենուաղի և Բարգիւշատի մէլիքութիւնը ինձ յանձնէ: Դու կարող ես այդ անել:

— Ես կարող եմ, բայց չեմ անի:

— Ի՞նչու:

— Ես չէի ցանկանայ, որ Գենուաղի և Բարգիւշատի հայ բնակիչները այնքան տանջվէին քո ձեռքում, որ գային խանի դրանը և իրանց

կրակ տային, այրվէին, ինչպէս այրվեցին այսօր տաթևացիները:

— Սիւրբի, ընդունիր իմ խնդիրքը, աղաչում եմ, առաջ տարաւ նա ռզորմեղի ձայնով:— Նթէ ծերունի հայրը ոչինչ յարգանք չունի քեզ մօտ, դոնէ յիշիր մօրդ, որ նրա կլինէ եղել, որին սիրում էիր դու:

— Որին դու սպանեցիր... պատասխանեց Սիւրբին և նրա աչքերը վառվեցան կատաղի բարկութեամբ:

— Ն՞ս... բացականչեց հայրը սարսափելով.— Աստուած կը պատժէ քեզ, Սիւրբի, որ այսպէս չարաչար կերպով զրպարտում ես հօրդ:

— Նթէ Աստուծոյ պատիժները շուտ վրա հասնէին, դու այժմ այս աշխարհում չը պիտի լինէիր... պատասխանեց նա դողդոջուն ձայնով:

— Նրկնում եմ, դու սպանեցիր իմ մօրը: Գու ուրացար Լուսաւորչի սուրբ հաւատը Տաթևի մէլիքութիւնը ստանալու համար և այնուհետեւ քո տունը լցրիր մահմետական կնիկներով: Խեղճ մայրս չը կամեցաւ ասրել ուրացող ամուսնի հետ, թողեց քո տունը և դնաց իր հօր տունը: Քանի անգամ քարչ տուեցիր նրան և կամենում էիր բռնութեամբ քեզ մօտ պահել, բայց դարձեալ վախճում էր նա: Քանի անգամ դա նախովեցաւ նա քո անդուծ ձեռքերից: Բայց այս բոլոր տանջանքներին կը համբերէր նա,

եթէ դու չը խլէիր նրա միակ աղջիկը.— ինձ, և չը գցէիր մահմետական հարեմի մէջ: Նս կրէք չեմ մոռանայ այն սպաւոր և ցաւալի օրը, երբ խեղճ մայրս, արտասուքը աչքերում, տարածվել էր գետնի վրա, գրկել էր քո ոտները: Սիւս կողմում կանգնած էին խանի ներքինները, իսկ մէջտեղում— ես: Մայրս աղաչում էր, պաղատում էր քեզ, որ ինձ խանի մարդկանց ձեռքը չը տաս: Նս լաց էի լինում: Գու, առ ոչինչ համարելով իմ և մօրս արտասուքը, ինձ յանձնեցիր նրանց ձեռքը: Մայրս կատաղութեամբ վրա վաղեց, ինձ բռնեց, և երկար կռվելով նրանց հետ, չէր թողնում, որ ինձ տանեն: Գու բռնեցքով զարկեցիր մօրս գլխին, նա ուշաթափ ընկաւ գետնի վրա և այնուհետեւ չը վեր կացաւ նա...

Մի ուրիշ մարդ, մէլիք Գաւիթի փոխարէն, հարազատ դատեր բերանից լսելով այդ անէծքը, լսելով այդ բոլոր դատապարտական խօսքերը, կը զղջար, կը փռչմանէր իր եղեռնագործութեան համար, բայց նա, տեսնելով, որ իր մեղմ, գրաւիչ խրատներով չը կարողացաւ համոզել նրան, մտածեց վախեցնել աղջկան:

— Բայց ես չեմ կարծում, որ քո մօր յիշատակը այնքան վրդովեցնէր քեզ իմ դէմ, որքան մի ուրիշ բան...

— Ի՞նչ բան, հարցրեց Սիւրբին, սրբելով աչ-

քերից արտասուքը, որ հեղեղի նման թափվում էր մօր պատմութիւնը անելու ժամանակ:

— Այն բանը, որ ես քեզ խնայի քո սիրականի գրկից... որը այսօր քո հնորհիւ ազատութիւն գտաւ... որի վերքերը դու դարմանում էիր բանտի մէջ... և որի հետ դու մտածում ես շարունակել քո հին յիմարութիւնները...

— Այդ բոլորը ճիշտ է, պատասխանեց Սիւրին սառնութեամբ:— Ես Ստեփանին սիրում էի առաջ, սիրում եմ և այս րոպէիս: Այո, դու ինձ խնայիր նրա գրկից և ես այդ չեմ ների քեզ:

— Եւ կաշխատես կրկին նրա գիրկն ընկել...

— Կաշխատեմ...

— Եւ կաշխատես Գենուաղի իշխանութիւնը նրան վերադարձնել...

— Կաշխատեմ...

— Եւ կաշխատես յետոյ փախչել գնալ նրա մօտ...

— Կաշխատեմ...

— Բայց գիտես ես ինչ կանես...

— Գու ինձ կը մատնես... դու այդ բոլորը կը յայտնես խանին...

— Լա հասկացար, պատասխանեց հայրը կատաղի բարկութեամբ:— Բայց գիտես խանը քեզ ինչ կանէ:

— Խանը ինձ խեղդել կը տայ:

— Հիմա լաւ մտածիր, ի դուր տեղը մի բարկացրու հօրդ:

— Ես բոլորը մտածել եմ. ինձ մնում է երկու բան:— Կամ մեռնել, կամ չնրա հետ ապրել:

Մէլիք Գաւթը չէր կարծում, թէ կը հանդիպի այս աստիճան հաստատամտութեան իր աղջկայ կողմից: Նա զգաց իր սխալը, որ խօսակցութիւնը ծայրայեղութեան հասցրեց, այս պատճառով փորձ փորձեց շարժել Սիւրինի գթասրտութիւնը:

— Ծերունի հայրը ներողութիւն է խնդրում քեզանից, Սիւրի, ասաց նա, բռնելով նրա ձեռքը:— Մոռացիր բոլորը, ես մեղաւոր եմ քո առջև, մեղաւոր եմ և քո հանդուցեալ մօր առջև...

Այդ միջոցին նրա աչքերում երևացին մինչև անգամ արտասուքի կաթիլներ: Բայց Սիւրին թափ տուեց նրա ձեռքը և վեր կացաւ, անկողի:

— Ես կը մոռանայի բոլորը, եթէ հաւատայի, որ քո խոստովանութիւնը անկեղծ է: Բայց դու խաբում ես ինձ:

— Աստուած, երկինք, գետինք վկայ, որ չեմ խաբում: Գու. զարթեցրիր իմ մէջ մեռած խելքս, Սիւրի, դու կրկին վառեցիր ծնողական գութը, որ հանգած էր իմ սրտում: Մօրդ ուրուականը գիշեր և ցերեկ հալածում է ինձ, հանգստութիւն

չէ տալիս: Նա կը ներէ ինձ, եթէ դու ներես:
Վերջին խօսքերը աղեցին Սիւրբի սրտին:
Նա պատրաստ էր զրկել իր հօրը, համբուրել
նրա շրթունքը, որ արտասանեցին այդ տխուր,
ապաշխարութեան խօսքերը, որ առաջին ան-
գամն էր լսում նրա բերանից: Բայց այդ միջո-
ցին վրանի մուտքի առջև արձանացաւ ծերունի
ներքինապետի զայրացած պատկերը և լսելի
եղաւ նրա սպառնական ձայնը:

— Դու, առաջ նա մէլիքին, — իսկա՛ն քան մե-
ղանչելը քո ընտանիքի, քո զաւակի և քո ան-
բախտ կնոջ առջև, մեղանչել ևս քո ազգի առջև,
որի սրղիքը քո հարստահարութիւններէց ազատ-
վելու համար, այսօր իրանց այրեցին: Դու մե-
ղանչել ևս Յիսուս Քրիստոսի առջև, որովհետեւ
ուրացար մեր սուրբ Գրիգոր լուսաւորչի կրօնը:
Ոչ ոք չի կարող ներել քեզ, մինչև աղգը և եկե-
ղեցին չը ներեն քեզ: Եթէ քո խօսքերը ճշմա-
րիտ են, եթէ զարթել է քո մէջ խիղճը, գնա՛,
մտի՛ր Տաթևի վանքի մէջ, որ քո ձեռքով քան-
դեցիր, որի սրբութիւնները կողոպտեցիր, — գնա
մտի՛ր նրա տաճարի մէջ և այնտեղ ներողութիւն
խնդրի: Այն ժամանակ բոլորը կը հաշտվեն
քեզ հետ, թէ աղգը, թէ եկեղեցին և թէ քո
զաւակը: Բայց քանի որ դու քո փառասիրու-
թեան համար ոտնակոխ կանես ամեն սրբութիւն,
ամեն մարդ անէծք կը թափէ քո գլխին: Ի՞նչու

ևս մոլորեցնում այդ անբախտ աղջկան: Ի՞նչու
ևս աշխատում նրան գործիք շինել քո չար դի-
տաւորութիւններին: Բաւական չէ, որ Տաթևի
ամբողջ զաւառը տանջւում է քո ձեռքում, հի-
մայ կամենում ևս Գենուալը ու Բարդիւշատն էլ
ձեռք գցել: Այդ չես կարող յաջողեցնել: Այդ
երկու զաւառները պատկանում են այն պատա-
նուն, որի հօր իշխանութիւնը սէնչացաւ քո սա-
տանայական զաւաճանութեամբ, որը այդ կնոջ
օրինաւոր նշանածն էր: Բայց դու ոտնակոխ ա-
րեցիր, թէ քահանայի օրհնութիւնը, թէ աղջկայ
սէրը...

Վերջին խօսքերը կրկին բաց արեցին Սիւրբի
վերքերը, կրկին զարթեցրին նրա մէջ վաղեմի
դառն ստեղծութիւնը գէպի իր հայրը: Մէլիք
Գաւիթը մի քանի բոպէ մնաց շանթահարի նման
պապանձված, և ոչ մի խօսք չը դատաւ պատաս-
խանելու: Ո՞րտեղից յայտնվեցաւ այդ սատանան,
միթէ՞ նա լսում էր զրոյի իր բոլոր խօսակցու-
թիւնները: Մէլիք Գաւիթը պատրաստ էր իր
սուրը նրա կողքը խրել, այդ կը լինէր ամենազ-
ուր պատասխանը նրա կարծիքով, բայց խանի
ներքինապետի վրա ձեռք բարձրացնելու չափ
նա քաջութիւն չունէր: Այս պատճառով ասաց
նա չար ծաղրածութեամբ.

— Մի հայ, որին կոչում են Ահմէդ, փոխանակ
ուրիշներին խրատներ տալու, աւելի լաւ կանէ,

եթէ նախ ինքը գնայ, մտնէ Տաթևի վանքը և կրկին ընդունէ քրիստոնէութիւնը...

Մէլիքի անարկուծութիւնը չափազանց վիրաւորական էր: Ներքինապետը կծու կերպով պատասխանեց նրան.

—Նա այդ վաղուց կանէի, եթէ հարկադրված չը լինէի, Ահմէդ անուան տակ ծածկվելով, պաշտպանել իմ ազգայիններին ձեզպիտիների չարագործութիւններից: Նա յոյս ունեւ, որ մեր Ղուսաւորիչ պապը կը ներէ ինձ, որովհետեւ երբէք դաւաճանած չեմ նրա եկեղեցուն, այլ որքան կարողացել եմ, պահպանել եմ նրա դառները ձեզ նման գայլերից...

—Նւ դու կը վարձատրվես այդ ծառայութիւններիդ համար...

—Չը լինի թէ դիտաւորութիւն ունես ինձ ևս մատնելու, խօսեց ներքինապետը դայրացած կերպով.—հրամայեցէք, ճանապարհը ձեզ ցոյց կը տամ...

Մէլիքը վեր կոցաւ և մրթմրթալով հեռացաւ: Սիւրին և ներքինապետը մնացին միայնակ:

—Դու ի դուր բարկացիր նրան, Ահմէդ, ասաց տիկինը.—նա ամեն բան պատրաստ է անել:

—Անհոգ կացէք, տիկին, ոչինչ չի կարող անել, պատասխանեց ներքինապետը հանգարտութեամբ:—Նա ունի ինձ մօտ մի այնպիսի

գաղտնիք, եթէ խանին յայտնելու լինեմ, իսկոյն նրան դիտատել կը տայ: Նա հէնց այս գիշեր նրան զգալ կը տամ, որ նրա կեանքը իմ ձեռքումն է, և նա լեզուն կը քաշէ...

Խորին տխրութեան մէջ սկսեց տիկինը դիմել դէպի իր վրանը: Նա իրան այնքան անբախտ էր զգում, որ լսում էր իր հօր մասին հարկւրաւոր վիրաւորական խօսքեր, բայց բարկանալու խաւածք չունէր: Ի՞նչ կարող էր ասել դառն ճշմարտութիւնների դէմ: Նա ունէր մի հայր, որը ոչ երկնքում և ոչ այս աշխարհում մի հատիկ բարեկամ չունէր, որին դաւաճանած չը լինէր: Նա մինչև անգամ յանցաւոր էր խանի մօտ, որի բարերարութիւնները վայելում էր:

ԺԲ.

Նրբ մէլիք Գաւիթը աշխատում էր Սիւրին աջակցութիւնը որտալ, նրան իր նոր նենգաւորութիւնների գործիք դարձնել, այդ ժամանակ մէլիք Ֆրանգիւլը տխուր, յուսահատական դրութեան մէջ դուրս եկաւ խանի վրանից: Նա գնացել էր խանի մօտ խնդրելու, որ Գենուաղի և Բարգիւշատի մէլիքութիւնը իրան յանձնէ, բայց մերժում ստացաւ, թէ և խոտաւորում էր իւրաքանչիւր տարի վճարել խանին հինգ հազար թուման փող, երեք հազար թաղար ցորեան, երկու հազար թաղար գաթի, և ամեն տարի երկու հատ գեղեցիկ հայ աղջիկներ հարեմի համար:

Գուրս գալով խանի վրանից, նա մուրրվածի նման, չը դիտէր դէպի սր կողմը գնալ: Գնալ իր իջևանը, ուր ամօթալի դէմքով պիտի հանդիպէր մէլիք Գաւիթին,—այդ մեռնելու չափ անտանելի էր նրան: Նա իր շահերը բաժանեց մէլիք Գաւիթից, թողեց նրան և սկսեց առանձին գործել, վստահացած լինելով, թէ յաջողութիւն կը գտնէ և միայնակ Գենուաղը ու Բարդիւշապը իր ձեռքը կը գցէ: Իսկ այժմ նրա բոլոր յոյսերը ի գուր անցան: Նա այնքան չէր ցաւում, որ զրկուած է երկու հարուստ գաւառների իշխանութիւնից, որքան ամաչում էր հանդիպել մէլիք Գաւիթին և լսել նրա այսօրինակ հեգնական խօսքերը:—Բարեկամ, «չունը շան թաթը չի կոխի», դու ուզում էիր հաւքան մինակ ուտել և ընկերիդ չը տալ, դրա համար էլ Աստուած քեզ պատժեց: Ի հարկէ, եթէ մէլիք Ֆրանգիւլին յայտնի լինէր իր ընկերոջ գտած նախատական ընդունելութիւնը Սիւրիի մօտ, նա այնքան չէր տանջւի և բոլորովին յուսահատուր չէր լինի: Նա կը մտածէր եթէ ոչ այսօր, դուցէ վաղը, միւս օրը դարձեալ կարող էր հասնել իր նպատակին: Բայց նա հաւատացած էր, որ որքան էլ թշնամական լինէին աղջկայ յարարերութիւնները հօր հետ, դարձեալ Սիւրին իր հօր կողմը կը բռնէր: Այժմ ինչ անել, ուր գնալ: Նա մնացել էր մուրրված: Հպարտութիւնը խեղդում էր

նրան: Մտածում էր գնալ, ձի նստել և գիշերով հեռանալ, առանց մէլիք Գաւիթի կամ մի այլ մարդու հետ տեսնվելու: Գոնէ այսպիսով ազատ կը մնար ամօթից և նախատինքից: Բայց ուր գնալ,—այդ հարցը դարձեալ զժուարութեան մէջ էր դնում նրան: Գնալ իր տունը: Բայց ինչ երեսով նայել իր կնոջ, իր որդիների վրա, որոնք միմ անհամբերութեամբ սպասում են նրա վերադարձին, սպասում են զիմաւորել նրան նոր փառքով, Գենուաղի և Բարդիւշապի մէլիքութիւնը ստացած: Ի՞նչ պատասխան տալ իր տանուէրներին, որոնց առաջմանէ դրած էր, թէ նա արդէն ստացել է այդ երկու գաւառների իշխանութիւնը և մէլիք Գաւիթը կորցրել է իր նշանակութիւնը:

Մի հզօր պաշտպան, մի զօրեղ ձեռք պէտք էր, որ նրան գուրս բերէր իր անել զրութիւնից: Ո՞ւմը զիմել, ում օգնութիւնը խնդրել: Խանից նա մերժվեցաւ: Այժմ ով կարող էր ազդել, ներգործել խանի վրա: Ո՞վ կարող էր միջնորդ և բարեխօս լինել նրա և խանի մէջ: Նա մտաբերեց ցեղի խամին, մի մարդու, որին բոլորը պաշտում էին, թէ խանը և թէ նրա մահմետական ժողովուրդը: Եւ առանց իրան հաշիւ տալու, նա սկսեց անդիտակցաբար իր անվճռական քաղերը ուղղել դէպի նրա վրանը: Նա միայնակ էր, իր հետ ունէր ծառաներից մէկը

միայն: Խմամի վրանը դտանվում էր բաւական հետու, ջալարեանների չադրների մօտ: Պէտք էր անցնել մի քանի բլուրներ, մի քանի ձորեր: Մէլիք Ֆրանգլուլը ցանկանում էր, որ այդ ճանապարհը աւելի ևս երկար լինէր, մինչև աշխարհիս ծայրը, որ դնար, դնար և չը հասնէր: Միթէ ակամայ էր գնում նա, թէ ցանկանում էր՝ ճանապարհի երկարութեան ընթացքում աւելի լաւ խորհել, աւելի լաւ քննադատել այն ձեռնարկութիւնը, որին գիմում էր... Առ այժմ դարգակ յոյսը նրան աւելի էր մխիթարում, քան կատարված իրողութիւնը, որ թանգ գնով պիտի ստանար... Գիշերային խաւարը ծածկում էր նրան ուշացած հովիւների տեսութիւնից, որ անցնում էին լեռների միջով: Ի՞նչ լաւ կը լինէր, որ միշտ գիշեր լինէր և նրան ոչ ոք չը տեսնէր: Նա նմանում էր մի գողի, որ մթութիւն է սիրում: Նա նմանում էր մի եղեռնագործի, որ փախչում է մարդկային հասարակութիւնից, անապատների խլտթեան մէջ հանգըտացնելու խղճի խայթը...

Կէս ճանապարհի վրա նա կանգ առեց: Մի քանի րոպէ մնաց մեխված գետնի հետ: Չը գիտէր յետ դառնալ, թէ առաջ գնալ: Նրա սիրտը բարախտում էր և զլխի մէջ կատարվում էր խառն մտածութիւնների մի ամբողջ պատերազմ: Վրճուկ յետ դառնալ: Բայց այժմ ոչ այն ճանա-

պարհով, որով եկել էր, կարծես, ճանապարհի տարբերութիւնը կարող էր հանդուստացնել նրան: Յանկարծ յիշեց նա խանի խօսքը, որի հիման վրա մերժեց նրան Գենուաղի և Բարգիւշատի մէլիքութիւնը. «Թորոս իշխանի հետ ունեցած մեր այժմեան բարեկամական յարաբերութիւնները թոյլ չեն տալիս ինձ այդ երկու գաւառների կառավարութիւնը յանձնել մի այնպիսի մարդու, որին իշխանը իրան թշնամի է համարում»: Ուրեմն նա չը կամեցաւ վիրաւորել իշխանի անձնասիրութիւնը, չը կամեցաւ նրա ^{հոգիս} ~~անհոգ~~ (Վտեփանոսի) երկրները յանձնել մի մարդու, որը Թորոսի ընտանիքի հետ տոհմային թշնամութիւն ունէր: Այդ յիմար պարսիկը, մտածում էր մէլիքը, եթէ խելք ունենար, պէտք է օգուտ քաղէր այդ հանդամանքից, պէտք է բռնութեամբ զրաւած երկրների կառավարութիւնը յանձնէր հէնց իրան, որովհետև նրանց նախկին տիրոջ թշնամին էր ինքը: Գրանով աւելի ապահովացրած կը լինէր խանը իր իշխանութիւնը այդ երկրների վրա: Միւս կողմից, մէլիքին տանջում էր մի այլ միտք. Թորոսը այնքան հպարտ էր, ի հարկէ, չէր ցանկանայ փողով գրաւել խանին և կրկին ձեռք բերել այդ երկրների իշխանութիւնը իր ~~կողմ~~ ^{կողմից} Կողմից: Վտեփանոսի համար, որին այսօր գերութիւնից ազատեց, որը այդ երկրների օրինաւոր տէրը և ժառանգն էր:

Կողմից այսպէս

Նա կը պատրաստվէր զէնքի ուժով զրաւված երկիրները յետ խելէ նոյնպէս զէնքով:—Այդ բոլորը նա յայտնեց խանին, յայտնեց, որ այդ երկիրների կառավարութիւնը իրան յանձնելը միակ երաշխաւորութիւնն է խանի իշխանութիւնը նրանց վրա հաստատ պահելու համար: Բայց «յիմար» պարսիկը չը հասկացաւ. նա աւելի զերազանց իր կեղծ բարեկամութիւնը Թորոսի հետ, քան մէլիք Ֆրանգիւլի հաւատարիմ ծառայութիւնը:

Բայց ինչպէս կարող էր մէլիք Ֆրանգիւլը այդ բոլոր անարգանքը տանել: Ինքը թշնամի էր Թորոսի հետ, իր հայրը թշնամի էր նրա հօր հետ, իր պապը թշնամի էր նրա պապի հետ: Այդ երկու ընտանիքների մէջ ստեղծութիւնը անցել էր սերունդից սերունդ և կնքված էր բաղմամբիւ զոհերի արիւնով: Այժմ նոյն մարդը դուրս էր գալիս իր առջև որպէս մի հզօր ախոյեան: Պէտք էր ընկճվել նրա առջև: Այդ անկարելի էր: Պէտք էր ջարդուովչուր անել նրա դիտաւորութիւնները: Թէև մէլիքին չը յաջողվեցաւ Ստեփաննոսին խեղդել տալ բանտի մէջ, թէև նրան չը յաջողվեցաւ հայ դերիններին մաշել տալ բանտի մէջ, —բայց նա պէտք է յաջողեցնէ Վանուաղի և Բարդիւշատի մէլիքը լինել, թէև այդ իշխանութիւնը գնվելու լինէր այն բանով, որ աշխարհի մէջ ամենաթանգագինը և ամենա-

սուրբն է նրա համար... Այդ մտքով նա կրկին յետ դարձաւ և շարունակեց իր ճշմարտագրէտ դէպի իմամի վրանը:

Մի քանի րոպէ առաջ նա գտանվում էր տատանման մէջ: Իսկ այժմ նախանձը, ատեղութիւնը, կոյր փառասիրութիւնը եւ էին գալիս նրա սրտում: Մի քանի րոպէ առաջ նրան տանջում էր միայն ամօթի և հպարտութեան զգացմունքը, իսկ այժմ նրան բորբոքում էր վրէժ-խնդրութեան կիրքը: Պէտք էր պատժել Թորոսին, այնուհետև նրա բոլոր թշնամիները կորագլուխ կը լինէին նրա առջև:

Ճանապարհին նա ստեղծեց մի ամբողջ պատմութիւն, որի առիթով պիտի ներկայանար իմամին: Նրա ուղեղը, որ մինչև այժմ բոլորովին մոայլված էր, նրա մտածութիւնները, որ մինչև այժմ խառնաշփոթ դրութեան մէջ էին, յանկարծ որոշ կերպարանք ստացան: Նա այժմ այնքան արագ էր դնում, որ ծնունդ հազիւ կարողանում էր հետեւել նրան: Քառորդ ժամից յետոյ նա հասաւ իմամի վրանին:

Իմամի վրանը իր պաշտօնութեամբ չէր դանազանվում հասարակ հովիւների շարքերից: Այստեղ չը կային ոչ նուրբ, մետաքսեղէն կերպասներ և ոչ թանգագին շալեր: Աստուծոյ մարդը, կրօնի գորավիպը իրան հեռու էր պահում աշխարհի փառքից և կեանքի շքեղութիւնից, եթէ

ոչ ներքուստ, գոնէ արտաքուստ: Նա նստած էր հասարակ թաղիքի վրա և նրա մօտ դրած էին մի քանի զրքեր: Մի կողմում կուճ էր եկած դէրվիշը և պատմում էր զանազան բժշկական հրաշալիքներ: Վրանում ուրիշ ոչ ոք չը կար. մի մօրուքաւոր սպասաւոր միայն կանգնած էր այնտեղ և երբեմն նորոգում էր իմամի չիբուխը, վառում էր, առաջ ինքն էր ծխում, յետոյ տալիս էր նրան: Գէրվիշը խօսում էր Լօկմանի *) վրա, ասում էր, երբ նա ծերացաւ, հազար ինն հարիւր վաթսուն տարեկան դարձաւ, այդ ժամանակ պատրաստեց «կենդանութեան կաթիլները», և իր աշակերտներին՝ Ալասթուլին ու Աֆլաթունին **) յանձնելով, պատուիրեց նրանց, երբ ինքը կը մեռնի, այն հեղուկից երեք կաթիլ կաթեցնեն իր բերանը, և ինքը իսկոյն կը կենդանանայ: Երբ նա մեռաւ, Աֆլաթունը վեր առեց հեղուկը, որ իր վարպետի պատուէրի համեմատ, երեք կաթիլ կաթեցնէ նրա բերանը: Գեռ առաջին կաթիլն էր կաթեցրել, այդ միջոցին սատանան աներևոյթ կերպով անցաւ նրա մօտից, թեքով զարկեց սրուակին և հեղուկը թափեց, Լօկ-

*) Լօկման պարսից և արաբական աւանդութիւնների մէջ համարվում է բժշկութեան առաջին հեղինակը:

**) Ալասթուլ և Արիստոտելն է, իսկ Աֆլաթուն Պլատոնը:

մանի մարմնի մի մասը միայն կենդանացաւ. ոտքերից մինչև պարտը, միւս մասը՝ մէջքից մինչև գլուխը մնաց մեռաւ: Այդ դրութեան մէջ ապրեց նա մինչև երկու հազար տարի: Ոտքերը կենդանի էին, ման էին դալիս, բայց գլուխը, թեքերը, մէջքը սկսեց հեղհեղտէ լուծվել, փրտել և հող դառնալ: Նրա աշակերտների բոլոր ջանքը չը կարողացաւ կենդանացնել նրա մարմնի մեռած մասը, որովհետեւ Լօկմանը «կենդանութեան կաթիլների» գաղտնիքը իր մօտ էր պահել:

— Բայց սատանան ինչ թշնամութիւն ունէր Լօկմանի հետ, հարցրեց իմամը:

— Սատանան ում հետ թշնամի չէ, պատասխանեց դէրվիշը, — այդ էլ բաւական էր, որ Լօկմանը իր բժշկական դարմաններով պատերազմում էր մահուան դէմ և ամեն օր հարիւրաւոր հիւանդների կեանք և առողջութիւն էր պարգեւում: Իսկ կեանքը հակառակ է սատանային. նա մահուան և գերեզմանի իշխանն է:

Նրանց խօսակցութիւնը ընդհատեց սպասաւորը, յայտնելով, թէ մէլիք Ֆրանգիւլը խնդրում է ներկայանալ: Իմամը մի քանի վայրկեան մտածութեան մէջ ընկաւ, թէ ինչպէս ընդունէ այդ «գաւուրին», յետոյ հրամայեց վրանի մի կողմում տաքածել մի կապերտի կտոր, որ նա գայ, նստէ նրա վրա, որպէս զի միւս օթոցները

չը պղծէ: Իսկ այդ կապերտի կտորը կարելի էր յետոյ կամ այրել, կամ դէն գցել:

Մէլիք Ֆրանգիլըն ներս մտաւ, խոնարհութեամբ գլուխ տուեց և կանգնեց ոտքի վրա: Իմամը խնդրեց նրան նստել: Մէլիքը գիտենալով մահմետական հոգևորականները սովորութիւնը, դնաց, նստեց կապերտի կտորի վրա:

Իմամը թողեց մէլիքին առանց ուշադրութեան, որպէս թէ նա չը կար և շարունակեց իր խօսակցութիւնը դէրվիշի հետ Լօկմանի և սատանայի մասին: Յետոյ նա անցաւ այն մասը ունի ն, որ պիտի սլափարատէր դէրվիշը նրա ծերութիւնը յետ դարձնելու և նրան մանկական ուժ և թարմութիւն պարգևելու համար:

Մէլիք Ֆրանգիլըն այն աստիճան անհանգիստ էր, կարծես, փշերի վրա էր նստած: Իմամի արհամարհանքը, նրա սառն ընդունելութիւնը սաստիկ վիրաւորեց նրան: Նա աւելի բարոք կը համարէր, որ գետինը պատուէր և իրան կուտար, քան այնպէս անպատիւ կերպով նստած լինէր պարսիկ կրօնաւորի սպասում, որ աւելի բաւականութիւն էր գտնում, խօսելով մի զոգուելի դէրվիշի հետ, քան հայ ժողովրդի մի նշանաւոր ներկայացուցչի հետ: Նա անհամբերութեամբ սպասում էր, որ իր վրա ուշադրութիւն դարձնեն, կամ զոնէ հարցնեն, թէ ինչու համար ես եկել: Նա մի քանի անգամ հաղաց, մի քանի

անգամ նստած տեղում այս և այն կողմը շուռ եկաւ, դաշձեալ նրա վրա ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց: Այդ անախորժ դրութիւնը սպանում էր նրան, մանաւանդ որ նկատում էր, երբ խմամբն չիրուխ էին մատուցանում, նա դէրվիշի հետ փոփոխակի կերպով ծխում էր, բայց իրան ամենեւին համեցէք չէին անում, որովհետեւ նրա անմաքուր շրթունքը կարող էր պղծել չիրուխը:

—Ո՛վ ուղղափառների սուրբերից ամենասուրբը, մէկ խնդիրք ունեմ, ասաց վերջապէս մէլիքը բացականչական եղանակով:

Գրիստոնեայ մէլիքի այս եղանակով դիմելը պարսից կրօնաւորին, բաւական հաճոյական երևեցաւ նրան, և ընդհատելով իր խօսակցութիւնը դէրվիշի հետ, հարցրեց.

—Ի՞նչ էք հրամայում:

—Քանի դիչեր է, պատասխանեց մէլիքը, ինձ անհանգստացնում է մի երազ, հէնց որ պառկում եմ, միշտ մի և նոյն երազն եմ տեսնում: Այդ երազի մեկնութիւնը ոչ ոք կարող է տալ ինձ, բացի ուղղափառների սուրբից, որի մօտ պահլած են բոլոր գիտութիւնները, բոլոր երևելի և աներևոյթ էակների գաղտնիքները: Եթէ ձեր սրբութիւնը կը բարեհաճի, ես կը պատմեմ իմ երազը:

Իմամը թող տուեց նրան պատմել, համես-

տութեամբ յայտնելով, թէ ինքը գիտութեան
սնտահման ուղիւնոսից մի քանի կաթիլի մի-
այն արժանացած է, բայց Աստուծոյ և մարդա-
րէի օգնութեամբ կաշխատէ նրան բաւականացու-
ցիչ բաղադրութիւններ տալ:

Մէլերը շարունակեց.

— Ինձ երևում էր, թէ գտանվում եմ մի դրախ-
տի*) մէջ, որ զարդարած էր մշտականաչ ծառե-
րով: Որքան նայում էի, վերջ և սահման չունէր
այդ դրախտը: Որպէս ծառերը, որպէս ծաղիկ-
ները, այնպէս էլ մարդիկը այնտեղ վայելում
էին յաւիտենական մանկութիւն: Յերութիւնը,
մահը և այն բոլոր չարիքները, որ ապականում
են մարդու կեանքը, այնտեղ գոյութիւն չունէին:
Այնտեղ թագաւորում էր անթառամ, անվերջ
կեանք միայն: Տղամարդիկը հատած էին տե-
րեախիտ արմաւենիների հովանու տակ, գոհար-
ներով զարդարած օթոցների վրա, և թիկն էին
տուած մախմուռէ բարձերին: Ամեն մի տղամար-
դի շուրջը պատել էին եօթանասունից աւելի
ղեռահաս աղջիկներ հրաշալի գեղեցկութեամբ:
Նրանք հագուտով փոխարէն պատած էին սպի-
տակ ամպի նման թեթև և թափանցիկ մի նիւ-

*) Դ ր ա խ տ և պ ա ր տ է զ մի և նոյն նը-
շանակութիւնն ունեն թէ մեր և թէ պարսից
լեզուի մէջ:

թով: Այդ նազելի արարածները ուրիշ հոգ չու-
նէին, բացի գգվելուց և փայփայելուց այն տղա-
մարդին, որին պատկանում էին: Նրանցից ո-
մանք, կպած նրա կուրծքին, սանրում էին նրա
երկայն ծամերը և մազերը շարում էին մարդա-
րիւններով, ոմանք աչքերին սուրմայ էին քա-
շում, կամ յօնքերը նախշում էին սևադեղով, մի
խումբ երգում էր, միւսը ածում էր ոսկեայ քնար-
ների վրա: Մառերի ոտներից թռչունները ձայ-
նակցում էին հրաշալի երաժշտութեանը: Այդ
թռչունները այնքան գեղեցիկ էին, որոնց նմանը
ես երբեք տեսած չէի. նրանց փետուրների վրա
չողջողում էին ծիածանի բոլոր վառ գոյները:
Նրանք լեզու ունէին, խօսում էին և հասկա-
նում էին մարդու մտքերը: Այնտեղ բոլոր արա-
րածները խօսում էին: Տեսնում ես, սիրուն աչ-
ծեամբ, ոսկեայ եղջիւրներով, մօտենում է քեզ
և շնորհալի կերպով զուլս տալով, ասում է՝
«սալտո ալէյքում» (խաղաղութիւն քեզ): Լեզու
ունէին մինչև անգամ ծառերը և խօսում էին ա-
ւելի քաղցր, աւելի ճարտար, քան թէ հրեշտակ-
ները: Հարկաւոր չէր ձեռքը մեկնել և քաղել
նրանց պտուղները, բաւական էր ցանկանալ մի-
այն, և ահա բարձր արմաւենին խոնարհեցնում է
իր ճիւղերը և դու քաղում ես, ինչ պտուղ որ
կամենում ես. ուզում ես նարինջ—նա կը տայ
քեզ, ուզում ես թուզ—նա կը տայ քեզ, ուզում

ես անանաս—նա կը տայ քեզ: Մարդիկը կե-
րակրվում էին զլիսաւորապէս համեղ և անուշա-
հոտ պտուղներով, որոնց տեսակներին թիւ
և չափ չը կար: Նրանք խմում էին կաթ և մեղր,
որ բոլորում էին յստակ աղբւրներէից, և միլիո-
նաւոր վտակներով վազում էին ծաղիկների մի-
ջից, ընդունելով նրանց անուշահոտութիւնը: Բո-
լորը, ինչ որ ուտում էր, ինչ որ խմում էր մաշող,
լուծվում էր նրա մէջ, գոլորշիանում էր, և վար-
դաջրի բարեբոյր կաթիլների նման, անդգալի
կերպով շոգիանում էր նրա մարմնից: Այլ կերպ
արտադրութիւն չը կար: Ապականութիւնը հի-
ռու էր այնտեղից: Անարատ սրբութիւն, սնվերջ
երանութիւն, անսահման զուարճութիւն,—այդ էր
թագաւորում այնտեղ: Մարդկանց սիրտը լի էր
բաւականութիւններով, և հոգին ուրախ զուար-
ճութիւններով: Միշտ, անընդհատ կերպով
վայելում էին նրանք իրանց շուրջը պատած ան-
սպառ բաբութիւնները, բայց ոչ յաղենում էին և
ոչ ձանձրանում: Ամեն մի առարկայ նոր ուրա-
խութիւն, նոր բերկրութիւն էր բաշխում
նրանց: Միօրինակութիւն չը կար: Մի և նոյն
առարկան ամեն մի բոպէ, ամեն մի վայրկեան
առանձին կերպարանքով էր ներկայանում նը-
րանց, և ամեն անգամ իր հետ բերում էր
նոր հրապուրանք, նոր հրաշալիք: Գեղեցիկ,
մշտադաւար աղջիկները պահպանում էին իրանց

յաւերթակ¹²⁸ կուտութիւնը, որպէս նրանց չըր-
ջապատող քնքոյշ վարդերը, որոնք ոչ թառա-
մում էին և ոչ փոխում իրանց գոյնը: Դամսնակը
չէր հնացնում նրանց, այլ օր ըստ օրէ մանկաց-
նում էր, բաշխելով նոր թարմութիւն, և նոր
չքնաղութիւն: Նրանք բոլորը ծառայում էին տը-
ղամարդերին: Տղամարդերից ամեն մէկը կարող
էր ունենալ նրանցից, որքան և կամենար: Գի-
շեր կամ խաւար չը կար այնտեղ: Մանիշակա-
գոյն պարզ երկնքից արեգակը մշտապէս թա-
փում էր իր լուսափայլ ճառագայթները: Ամբողջ
տարին տիրում էր կանաչ գարուն, և անձրևի
փոխարէն հոտաւէտ ցողը զովացնում էր ճոխ
բուսականութիւնը: Մարդիկ այնտեղ հոգ կամ
վաստակ չունէին. հրաշագործ բնութիւնը, ին-
քնայորդոր կերպով, ինքն էր արտադրում ամենը,
ինչ որ պէտք էր մարդուն: Ամեն կողմից, հրեշ-
տակների հոգու հետ, չնչում էր գոհութիւն, սէր
և խաղաղութիւն: Ամեն կողմից լսելի էր լի-
նում օրհնութիւն և փառարանութիւն Արարչին,
որ պատրաստել էր այդ բոլորը: Այնտեղ չարու-
թիւն, նախանձ, ատելութիւն չը կար: Այնտեղ
զայլը զառի. հետ միասին էին ապրում: Եւ ի՞նչ
առիթ ունէին կուսելու. ամեն ինչ առատ էր,
ամեն տեղ տիրում էր անսահման լիութիւն:
Պէտք, կարիք կոչված բաները այնտեղ չը կային:
Ինչ որ ցանկանում էր մարդ,— աչքի առջև

պատրաստ էր: Պէտք էր կամենալ միւրջն, իսկ կատարածը չէր յապաղում:

Մէլիք Ֆրանգիւլը իր պատանեկութեան հասակում, գերի ընկած լինելով Պարսկաստանում, երիտասարդութիւնը անցուցել էր Սպահան քաղաքի մէջ: Այնտեղ մահմետականութիւն ընդունելով, ծանօթացաւ պարսից գրականութեան և լեզուի հետ: Այդ հանգամանքները իմամին յայտնի չը լինելով, նա բռնորովին զարմացաւ, տեսնելով մի հայ, որ այնպէս գեղեցիկ լեզուով նկարագրում էր իր երազը: Նա չը կարողացաւ համբերել, ընդհատեց նրա պատմութիւնը, ասելով.

—Նրանութիւն կո՞ տալիս ձեզ, ով երջանիկ մարդ, որ դուք բախտ էք ունեցել տեսնել Մուհամմեդի զրախտը, որ նա պատրիստել է իսլամի արդարների համար: Ղա մի հրաշալի նշան է, որով մարդարէն կոչում է ձեզ իր գիրկը, մասնակից անելու այն բոլոր բարութիւններին, որ ուղղափառները միայն իրաւունք ունեն վայելելու:

—Նա բոլորը չը պատմեցի ձեզ, տէր, պատասխանեց մէլիքը տխուր ձայնով, — Լսեցէք, թէ նրանից յետոյ ինչ տեսայ:

Նա շարունակեց.

—Երբ ես հիացած, խորին հոգեզմայլութեան մէջ նայում էի այն անհուն վայելչութիւններին,

յանկարծ ոգիներից մէկը մօտեցաւ ինձ, ասաց. «Ով մարդ, այստեղ անմաքուրների տեղը չէ, հեռացէք շուտով, այստեղ ապրում են սուրբերը միայն»: Երբ ես փոքր ինչ յապաղեցայ կատարելու նրա հրամանը, նա բռնեց իմ մօրուքից, և հողաթափի հատի նման ձգեց օդի մէջ: Նրա բաղկի թափը այնքան սաստիկ էր, որ ես երկար մնում էի օդի մէջ, թողնելով իմ ներքեւ լայնատարած ծովեր, ահազին լեռներ և ընդարձակ դաշտեր: Վերջապէս ես ցած ընկայ մի անապատի մէջ, որ ծածկված էր վայրենի փշերով և ծակոտ ու տատակներով: Ոչինչ այնքան սիրտ ճընշող և տխուր չէր կարող լինել, որպէս այդ աւազան անապատը: Ղէպի որ կողմը և նայում էի, կեանքի նշոյլ չը կար: Ամեն տեղ տիրում էր մեռելային ամայութիւն: Միայն սև ագռաւները երբեմն խումբերով անցնում էին վերկից և իրանց դառն կոնչիւնով աղմկում էին օդի մահահրաւէր լուռութիւնը: Նրանց ձայնը, կարծես, անէծքի հառաչանքներ լինէր, որ թափվում էր երկնքից, որպէս բոթաբեր աղաղակ: Իմ սիրտը կտրաւովում էր անհամբերութիւնից, շտապում էի անցնել, հեռանալ այդ անսպառախից: Բայց նա վերջ և սահման չուներ: Շուտով սկսեց ինձ պաշարել երկիւղը: Ղէպի որ կողմը գնամ, ինչ տեսնեմ, մոռնում էի ես: Ահագործայ ժամն էր: Արեւդալը երկնքից կրակ էր թափում: Ղեափնը, որի

վրա կանաչ բուսականութեան ոչ մի հետք չը կար, տաքացած էր, ինչպէս շիկացրած երկաթ: Ամբողջ տարածութիւնը, կարծես, դարերով ջուր չէր տեսած, և պատկերւում էր ծարաւից: Այնտեղ տեսնուում էի ես կմախքի նման: Նիհար մարդիկ, որ թափառում էին անապատի մէջ: Կարծես, արիւն կոչված բանը չը կար այդ ողորմելի արարածների մէջ: Կիսամերկ, պատառոտած հագուստով, բոբիկ ոտներով թափառում էին նրանք տատասկների մէջ: Մարմնացած չքաւորութիւնը, իր բոլոր սոսկալի տառապանքներով, միայն կարող էր նրանց նման լինել: Մի յաւիտենական անէծքով դատապարտված, այդ խեղճ մարդիկը, բահի և արօրի փոխարէն, իրանց ճանկերով փորում էին կորդացած երկիրը, ցանում էին նրան և ջրում էին իրանց արտասուքով: Երկինքը անձրև չէր տալիս և ոչ երկիրը բղխեցնում էր աղբիւրներ: Հողը մերժում էր նրանց ցանքը և իր արգանդի մէջ խեղդում էր ծլած սերմերը: Իսկ այդ թշուառները դատապարտված էին գործելու, միշտ, անդադար գործելու, թէև առանց վատտակի, առանց արդիւնքի: Աշխատութեան ծանրութեան մէջ նրանք կատարեւապէս անասնացել էին. մարդկային շնորք չէր երևում նրանց մօտ: Նրանց արեակէզ զաւակները, մըջիմի նման սփռված էին անապատի մէջ, բոյսերի արմատներ էին հանում երկրից և նրանով էին

յաղեցնում իրանց քաղցը: Ոչինչ չէր կարող այնքան ողորմելի, այնքան անբախտ լինել, որպէս այդ մերկ մանկտին, որոնց մոխրագոյն դէմքերի վրա ամենին կեանքի նշոյլ չը կար: Աւելի թշուառ էր կնիկների դրութիւնը: Այդ ըստրուկները մի բոպէ հանգստութիւն չունէին: Աշխատութեան մէջ նրանք այն աստիճան կոշտացել, կոպտացել և վայրենացած էին, որ կորցրել էին բոլորը, ինչ որ կանացի է, ինչ որ քնքոյշ ու գեղեցիկ է: Մանկահասակը չէր որոշվում պառանքներից, բոլորը մաշվել, թառամել էին վաղահաս ծերութեան մէջ: Հագուստ չունէին նրանք, իրանց մերկութիւնը ծածկել էին գաղանների մորթիներով: Կարծես, մի աներեւոյթ ձեռք անդթաբար ճնշում էր, հալածում էր, տրորում էր այդ խղճալի հասարակութիւնը: Բայց որքան մեծ եղաւ իմ սարսափը, երբ նոյն թշուառ կրնիկների թւում գտայ իմ կնոջը և նոյն անբախտ մանուկների մէջ տեսայ իմ զաւակներին: «Այստեղ ի՞նչ էք չինում» հարցրի ես:—«Մեզ այստեղ բերեցին»... պատասխանեցին նրանք արտասուքը աչքերում և ընկան իմ գիրկը: Եւ չը կարողացայ երկար հարց ու փորձ անել նրանցից, որովհետև իսկոյն յայտնվեցաւ մի մարդ գաղանային դէմքով և մտրակի հարուածներով քչեց նրանց դէպի անապատը, ասելով. «գործեցէք, անպիտաններ»... Եւ պատրաստվում էի յարձակվել

նրա վրա, բռնել, կտոր-կտոր անել, որ իմ աչքի առջև այնպէս բարբարոսաբար տանջուած էր իմ զաւակներին,—բայց յանկարծ զգացի իմ մէջքի վրա մտրակի մի սլատիկ զարկ և լսեցի նրա ըստառնալի հրամանը. «դէ, դուք էլ»... և նա ձեռքով ցոյց տուեց անապատը: Եւ զարթեցայ, բայց ինձ թւում է, որ հէնց այս բոպէիս զգում եմ մէջքիս վրա նոյն մտրակի դառն ցաւը և զարձեալ լսում եմ նրա սպառնական խօսքերը...

Մէլիքը վերջացրեց. մի քանի վայրկեան վրանի մէջ տիրեց խորին լռութիւն, որը ընդհատուեցաւ իմամի վարդապետական բացատրութիւնով.

—Այդ անապատը ներկայացնում է այն կայարանը, ուր պիտի տարվին «գաւուրները» զաւակները մահից յետոյ: Այդ դէռ «ջհաննամի» (զեհենի) նախադաւիթն է, եթէ դուք մի փոքր առաջ գնայիք, պիտի տեսնէիք «մաղէ կամուրջը» և նրա տակից հոսող հրեղէն գետը, որ թափվում է դժոխքի մէջ և այնտեղ ձևացնում է մի լայնատարած ծով: Զրեղէն ալիքների մէջ դուք կը գտնէիք «գաւուրների» ամբողջ հասարակութիւնը և գուցէ կը ձանաչէիք ձեր աղգակիցներից շատերին, որոնք մարդաբէի սուրբ հաւատը թողնելով, հետեցին մոլորութիւնների, և ժառանգեցին Աստուծոյ բարկութեան հետ նրա յաւիտենական տանջանքը: Բայց Աստուած չէ կամենում, որ դուք մոլորեալների ձանապարհով

գնաք, և այդ երազը մի նշան է, որով Նա հրաւիրում է ձեզ դճովի ուղիով ձանապարհը, որ տանում է զէպի արդարների յաւիտենական երանութիւնը, որին արժանացաք աչքով տեսնել ձեր երազի սկզբում:

—Եւ մի մեղաւոր մարդ եմ... պատասխանեց մէլիքը ցաւալի ձայնով.—ևս զգում եմ իմ բոլոր մեղքերը...

—Մեր օրէնքով, ասաց իմամը լուրջ կերպով, —եթէ «գաւուրներից» մէկը կընդունէ մուսուլմանների կրօնը, ոչ թէ նրանից, այլ և նրա զաւակներից մինչև եօթն սերունդ մեղք չի պահանջվի: Նրանք կը վայելեն ամենապատուական տեղը Մուհամմէդի դրախտի մէջ:

Մէլիքի դէմքի վրա վաղեց ուրախութեան նրման մի բան, և մօտենալով իմամին, ձեռքը մեկնեց, բռնեց նրա ձեռնի նման սպիտակ հագուստի փեշից, և համբուրելով ասաց.

—Ձեզանից է կախուած իմ փրկութիւնը, տէր, մի թողէք ողորմելոյս կորչիլ:

—Ձեր փրկութիւնը խիստ դիւրին է, պատասխանեց իմամը նոյնպէս ուրախանալով, —առայժմ բաւական է միայն, որ դուք կարդաք «վրկայութեան հանգանակը» *) և ընդունէք իսլամը, իսկ վաղը մենք կը կատարենք թլիսատութեան խորհուրդը:

*) Վալմէյի շահագաթ:

— Ես պատրաստ եմ:

Իմամը սկսեց նրան բառ առ բառ թեկադրել «վկայութեան հանգանակի» արաբական խօսքերը և մէկիքը դպրոցական աշակերտի նման կըրկնում էր: Նրբ վերջացաւ, իմամը գրկեց նրան, և համբուրելով ասաց.

— Այժմ դուք իմ աչքի լոյսը և իմ եղբայրն էք և կարող էք նստել իմ մօտ, իմ օթոցի վրա:

Պիղծ «գաւուրը» մի քանի արաբական բառեր արտասանելով, դարձաւ մաքուր, անարատ մուսլիման: Այժմ իմամը ոչ միայն տալիս էր նրան իր չիբուխից ծխել, այլ պահեց իր մօտ, միասին ընթրիք վայելեցին, և գիշերը մնաց իմամի վրանում, պառկելով նրա հանդերձատնից բերված մաքուր անկողնի մէջ, որին ոչ մի «գաւուրի» ձեռք չէր դիպել: Այդ բոլոր գործողութիւնների ժամանակ դէրվիշը լուռ էր և մի առանձին արհամարհանքով նայում էր հայ մէկիքի վրա, դժուարանալով հաւատալ նրա անկեղծութեանը: Մէլիքին ճանաչում էր նա. տեսել էր նրան Պարսկաստանի մի հեռավոր քաղաքում... և գիտէր նրա բոլոր գաղափրները...

Ժ. Գ.

Առաւօտեան չալաբեանների ամբողջ ցեղի մէջ լուր տարածվեցաւ, թէ մէկիք Ֆրանսիայից ընդունել է մահմեդականութիւն. բոլորը հետաքրքրվում էին, բոլորը ուրախանում էին, որ հայերից

մի այդպիսի նշանաւոր մարդ մտաւ իսլամի գիրկը, և հաւատացած էին, որ շատերը կը հետեւեն նրա օրինակին: Այդ միջոցին Սիւրին դեռ նոր էլ զարթել, և փաթաթված մետաքսեայ նուրբ սփածանելիքի մէջ, նստած էր իր վրանում, գորգի վրա: Նա պատահած անցքից տեղեկութիւն չունէր: Աղախինը բերել նրա մօտ փոքրիկ երեխային, որի հետ խաղում էր զթոռ մայրը: Ֆաթիման—այդպէս էր երեխայի անունը—այս առաւօտ սովորել էր մի նոր հանաք իր աղախնից. երբ աղլուխը շարժում էին նրա առջև, նա բաւական ծաղրական երես չինելով, արտասանում էր. «առ... առ...»... Այդ բաւական զուարճացնում էր զժբախտ մօրը:

Այդ միջոցին տխուր, բաղմահող գէմքով մտաւ Սիւրին վրանը ներքինապետ Ահմէդը: Նրա սովորութիւնները այն աստիճան ծանօթ էին տիկնոջը, որ տեսնելով նրան վատ տրամադրութեան մէջ, իսկոյն հարցրեց:

— Ի՞նչ է պատահել:

— Շատ վատ բան, պատասխանեց ծերունին և սկսեց պատմել բոլորը ինչ որ լսել էր մէլիքի մասին:

Ժողովրդի ֆանտազիան արդէն տուել էր անցքին բոլորովին գերբնական կերպարանք: Պատմում էին, թէ մէկիքը հրեշտակների թեքերի վրա տարվել էր մինչև հինգերորդ երկինքը. այն-

տեղ խօսակցութիւն էր ունեցել Մուսամմէզի և Ալիի հետ. յետոյ ցոյց էին տուել նրան զրախտը ու դժոխքը, ասել էին՝ դրանցից որը կամենում էս ընտրիր: Մէլիքը ընտրել էր զրախտը: Յաճ գալով երկնքից, նա անմիջապէս գնացել էր իմամի մօտ: Խմամը նրա երեսի վրա լոյսի ճաճանչներ էր տեսել, և նրա առջևը ընկնելով երկրպագութիւն էր տուել: Յետոյ նրան նստացրել էր իր տեղը, և ինքը նստել էր նրանից ցած, ասելով, թէ «ինձ պէտք է քեզ սպասաւորութիւն անել, դու աւելի սուրբ ես, քան թէ ես»: Յետոյ իմամը հրամայել էր, որ ընթրիք տան, բայց ընթրիքը ուշացրել էին: Այդ ժամանակ մէլիքը «սալավաթ» *) էր քաշել երեսին, և նոյն վայրկեանում երկնքից ցած էր իջել մի սեղան լի ամեն տեսակ անուշահամ կերակուրներով և այլն:

— Այդ բոլորը հին հեքեաթներ են, ծերունիներ քինապետի խօսքը կտրեց Ալիին, — դու այն ասան, մէլիքը այժմ ձրտեղ է:

— Նա գտանվում է իմամի մօտ, պատասխանեց ծերունին խռովեալ ձայնով. — այսօր պիտի կատարվի նրա թլփատութեան խորհուրդը:

*) Սալավաթը մահմեդականների մօտ փոխարինում է այն արարողութեանը, որ քրիստոնեաները կատարում են երեսը խաչակնքելով:

և խանը ինքը յանձն է առել քրիվ այլ (կընքահայրի) պաշտօնը:

— Կը նշանակէ, մէլիքի մահմեդականութիւնը ընդունելը շատ մօտ է խանի սրտին:

— Տարակոյս չը կայ, այդ անհաւատները ոչինչ բանով այնքան չեն ուրախանում, որքան ուրախանում են, երբ տեսնում են, որ մի մարդ ընդունում է իրանց կրօնը:

Տիկինը ընկաւ դառն մտածութիւնների մէջ: Նրա քնքոյշ, կրօնական ջերմեւանդութեամբ լի սրտի վրա խիստ ծանր տպաւորութիւն դործեց ներքինապետի պատմութիւնը: Նա աղլուխը տարաւ աչքերին և խուլ կերպով սկսեց հեկեկալ: Աղլուխը տեսնելով, փոքրիկ Ֆաթիման կրկնեց իր սովորական երգը. «ան... ան...» Այս անգամ փոքրիկ աղջկայ թոթովմունքը մի առանձին ուրախութիւն չը պատճառեց մօրը. նա հրամայեց աղախնին դուրս տանել երեսիային:

— Ի՞նչ ես կարծում, Ահմէդ, հարցրեց նա, երբ փոքր ինչ հանգստացաւ իր վրդովմունքից, — այդ ձր սատանան մոլորեցրեց մէլիքին, ի՞նչ նպատակ կարող էր ունենալ նա իր վարմունքի մէջ:

— Նպատակը շատ պարզ է, տիկին, պատասխանեց ծերունին հանդարտութեամբ. — մէլիքը դիմել էր խանին և խնդրել նրանից Գենուադի, ու Բարգիւշատի կառավարութիւնը: Խանը մեր-

ժել էլ: Այժմ պէտք էր մէլիքին մի լաւ միջ-
նորդ, որ խանի վրա ազդէ և իր նպատակը կա-
տարել տայ: Նա գտաւ իմամին: Բայց այդ մո-
լեռանդ կրօնաւորին դրաւելու համար, պէտք էր
նրան մի բանով կաշտուել. և ոչինչ կաշառք այն-
քան թանկագին չէր կարող լինել նրա համար,
որպէս մահմեդականութիւն ընդունելը:—Բայց ես
լսեմք հիմ մի ուրիշ բան ևս:

—Ի՞նչ բան, հարցրեց անհամբերութեամբ տի-
կինը:

—Ասում են՝ մէլիքը խոստացել է իմամին
կնութեան տալ իր աղջիկը:

—Նա նոյնն է անում, ինչ որ արեց իմ ու-
րացող հայրը... խօսեց տիկինը դառնութեամբ.
—ախար նրա աղջիկը շատ փոքր է, դեռ ութն
տարեկան է:

—Բի՛շ է պատահում, որ զրանից աւելի փոքր
հասակով աղջիկներ առնվում են մահմեդական-
ների հարեմխանաներում: Զեղ յայտնի է, տի-
կին, որ այդ անհաւատները մի առանձին բարեպաշ-
տութիւն են համարում իրանց տունը լցնել բազ-
մաթիւ կնիկներով: Զարմանալին այն չէ, որ
աղջիկը փոքր է, զարմանալին այն է, որ
նրա հայրը տալիս է մի փոռած, մաշված ծերու-
կի, որ իր բոլոր յոյսը դրել է մի խաբեբայ դէր-
վիշի «մաջունների» վրա, որ նրանով վերադարձ-
նէ իր մանկութիւնը:

Տիկինը դարձեալ ընկաւ մտածութիւնների
մէջ: Հանգամանքները շատ վատ փոփոխութիւն
ստացան: Նթէ գործը կախված լինէր խանից
միայն, դուրսէ նա կարող կը լինէր ամեն կերպ
դարձնել: Բայց այժմ գործի մէջ խառնվեցաւ մի
հզօր անձն—իմամը, որին ամբողջ ցեղը պաշ-
տում էր, որից ինքը խանը դողում էր: Ի՞նչ
կարելի էր անել նրա հետ: Նա ինչ որ խնդրե-
լու լինէր խանից, վերջինս չէր կարող չը կա-
տարել: հակառակ դէպքում, մի խօսքով ամբողջ
ցեղը կապտամբացնէր նրա դէմ: Մահմեդա-
կանները աւելի կաշկանդված էին կրօնի և նա-
խապաշարմունքների կապանքներով, քան մար-
մնաւոր բռնապետի շղթաներով: Այս պատճա-
ռով կրօնի ներկայացուցչի խօսքը համեմատաբար
աւելի մեծ ազդեցութիւն ունէր նրանց վրա: Դրա
համար խանը ստիպված էր միշտ բարեկամու-
թիւն պահպանել իմամի հետ և կատարել նրա
ամենափոքր քմահաճութիւններն անգամ:

—Դու հաստատ դիտես, հարցրեց տիկինը, որ
խանը խոստացել է Գեհուազի և Բարգիւշատի
կառավարութիւնը մէլիքին յանձնել:

—Դիտեմ, պատասխանեց ներքինապետը, —չառ
էլ ցանկանար չէր կարող չը յանձնել, քանի որ մէջ
տեղում կայ իմամի նման մի միջնորդ: Ասում
են, այսօր մէլիքի թլփատութեան խորհուրդը

կատարվելուց յետոյ, խանը կը հագցնէ նրան իր նոր պաշտօնի խալաթը:

Յուսահատութեան թախիծը տիրեց տիկնոջ սրտին: Նա ոտնակոխ արեց իր հօր փառասիրութիւնը Գեհուազի և Բարգիւշատի իշխանութիւնը ձեռք բերելու մէջ, գլխաւորապէս այն մտքով, որ այդ երկու գաւառները մնալին իր սիրելի Ստեփաննոսին, որ նրանց օրինաւոր տէրն էր: Նա ցանկանում էր տեսնել այդ պատանի իշխանազնին կրկին տիրացած Շահումեանների թողած ժառանգութեանը, որ նոյն իսկ հայերի դաւաճանութեամբ յափշտակվեցաւ բռնակալի ձեռքով: Նա ցանկանում էր, որ բարի, ազնուամիտ Ստեփաննոսի հովանաւորութեան տակ պատսպարվէին հազարաւոր թշուառներ, որ մաշվում, այրվում, խորովվում էին տիրող անգթութիւնից: Բայց այդ բոլոր ցանկութիւնները ոչնչացան: Այժմ աւելի, քան թէ առաջ, դժուար էր իրագործել նրանց: Տիկնոջ կարծիքով, աւելի հեշտ էր մահմեդական բռնապետի ձեռքից կորզել այդ երկիրները, քան թէ մի ուրացող հայից, որ մահմեդականի ձեռքում գործիք դառնալով, պիտի աշխատէր ամեն տեսակ ցած, անազնիւ և նենգաւոր հնարներ գործ դնել մահմեդականի իշխանութիւնը հայ երկրների վրա պահպանելու համար: Այդ հանգամանքները ի նկատի առնելով, տիկնոյ մէկը Ֆրանգիւլի ու-

րացութիւնը աւելի վտանգաւոր էր համարում, քան թէ իր հօրն, մահաւանդ որ նա խոստացել էր իր աղջիկը իմամին կնութեան տալ:

— Այդ առաջին անգամը չէ, տիկնոյ, որ նա ընդունում է մահմեդականութիւնը, ասաց ներքինապետը ընդհատելով Սիւրիի լուռ մտածութիւնները. — մէկը Ֆրանգիւլը իր մանկութեան հասկում գերի ընկաւ և տարվեցաւ Պարսկաստանի Սպահան քաղաքը: Այնտեղ Սպահանի արքայազուհիներից մէկը որդեգրեց նրան, և մի իմաստուն մօլլայի յանձնելով, կրթեց արաբական և պարսկական լեզուների դպրութեան մէջ: Յետոյ իր աղջիկը նրան կնութեան տալով, նշանակեց նրան Սպահանի հայոց թաղի (Նոր Ջուղայի) բէգլէր — բէյի: Այնուհետեւ նա Սպահանի նահանգում հայոց Քաղազ և Քամարա գաւառների կառավարիչը դարձաւ: Այդ բոլոր պաշտօնների մէջ տանջելով, կողոպտելով ժողովրդին, մեծ հարստութիւն գիղեց: Սպահանի հայերը այն ժամանակ առևտրական ընդարձակ յարաբերութիւններ ունենալով Հնդկաստանի հետ, իրանց կաշառքներով առատ վարձատրում էին նրան: Բայց չարագործը հանդիստ չը մնաց: Նա դաւաճանեց մինչև անգամ այն պետութեանը, որի շնորհիւ այնքան բարձր աստիճանի էր հասել: Գաղտնի կերպով միանալով Լօռի և Բախտիարի կոչված վայրերի ցեղերի գլխաւոր-

ների հետ, նա պատրաստեց մի պարսափելի ապրտամբութիւն պարսից կռուավարութեան դէմ: Նրա նպատակն էր յիշեալ վայրենիների աջակցութեամբ Սպահանի նահանգի հայաբնակ գաւառները անկախ դարձնել պարսից պետութիւնից, որ ինքը կարողանայ ժառանգաբար իշխել: Բայց ապտամբութիւնը զսպկեցաւ և նա փախաւ, գնաց Հնդկաստան: Նրկար ժամանակ անյայտութեան մէջ մնալով, վերջապէս վերադարձաւ իր հայրենիքը և կրկին ընդունեց քրիստոնէութիւնը: Այստեղ, ի հարկէ, ոչ ոք չէր կարող գիտենալ, թէ ինչ էր կատարել նա հեռաւոր արևելքում, և ընդունեցին նրան որպէս մի մարդ, որին բաղդը յաջողացրել էր վերադառնալ գերութիւնից: Եւ նա ինքը իր անցեալի մասին պահում էր խորին ծածկամտութիւն:

— Իսկ դու ճրտեղից գիտես այդ բոլորը, հարցրեց տիկինը զարմանալով հետաքրքիր պատմութեան վրա:

— Ինձ հաղորդեց մի դէրվիշ, որ բնակվում է իմամի մօտ, նա ինքը սպահանցի է, և ականատես է եղել բոլոր անցքերին: Նյա շատ լաւ մարդ է, և ինչպէս երևում է, մէլիքի այժմեան վարմունքը նրան ևս տհաճութիւն է պատճառել:

— Նա նրա մասին լսել եմ, ասում են՝ լաւ բժիշկ է:

— Նա ամեն բան գիտէ, ինչ ասես, որ նա չը գիտենայ:

— Բայց մի փոքր խաբեբայ է:

— Նա էլ առաջ այդ կարծիքն ունէի նրա մասին, տիկին, մահաւանդ երբ տեսնում էի, որ անդադար գոհարներ է պահանջում իմամից նրա համար «մաջուն» շինելու, և մտածում էի, որ այդ թանդաղին իրեղէնները առաւելապէս իր գրպանի համար է: Բայց նա պարզ խոստովանվեցաւ ինձ, թէ «բժշկութիւնը պարսիկների մէջ պէտք է ծածկված լինի զերբնական քօղով, և այդ աւելի ներդրածում է նրանց երևակայութեան վրա: Հասարակ բանին նրանք նշանակութիւն չեն տալիս: Եթէ ես ասէի իմամին, թէ քո դարմանները պիտի պատրաստեմ այս և այն խոտից կամ արմատից, նա ոչնչի տեղ կընդունէր, բայց ալմաստը, մարգարիտը, եագուլթը և այլն, կարող են ազդել իմամի մնահաւատութեան վրա:— Առհասարակ, աւելացրեց ներքինապետը, — ես այդ մարդու մէջ գտնում եմ մի խորհրդաւոր գաղտնիք, որը նա ամենայն զգուշութեամբ թաղցնում է:

— Գէրվիշները միշտ այդպէս են լինում, պատասխանեց տիկինը անուշաղլիւ կերպով և կըրկին ընկաւ մտածութիւնների մէջ:

— Իսկ ես դերվիշի պատմութիւնից կամենում

եմ մի օգուտ քաղել, դուք ինչ խորհուրդ կը տաք, տիկին:

— Ի՞նչ օգուտ կարելի է քաղել:

— Ես կամենում եմ գնալ խանի և իմամի մօտ, յայտնել նրանց մէլիքի անցեալը, — յայտնել, թէ ինչ էր արել նա Սպահանի կողմերում, յայտնել նրա դաւաճանութիւնները պարսից կառավարութեան դէմ, յայտնել, որ նա մի վատ խաբերայ է, թէ նա այդ երկրորդ անգամն է, որ ընդունում է մահմեդականութիւն, դարձեալ խաբելու մտքով: Երբ խանը և իմամը կը գիտենան այդ բոլորը, նրան ոչ թէ Գենուազի ու Բարզիւշատի զաւառները կը յանձնեն, այլ գուցէ խեղդել կը տան:

— Բոլորովին հարկաւոր չէ այդ անել, պատասխանեց տիկինը հրամայական եղանակով. — Դու կամենում ես մատնութիւններին մատնութիւնով պատասխանել: Ես մէլիքի Սպահանի վարմունքի մէջ մի վատ բան չեմ տեսնում: Մանուկ հասակում, գերի ընկնելով պարսիկների ձեռքը, նրան ընդունել են տուել մահմեդականութիւնը, նա ինչով է մեղաւոր: Իսկ թէ նա, միանալով լօռիների և բախտիարիների հետ, կամեցել է այնտեղ հայկական ազատ գաւառներ ստեղծել, և այդ մտքով ապստամբութիւն է յարուցել պարսիկների դէմ, — այդ նպատակը ամեն համակրութեան արժանի է: Ո՞վ է իմանում,

գուցէ նրա այժմեան վարմունքի մէջ ևս մի այսպիսի նպատակ թաղնված լինի: Ես, իրան ասեմ քեզ, Ահմէդ, սկզբում սաստիկ վրդովեցայ, երբ լսեցի մէլիքի մահմեդականութիւնը ընդունելը. բայց դէրոյիչի պատմութիւնը այժմ փոքր ինչ հանգստացնում է ինձ: Ես չեմ կարծում, որ այստեսակ մարդիկ, որոնք երբեմն մտածել և գործել են հայ ժողովրդի ազատութեան համար, կարող են չար մարդիկ լինել: Նրանք չար են երեւում նրա համար միայն, որ նպատակին հասնելու մտքով գործ դրված միջոցների մէջ ընտրութիւն չեն անում: Ամեն միջոց նրանց համար սուրբ է, երբ հասցնում է նպատակին:

— Այսուամենայնիւ, պատասխանեց ծերունին, — եթէ մէլիքի դիտաւորութիւնները բոլորովին արդար ևս համարելու լինենք (որի մէջ ես կասկածում եմ) դարձեալ Ստեփաննոսը կը զրկվի Գեհուաղից: Մէլիքը ինքը տէր կը դառնայ, իսկ նա ոչինչ չի ստանայ, բոլորը կը կորցնէ:

— Այժմ դժուար է նախագուշակել, թէ վերջը ինչ կը լինի...

— Ես այդ զէպքում կարող եմ ինձ կատարեալ մարդարէ համարել, պատասխանեց պարզ ծերունին բարկացած ձայնով. — դուք, տիկին, չափազանց բարեմտութեամբ էք դատում, ուր հարկաւոր էր փոքր ինչ կասկածանքով վերաբերվել դէպի կտտարվող իրողութիւնը: Ես մասամբ հա-

մաձայն կը լինէի ձեզ հետ, եթէ մէլիքը իր փառասիրութիւնը դոհացնելու համար իր ութն տարեկան աղջիկը խոստացած չը լինէր փտած իմամին կնութեան տալ: Մի մարդ, որ ծախում է իր աղջիկը, նա կը ծախէ և իր հայրենիքը և իր ազգը: Ուրիշ օրինակներ որոնել պէտք է, բաւական է, որ դուք յիշէք ձեր հօր վարմունքը:

Տիկնոջ և ներքինապետի խօսակցութիւնը ընդհատեց մի խառնաձայն աղմուկ, որ լսելի եղաւ հեռուից: Հարեմխանայի բոլոր կնիկները, աղախինները դուրս թափվեցան իրանց չաղրներէից, մօտեցան սարայ-փէրդային, և գլուխները բարձրացնելով, սկսեցին նայել:

— Այդ ինչ աղմուկ է, հարցրեց, տիկինը անհանգիստ կերպով:

— Նրեի, անցնում է թափօրը, պատասխանեց ծերունին ներքին խռովութեամբ. — դուք չէք կամենայ նայել նրա վրա:

— Նա այդ զղուելի հանդէսը տեսնել չեմ ուզում... ասաց տիկինը և երեսը շուռ տուեց:

Ծերունին, նկատելով նրա արտասուքը, հեռացաւ, և թողեց նրան միայնակ հաշտվել իր սրտի ցաւերի հետ:

Հեռուից տեսնվում էր ահագին բաղմութիւն, որ իմամի չաղրների կողմից զիմում էր դէպի խանի չաղրները: Ամբոխը ոտքով էր դնում, մի-

այն մի մարդ փառաւոր կերպով նստած էր գեղեցիկ զարդարած նոսրի վրա, և բաղմութեան առաջը ընկած, ամեն կողմից երևում էր: Նա հաղած ունէր թանդաղին, ծիրանեղոյն վերարկու, նախած ոսկէ թելերով, որ փողփողում էր արեգակի ճառագայթների տակ: Գա նոր մահմեդականութիւն ընդունած մէլիք Ֆրանգիւլն էր, որ այժմ կոչվում էր Ալի բէկ: Նա աջ ձեռքով բռնած ունէր մի մերկացրած սուր, որ դրել էր ուսի վրա: Նոր կրօնի հետ նա ժառանգել էր նոր իրաւունք՝ սուր կրելու, որի գործածութիւնը Մուհամմէդը միացրել է իր աւանդած սրբազան պաշտամունքների հետ: Նրա առջևից դնում էին մի խումբ չաւուհներ, որ երգում էին կրօնական երգեր: Նրանցից մէկը տանում էր մի կանաչ զրօշակ, որի վրա նկարված էր չիաների խալիֆայի աջը: Թափօրը դանդաղ էր ընթանում: Ամեն քայլում ամբոխը կանգնեցնում էր նոր ռզղափառին, ոմանք համբուրում էին նրա ձեռքը, ոմանք նրա հագուստի փէշէրը: Անիկները իրանց հիւանդ երեխաներին դնում էին այն ճանապարհի վրա, որ կողմից պիտի անցնէր նա: Շատերը անց էին կենում նրա ձիու փորի տակով:

Այդ բոլորը կատարվում էր հոգեոր շնորքներ ընդունելու ակնկալութեամբ: Ամբողջ բաղմութեան մէջ տիրում էր մի տեսակ խորին, ջերմեւանդական զգացմունք, որ հասցնում էր անա-

հաւատութիւնը կրօնական վայրենի յափշտակութեան: Ճանապարհի վրա մի քանի տեղ մաշակներ կտրեցին, մի քանի տեղ կանգնեցին մաշութանքներ կատարելու համար: Անիկները ծածկում էին ճանապարհը կանաչ ոտներով: Թափօրը անցնում էր այդ կանաչապատ սփռոցի վրայով:

Խանի վրանը այսօր սովորականից աւելի զարդարած էր. նրա դանձարանից դուրս էին բերել ամենաընտիր արծաթեղէն անօթները: Այստեղ պիտի խմէին չուրախութեան չէրէթը: Գեղեցկադէմ մանկլաւիկները և սպասաւորների մի ահագին խումբ, չքեղ կերպով հագնված, սպասում էին պատուելի հիւրերին: Վրանում նստած էին խանը և իմամը միայն: Երբ թափօրը մօտեցաւ, նրանք երկուսն էլ դուրս եկան, կանգնեցին վրանի մուտքի մօտ ընդունելու նորընծայ մահմեդականին: Խանը իր ձեռքով բռնեց և ցած իջեցրեց նրան ձիուց: Խուռն բազմութիւնը շրջապատեց վրանի չորս կողմը: Իմամը կարգաց մի կարճ աղօթք, յետոյ մտան վրանը: Այնտեղ ընդունվեցան ցեղի նշանաւոր անձինքներից շատերը ուրախակից լինելու այն մեծ հանդիսին:

Այնօր չալարիանլիների ամբողջ ցեղը անցրեց ուրախութիւնով: Բայց մի մարդ, որ նրանց մէջ չէր զտնւում, դա էր Տաթևի մէլիք Գաւիթը: Նա առաւօտեան հէնց որ լսեց մէլիք Ֆրանգիւլի վարմունքը, իսկոյն հասկացաւ, թէ ինչ խաղ

խաղաց այդ մարդը իր գլխին, և սիրտը լի դառնութեամբ, սուսնց ոչ ոքի հետ տեսնվելու, նստեց իր ձին և գնաց դէպի Տաթև, համողված լինելով, որ այնուհետև Գենուաղի ու Բարդիւշատի վրա մտածելը յիմարութիւն կը լինէր իր կողմից...

Գ.Գ.

Նոյն աւուր գիշերային պահուն ծերունի ներքինապետը դարձեալ վրդովված կերպով մտաւ Սիւրիի վրանը: Նա պատմեց, որ խանից սաստիկ յանդիմանութիւն ստացաւ, թէ ինչու նա պահում է իր մօտ մի քրիստոնեայ պատանի, նրան տեղ է տուել իր վրանում, նրա հետ միասին ուտում է, խմում է, քանի որ այդ հակառակ է մահմեդականների սովորութիւններին, և մանաւանդ անվայել է մի ներքինապետի, որ անդադար կանանոցի հետ յարաբերութիւն ունի:

— Ես չեմ հասկանում, այստեղ ինչ մի անվայել բան կայ, հարցրեց Սիւրին, կտրելով ծերունու խօսքը:

— Անվայելն այն է, որ քրիստոնեան իմ վրանում ապրելով, կարող էր պղծել ինձ, իսկ ես նրանից պղծված լինելով, կարող էի միւս մահմեդականներին պղծել, պատասխանեց ծերունին, ինքն էլ ծիծաղելով իր խօսքերի վրա:

Խօսակցութիւնը այն տաթևացի պատանու մասին էր, որ խանի վրանի առջև կատարված

եղերական ողջակէզի ժամանակ, դուրս պրծաւ բոցերի միջից, ուր նրա ծնողները, ձեռքները դէպի երկինք բարձրացրած, «գթութիւն» աղաղակելով, այրվում էին: Ծերունի ներքինապետը վեր առեց իր մօտ չնչասպառ, կիսախանձ պատանուն և այն օրից դարմանում էր նրա մարմնի այրված տեղերը: Արտաքին վերքերի բժշկութեան արհեստը խիստ սովորական լինելով պարսիկների մօտ, ներքինապետը բաւական հմուտ էր նրա մէջ: Այս պատճառով պատանու առողջանալը շատ չուշացաւ: Բայց ծերունին հաւատացնում էր, որ նա դեռ շատ տկար է, և դեռ երկար ժամանակ պէտք է պառկած մնայ անկողնի մէջ, որովհետև նրանից պահանջում էին, որ պատանուն մահմեդականացնէ: Նա օրըստօրէ յետաձգում էր նրանց պահանջը, զանազան պատճառներ բերելով: Բայց մէլիք Ծրանդիւլի մահմեդականութիւն ընդունելու օրը, երբ պարսիկների մոլեռանդութիւնը աւելի գրգռված էր, այլ ևս ծերունուն հանգստութիւն չէին տալիս, մինչև անգամ խանից սաստիկ յանդիմանութիւն ստացաւ:

— Պէտք է նրան այստեղից հեռացնել, ասաց տիկինը տխուր ձայնով:

— Նա էլ այսպէս ևս մտածում, պատասխանեց ծերունին, — և այդ մասին բոլոր պատրաստութիւնները տեսնված են: Բայց մի բան ինձ սաստիկ դժուարութիւն է պատճառում:

— Ի՞նչ բան:

Ծերունին պատմեց, թէ պատանին բաւական վայելչահասակ և գեղեցկադէմ է, թէ նրան տեսնողները անդադար կրկնում էին, որ այդ պատանին շատ յարմարութիւններ ունի խանի մանկկլաւկների կարգը մտնելու և խանին սպասաւորութիւն անելու, քան զիւրումը դուքան վարելու: Այդ տեղեկութիւնները մինչև անգամ հասցրել են խանի ականջին: Նա միանգամ հրամայեց, թէ կամենում է տեսնել պատանուն, բայց ծերունին նրան խարեց, ասելով, թէ նա հիւանդ է, տեղիցը չարժիւն չէ կարողանում:

— Այժմ ես մտածում եմ, առաջ տարաւ ծերունին, — եթէ պատանուն փախցնելու լինեմ մեր կողմերը, կամ ուղարկելու լինեմ նրան Տաթև, անպատճառ կը գտնեն նրան և յետ կը բերեն, որովհետև այդ բոլոր տեղերը խանի ձեռքը կը հասնի: Հարկաւոր է նրան մի այնպիսի երկիր ուղարկել, որ խանի իշխանութիւնից դուրս լինի:

— Ուղարկեցէք Էջմիածին, այնտեղ օսմանցիներ են տիրում, պատասխանեց տիկինը:

— Այնտեղ նոյնպէս յարմար չէ, մի գաղանի ձեռքից աղատելով, միւս գաղանների ձեռքը պիտի գցեմ: Պէտք է մի քրիստոնեայ տէրութեան մէջ ուղարկել և վրաստանից աւելի յարմարը չը կայ:

— Այդ լաւ էք մտածել, բայց այնտեղ ում մօտ կուղարկէք: Նա այնքան մանուկ է, որ չէ կարելի առանց խնամակալի մի անծանօթ երկիր ուղարկել:

— Ես բոլոր պատրաստութիւնները կարգադրել եմ, տիկին, ծերունի Ահմէդը այնքան յիմար չէ, որ այդ բաները չը հասկանայ:

Եւ նա սկսեց պատմել իր կարգադրութիւնները, ասաց՝ երկու հաւատարիմ մարդիկ զիշերով կը տանեն պատանուն, կը հասցնեն Վրաստանի Մցխէթ քաղաքը: Այնտեղ ծերունի Ահմէդը ունի մի լաւ բարեկամ՝ հայազգի Օրբելեան իշխանին: Պատանուն կը յանձնեն նրան իր նստակի հետ, որի մէջ գրած է նրա հետ պատահած անցքերը, և խնդրում է առնել այդ անբախտ որբին իր խնամակալութեան ներքոյ: Ծերունին յոյս ունի, որ իշխանը ամենայն ուրախութեամբ կը կատարէ իր խնդիրքը, որովհետեւ անցեալ տարի, երբ նա գործով եկաւ իսանի մօտ, ծերունին նրան մեծ ծառայութիւններ արեց, և իշխանը ասաց նրան. «Երանի թէ, մի գործ պատահէր, ես կարողանայի քս պարտաւորութիւնից դուրս գալ»:

— Բայց ինչ կը պատահածնես դու, երբ պատանու անչայտանալուց յետոյ, քեզանից կը հարցնեն՝ ուր է նա:

— Ես մի քանի օր գաղտնի կը պահեմ նրա փախուստը, մինչև նա կանցնէ Վրաստանի հողը:

վրա, յետոյ պարզ կերպով կը յայտնեմ, թէ փախել է, բայց ես ինքս էլ չը գիտեմ, ուր է գնացել:

— Այդ բոլորը շատ լաւ է խորհված, ասաց տիկինը ուրախութեամբ, — բայց երբ մտադիր ես ճանապարհ դնել:

— Հէնց այս զիշեր. նա այժմ այնքան առողջ է, որ կարող է մի քանի օր ձիու վրա ճանապարհորդել:

— Ուրեմն ժամանակ կորցնել պէտք չէ, ասաց տիկինը շտապեցնելով, — բայց ես կը ցանկանայի այդ պատանուն տեսնել նախ քան նրա այստեղից հեռանալը:

Որովհետեւ կանանցը բերել նրան անկարելի էր, վճռեցին, կէս զիշերին, երբ բոլորը քնած կը լինեն, տիկինը գնայ ծերունու վրանը և այնտեղ տեսնէ պատանուն:

Գիշերը սաստիկ մութ էր: Ամպամած երկնքից մի աստղ անգամ չէր երևում: Անտառի ծառերը շարժվում էին մեղմ քամուց, տարածելով իրանց շուրջը մի խորհրդաւոր, կախարդական սոսափիւն: Հովիւների վրաններից հեռու, մի ձորի մէջ գիշերային լուծիւնը ընդհատվում էր խուլ հեկեկանքով. մի պատանի, գլուխը դրած փոքրիկ բլրակի վրա, լաց էր լինում: Արտասուքը հեղեղի նման թափվելով նրա աչքերից, թրջում էր հողը, որից կաղմված էր այդ բլրակը: Այստեղ թաղված էին դիակները այն թշուառների, որ

բռնութեան, հարստահարութեան երեսից հալած-
ված, իրանց անձները այրեցին խանի դատարա-
նի առջև: Ինքնակամ մահով նրանք բողոքեցին
տիրող անարդարութեան, անգթութեան դէմ: Ի-
րանք մեռան, բայց անարդարութիւնը մնաց...

Պատանին լաց էր լինում, և կարծես, նրա ա-
լելոծված կուրծքից դուրս էին թռչում այս հա-
ռաչանքները: «Թող վկայ լինի հայրենիքի այդ
սուրբ հողը, որ ծածկում է ձեր մարմինները,
թող վկայ լինեն այդ անտառի ծառերը, որ տա-
րածում են իրանց հովանին ձեր գերեզմանի վր-
ա, թող վկայ լինեն հայոց լեռները և նրանց
մէջ բնակվող բոլոր չար և բարի ոգիները, որոնք
սկսնաւոտես եղան ձեր տառնապանքին, վերջապէս
թող վկայ լինի այդ անգութ երկինքը, որ տե-
սաւ ձեզ կրակի բոցերի մէջ, որ հոտոտեց ձեր
այրվող մարմիններից բարձրացած ձենձերային
ծուխը և դարձեալ սառնասիրտ մնաց դէպի ան-
մեղ զոհերի տանջանքը...—ես երգվում եմ, երգ-
վում եմ հայ շինականի խրճթի օջախով, որ հան-
գած է բռնակալի ձեռքով, երգվում եմ հայ կը-
նոջ և հայ աղջկայ պատուով, որ բռնաբարված
է մահմեդականի կրքերով, երգվում եմ հայ երկ-
րագործի արօրով և քրտինքով, որոնց վաստակը
հարստահարվում է, երգվում եմ հայրենիքի սուրբ
յիշատակով, որ օտարի լծի տակ ճնշվում է,—
վերջապէս երգվում եմ այդ գերեզմանով, որ

ամբողջում է ձեր անմեղ մարմինները, ես պիտի
վրէժխնդիր լինեմ... պիտի վրէժխնդիր լինեմ չա-
րութեան, անարդարութեան և բռնութեան դէմ: Ե-
յս բօսկէից հանդիսաւոր ուխտ եմ դնում կըռ-
ւել և մինչև մահ կռուել հայրենիքի ազատու-
թեան համար: Այն օրը ձեր ոսկերքը կը հան-
գստանան այդ միջին գերեզմանի մէջ, երբ ազա-
տութեան շունչը խաղաղ, կենսաբեր ոգւով կը
փչէ նրա վրայով»...

Այդ խօսքերից և ոչ մէկը չարտասանեց պա-
տանին: Միայն նրա սիրտը անգիտակցաբար
լցված էր այդ զգացմունքներով: Հօր և մօր, աղ-
գականների և բարեկամների հոգիները նոյն
գերեզմանի խորքից ներշնչում էին նրա մէջ այդ
մտածութիւնները: Նա այնքան մանուկ չէր, որ
զգացած չը լինէր բռնակալ ձեռքի դառն հա-
րուածները: Նրա մարմնի վերքերը դեռ ոչ բո-
ւորովին բուժված էին, իսկ սիրտը լի էր վրէժ-
խնդրութեան դառնութեամբ:

Նա վերջին անգամ համբուրեց գերեզմանը և
վեր բարձրացաւ:

—Մնաս բարեաւ, սիրելի մայր,—մնաս բա-
րեաւ, սիրելի հայր,—մնացէք բարեաւ, սիրելի
բարեկամներ, ասաց նա և հեռացաւ:

Ներքինապետի վրանում Սիւրին վաղուց ըս-
պասում էր պատանուն: Ծերունի Ասմէղը շատ
անհանգիստ էր նրա բացակայութեան համար:

Այնքան օրեր պատանին ապրում էր նրա վրանում, խիստ սակաւ անգամ էր պատահել, որ նա մի ուրիշ տեղ գնացած լինէր։ Այժմ ուր պիտի գնացած լինէր։ Ոչ ոք չը գիտէր։ Ներքինապետի ծառաներից ոչ մէկը չէր տեսել նրան վրանից դուրս գալու ժամանակ։

Վրանի վարագոյրները իջեցրած էին։ Տիկինը միայնակ նստած էր այնտեղ, իսկ ծերունի ներքինապետը կանգնած էր նրա սպասում։ Նրկուսի մէջ ևս տիրում էր մի տեսակ լարված լուռութիւն։ Երկուսն էլ անհանգիստ էին այն մտքով, թէ ինչ եղաւ պատանին։ Հեռու, անտառի մէջ թէ ձիւները, թէ մարդիկը պատրաստ էին, որ նրան պիտի տանէին։ Գիշերը անցնում էր. պէտք էր շուտով ճանապարհ ընկնել, որ մինչև լուսանալը կարողանային բաւական հեռացած լինել խանի կացած տեղի սահմաններից։

— Ի՞նչ եղաւ, հարցրեց տիկինը անհամբերութեամբ.— ես կասկածում եմ, որ նրա հետ մի վտանգ պատահած լինի։

— Այստեղ ամեն բան կարող է պատահել, տիկին, պատասխանեց ծերունին շուարած կերպով.— այստեղ ծիտն էլ իր բոյնի մէջ ապահով չէ։

Լսելի եղաւ շան հաչելու ձայնը։ Ծերունին դուրս գնաց։ Մի քանի վայրկեանից յետոյ նա վերադարձաւ ուրախ դէմքով, իր հետ բերելով

պատանուն։ Բայց վերջինիս գունաթափ դէմքը չէր ցոյց տալիս որ և իցէ ուրախութիւն։ Խորին տխրութիւնը նկարված էր նրա խոշոր, սևորակ աչքերի մէջ։ Տիկինը տեսնելով գեղեցիկ, վայելչահասակ պատանուն, բոլորովին զմայլեցաւ. նրա քնքոյշ, սիրող սիրտը լցվեցաւ այն քաղցր զգացմունքով, որ տիրում է հարադատ քրոջ սրտին, երբ նա առաջին անգամ տեսնում է կարօտած եղբորը, երկար տարիների անջատումից յետոյ։— «Ո՛րքան սիրուն է, որքան մեծացել է իմ եղբայրը», ասում է նա և փաթաթվում է նրա պարանոցին։

Ջգացմունքի այդ տեսակ արտայայտութիւններ տեղի չունեցան։ Պատանին տիկնոջ ոչ եղբայրն էր և ոչ ազգականը, այլ մի որք, հայրն ու մայրը կորցրած տղայ, որ ինքն էլ մի բախտով ազատված էր նոյն կրակի բոցերից, որ այրեցին նրա ծնողներին։ Պատանու այդ վիճակը ազդում էր տիկնոջ մէջ ցաւակցութիւն, մաքուր սիրոյ հետ խառնված։

— Ի՞նչպէս է անունը, հարցրեց նա, դառնալով դէպի ներքինապետը։

— Դաւիթ ձեր ծառայ, պատասխանեց ծերունին։

— Դաւիթ, բացականչեց տիկինը խորին տհաճութեամբ, կարծես ափսոսելով, որ մի այդպի-

սի գեղեցիկ, անարատ պատանին կրում էր իր չարագործ հօր անունը:

Բայց մանկահասակ Դաւիթը մնացել էր բուրովին դարմացած, ամօթխածութիւնից չէր դիտէր ինչ անել, երբ նկատում էր՝ մի նաղելի, շքեղ կերպով հագնված կին նրա վրա ուշադրութիւն էր դարձնում: Այդ կինը, անտարակոյս, խանի հարեմներից մէկը պէտք է լինէր: Բայց միթէ պարսիկ կնոջ մէջ կարող էին լինել այն աստիճան քնքոյշ զգացմունքներ դէպի մի անբախտ հայ պատանի:—Այդպէս էր մտածում նա, երբ ծերունի ներքինագետը ասաց նրան, թէ տիկինը քրիստոնեայ է, և յայտնեց նրա ում աղջիկ լինելը:

Կարծես, մի սուր ցցեցին պատանու սրտի մէջ. նա լսեց այն մարդու անունը, որ իր հօր, իր մօր, իր ազգականների դահիճն էր, իսկ այդ նաղելի կինը—նրա աղջիկը: Տիկնոջ բոլոր արժանաւորութիւնները, որ այնքան յարգելի էին երևում նրա աչքում, իսկոյն կորցրին իրանց նշանակութիւնը: Պատանին այժմ նայում էր նրա վրա, որպէս մի թշնամու վրա, որին պատրաստ էր պատառոտել: Նա երեսը շուռ տուեց և կամենում էր դուրս գալ վրանից:

—Հասկանում եմ քո արդար վրդովմունքը, ազնիւ պատանի, ասաց տիկինը, նրա ձեռքից բռնելով.—բայց անբախտ աղջիկը ինչով է յան-

ցաւոր, որ քաւէ չարագործ հօր մեղքը... Նա հաւատում եմ Աստուծոյ արդարադատութեանը, և յոյս ունեմ, որ այդ բոլոր չարիքներին հատուցում կը լինի. նեղեալները կը վայելեն ազատութիւն, իսկ նեղիչները սոսկալի դատապարտութիւն...

—Ո՞ր աշխարհում, հարցրեց պատանին, դեռ ոչ բոլորովին հանգստացած լինելով իր վրդովմունքից:

—Այս աշխարհում, պատասխանեց տիկինը մարգարէուհու եղանակով.—դառնութեան բաժակը մինչև բերանը լցված է... մի կաթիլ ևս, —ահա նա կը թափվի...

—Հաւատում եմ ձեր գուշակութեանը, տիկին, պատասխանեց պատանին ոգևորութեամբ, և բռնելով նրա աջը, սեղմեց իր շրթունքի վրա:—Դուք կրկնում էք մի և նոյն խօսքերը, որ մի քանի րոպէ առաջ ես լսեցի իմ անբախտ ծնողների գերեզմանից: Այնտեղից մի ձայն նոյնպէս ասում էր, թէ «դառնութեան բաժակը լցված է»... Նա լսեցի կոչող ձայնը և ուխտեցի մինչև մահ կռուել անարդարութեան դէմ:

Նւ իրաւ, պատանուն այնպէս էր թւում, որ այդ խօսքերը նա առաջին անգամ չէր լսում. թէ նա լսեց այն ժամանակ, երբ ինքը հոգեկան դառն խռովութեան մէջ, ընկած ծնողների հողաճամբարանի վրա, տխուր և ցաւալի կերպով

արտասուք էր թափում: Այժմ նոյնը լսում էր բարեսիրտ կնոջ բերանից:

Ծերունի ներքինապետը ակնարկեց, թէ պատանին ուշանում է, թէ ժամանակ է ուղևորվելու: Բայց տիկինը բողբոջում էր յափշտակված էր նրա խօսքերով: «Ես ուխտեցի մինչև մահ կռուել անարդարութեան դէմ»... Ի՞նչն էր ներշնչել այդ վրէժխնդրական զգացմունքը նրա մանուկ սրտի մէջ, ծնողների ցաւալի մահը, թէ ընդհանուր ժողովրդի անբախտ դրութիւնը: Այդ միտքը սաստիկ հետաքրքրում էր վշտալի տիկնոջը: Նա ցանկանում էր խօսել, երկար խօսել վաղահաս ցաւերով տանջված այդ պատանու հետ, ցանկանում էր շօշափել նրա կոտրած սրտի բուրբոյ թագնոված վէրքերը, բայց ներքինապետը դարձեալ շտապեցրեց, թէ ժամանակը անցնում է, թէ պէտք է շուտով ճանապարհ դնել նրան:

— Քո ուխտը՝ կռուել անարդարութեան դէմ, ասաց տիկինը բռնելով պատանու ձեռքը, — պէտք է լինի ամեն մի հայ մարդու ուխտը, որ մտածում է հայրենիքի փրկութեան համար: Դու, գուցէ քո ծնողների ցաւալի վախճանից զերդված, ուխտեցիր վրէժխնդիր լինել բռնութեան դէմ, — բայց մտածիր, որ ամբողջ հայ ժողովուրդը այրվում է, խորովվում է, ոչնչանում է նոյն բոցերի մէջ, որ լափեցին քո անբախտ ծնողներին, նոյն բոցերի մէջ, որոնց միջից դու մի բա-

րի բախտով դուրս պրծար: Նոյն բոցերը թողեցին քո մարմնի վրա բռնութեան ձեռքի անջնջելի դրոշմը, ամեն անգամ, երբ կը նայես նրա վրա, յիշիր, որ դա քո ուխտադրութեան կնիքն է, յիշիր, որ դու չարաչար կը մեղանչես Աստուծոյ և քո ծնողաց հոգիների առջև, եթէ չը կատարես այն սուրբ խոստմունքը, որ ուխտեցիր նրանց գերեզմանի վրա:

Պատանին լռութեամբ լսում էր տիկնոջ խրատները, որպէս մի ուխտաւոր, որ խորին ջերմեռանդութեամբ լսում է քրմուհու պատգամները: Տիկինը յայտնեց, թէ զանազան տխուր հանգամանքներ ստիպում են առժամանակ հեռացնել նրան հայրենի երկրից, և ծերունի ներքինապետի հետ խորհելով, վճռվեցաւ նրան ուղարկել Վրաստան: Պատանին յանձնարարական նամակներ կը տանէ իր հետ և այնտեղ թէ խնամակալութիւն և թէ պաշտպանութիւն կը դառնէ մի հայազգի իշխանից, որը բարձր պաշտօն է վարում վրաց թագաւորի մօտ: Տիկինը խոստանում է միշտ և ամեն ժամանակ օգնել պատանուն, որը համարձակ կարող է դիմել իրան, եթէ որ և իցէ բանի մէջ պէտք կուսենայ:

— Առ այժմ, վերջացրեց նա իր խօսքը, — ևս իմ օրհնութեան հետ կարող եմ տալ քեզ այդ փոքրիկ քսակը, որը գուցէ հարկաւոր կը լինի քեզ քո պանդխտութեան մէջ:

— Ինձ բաւական է ձեր օրհնութիւնը միայն, պատասխանեց պատանին, հրաժարվելով ընդունել քսակը.— իմ ծերունի հայրը հոգացել է բոլորը, ինչ որ պէտք է իմ ճանապարհորդութեան համար:

Վերջին խօսքերով նա ակնարկում էր ծերունի ներքինապետի վրա, որին իր հայր էր կոչում, որի երախտիքը իր կեանքի պահպանութեան համար երբէք մոռանալ կարող չէր: Բայց տիկինը դարձեալ ստիպեց նրան ընդունել քսակը, որը չը մերժեց նա, համբուրելով իր բարերարի աջը:

Վրանի մէջ զբաղված լինելով, թէ տիկինը և թէ ներքինապետը չէին նկատել, որ դրսում եղանակը բոլորովին փոխվել էր: Երկինքը պատած էր սև ամպերով և սաստիկ քամին, որ ալեկոծում էր անտառի ծառերը, սպառնում էր սուկալի փոթորիկ: Անտառը որոտում էր ծառերի միմեանց զարկվելուց, լեռները թնդում էին, իսկ կայծակը երբեմն փայլատակում էր գիշերային մթութեան մէջ: Կարծես, աշխարհի վերջը հասել էր և տիեզերքը լցված էր ահռելի արհաւիրքով: Անձրև դեռ չը կար, միայն երբեմն խոշոր կաթիլներ, քամու սաստիկ հոսանքի հետ թռչելով, գնտակի նման զարկվում էին մարդու երեսին: Տիկինը, նկատելով եղանակի խստութիւնը, խորհուրդ տուեց ներքինապետին յետա-

ձգել պատանու փախուստը: Ծերունին համաձայնվեցաւ նրա հետ:

— Այս գիշեր ամենայրմար ժամանակն է, պատասխանեց պատանին մի առանձին վստահութեամբ, — ես սիրում եմ այսպիսի եղանակը: Չեմ կարող մնալ, պիտի գնամ:

— Ի՞նչ դեռ բաւական տկար ես, ասաց տիկինը կարեկցութեամբ, — փոթորիկի ժամանակ այդ լեռների վրա շատ ցուրտ է լինում, կարող ես մրսել, կարող ես կրկին հիւանդանալ:

— Կարող է ուրիշ վտանգներ ևս պատահել, աւելացրեց ծերունին, — եթէ անձրևը սաստկանալու լինի, ձորերի մէջ հեղեղներ կը բարձրանան:

Պատանին հաստատ մնալով իր որոշման վրա, պնդեց, թէ ոչինչ չէ կարող արգելել նրա աղետութիւնը, թէ նա ցանկանում է մի րոպէ առաջ դուրս գալ, հեռանալ այն մթնոլորտից, որի օդը նրան խեղդում է, ուր ամեն ինչ նրա սրտում ցաւ և կսկիծ է յարուցանում:

Սիւրբին հասկացաւ պատանու սրտի վշտերը, հասկացաւ, թէ ինչն է դուրս քշում նրան այդ երկրից, վճռեց չը հակառակել նրա ցանկութեան և ամեն ինչ թողնել Աստուծոյ կամքին:

— Զիաները, մարդիկը ռոտեղ են, հարցրեց նա ներքինապետից:

— Անտառում պահված են, պատասխանեց ծերունին:

— Պատրաստվեցէք պատանու ճանապարհ դընել, Ահմէդ, ինչ որ Աստուած կամեցել է, այն կը լինի, ասաց տիկինը խորին հաւատքով, — դուցէ այդ փոթորիկը Աստուած յարուց հէնց նրա համար, որ պարսիկները քաշվեն իրանց վրաններում, ճանապարհների վրա ոչ ոք չը մընայ, որ պատանու փախուստը աննկատելի լինի:

Ծերունի ներքինապետը մտաւ վրանի դադտնարանը, որ բաժանված էր վարագուրով, այնտեղից դուրս բերեց մի դոյզ ատրճանակ և մի թուր. վերջինը նա իր ձեռքով կապեց պատանու մէջքից, և դռնօրէնով նորընծայ ասպետին իր նոր կոչման մէջ, ասաց.

— Ես բացի այդ թուրից ուրիշ թանգազին բան չունեմ քեզ ընծայելու համար, Դաւիթ, — դա Սինեայ աշխարհի մի հզօր թագաւորի թուրն է, որ ես դուրս եմ բերել խանի դանձաւանից: Այդ թուրը, որ մի ժամանակ հայ թագաւորի հզօր ձեռքում պաշտպանում էր մեր հայրենիքը, թող այսուհետեւ յիշեցնէ քեզ նրա ցաւալի անկումը, թող այսուհետեւ ոգևորէ քեզ նրա վերականգնման համար գործել: Դու պէտք է բարձրացնես մեր հայրենիքի փառքը նրա կործանման փոշիներից և վերստին պէտք է կեանք և ազատութիւն պարգեւես մեր թշուառ աշխարհին: Ես այդ խօսքերը իմ գլխից չեմ խօսում, այլ Աստուած ինքը յայտնեց ինձ մի տեսիլքի մէջ:

Եւ ես հաւատում եմ քո ճակատադրին, դու էլ պիտի հաւատաս քո կոչմանը...

Լսելով այդ խօսքերը, պատանին կարծում էր թէ իր վրա ծիծաղում են, և ծերունին պատրաստ էր պատմել նրան իր տեսած երազի մանրամասնութիւնները, բայց տիկինը զգուշացրեց նրան, որ լռէ:

— Այդ հասակում տղայի հետ այդպիսի բաների վրա չեն խօսում, ասաց նա արարելէն լեզուով. — երբ ժամանակը կը գայ, նա ինքը կը հասկանայ բոլորը...

— Այժմ բարի ճանապարհ եմ մղվում քեզ, ասաց տիկինը պատանու ճակատը համբուրելով, — կրկնում եմ, որտեղ որ լինես, ամեն մի պէտքի, ամեն մի վտանգի ժամանակ կարող ես վճարահաճութեամբ դիմել ինձ, ես պատրաստ եմ ամեն մի հանգամանքում օգնել քեզ:

Պատանին խորին շնորհակալութեամբ համբուրեց տիկնոջ աջը և մի քանի կաթիլ արտասուք գլորվեցան նրա ձեռքի վրա: Նա մնաք բարեաւ ասաց և խօսքն դուրս եկաւ վրանից, գիշերային մթութեան մէջ ծածկելու իր դռն արտասուքը: Ծերունի ներքինապետը հետեց նրան:

Տիկինը մնաց վրանում միայնակ, տխուր և սաստիկ սրտաշարժ դրութեան մէջ: Կարծես նրա հարազատ եղբայրը դէպի օտարութիւն էր գնում, կարծես, նրանից մի ամենատիրելի բան պակ-

սում էր: Նա լուռ յափշտակութեան մէջ ծունր
դրեց վրանի յատակի վրա և նրա վշտերով լի
աչքերը դարձան դէպի արդարադատ երկինքը:
Ի՞նչ բանի համար էր աղօթում նա,—այդ միայն
Աստուած գիտէ: Բայց ջերմ արտասուքը առա-
տութեամբ թրջում էր նրա գունատ ժպի գէմքը,
և երկար նոյն դրութեան մէջ մրմնջում էր նա,
մինչև կայծակի վերջին փայլը լուսաւորեց վրա-
նի մէջին շրջակայքը, և հեռացող պատանու քայ-
լերի ձայնը ծածկվեցաւ որոտման սաստիկ դը-
ղրդոցի տակ:

Փոթորիկը աւելի սոսկալի կերպարանք ստա-
ցաւ....

Առաջին գրքի Վերջը



...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...

...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...

...the ... of the ...

...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...
...the ... of the ...

...the ... of the ...

ՀՀ Ազգային գրադարան



NL0378061

59.162